

Ապրիլ-Մայիս 2025

N 7-8 (1470-1471)

ԱՊՐԱԳԱ ԲԺԻՇԿ

ԵՐԵՎԱՆԻ ՄՄԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Այս համարում

Արհեստական բանականություն

Ապագայում վարակիչ կլինի հենց առողջությունը. ԱԲ հեռանկարները բժշկագիտության մեջ բացահայտում է պրոֆեսոր Կարինե Սարգսյանը	5
Արհեստական բանականությունը՝ կրթության մեջ	6-7
Իզաբել Աբգարյանը՝ արհեստական բանականության և պացիենտի իրավունքների շուրջ միջազգային քննարկման մասնակից	8
Արհեստական բանականությունն աջակցող գործիք է. պետք չէ վախենալ դրանից	9

Իրադարձություն

«Հերացի» ավագ դպրոցի 189 շրջանավարտի մուտքը նոր կյանք	10-11
«Հերացի» ավագ դպրոցում հայ-հունական նախագծի մեկնարկն է տրվել	12
Բժշկական կրթության որակի ապահովման հիմնահարցերը՝ համալսարանականների օրակարգում	13-15
Մաշկաբանության ոլորտի միջազգային համաժողով	16-17
Իմունականիսարգելումը՝ բժշկագիտության ամենամեծ ձեռքբերումներից	18-19
ԵՊԲՀ-ն ամենաարագ զարգացող բժշկական համալսարանն է հետխորհրդային տարածաշրջանում	20
Մայիսմեկյան ֆոտոշարք	21
Իտալացի պրոֆեսոր Ֆեդերիկո Վիջելանոն հյուրընկալվեց ԵՊԲՀ-ում	22-23
Պատրաստ է նոր գրադարանի նախագծի վերջնական տեսքը	24
Եվրոպական պատվաստման շաբաթը՝ բժշկականում	25

Գիտություն

«Նեյրոգիտության շաբաթ -2025». գիտության գնացքով ճանապարհորդությունը Երևանում	26-29
Brain Bee Armenia-ն բացառիկ հնարավորություն էր դպրոցականների համար՝ խորացնելու գիտելիքը նեյրոգիտության ոլորտում	30
Հետազոտական նախագիծ, որը կմիավորի առաջատար տեխնոլոգիաները և կրթական բաղադրիչը	31
Կոնֆերանս՝ նվիրված ԴՆԹ-ի օրվան	31
«Ստորին վերջույթի վնասվածքներ-2025» կոնֆերանսը	32-33
Կլինիկական բնագավառի վերջին մեկ տարվա աշխատանքը՝ գիտական խորհրդի նիստում	34-35
Հետբուհական կրթությունն ու կրթական մի շարք հարցեր քննարկվեցին գիտական խորհրդի նիստում	36-37

Կրթություն

Երկօրյա վարպետաց դաս	38
Դասախոսություն՝ «Հակամանրէային նոր աղբյուրների որոնում հակաբիոտիկակայությունության խնդիրը մեղմելու համար» թեմայով	39
Վերապատրաստման դասընթաց	39
Հետբուհական կրթական ծրագրերը՝ միջազգային չափանիշներին համապատասխան	40
Բժշկագիտության սրբնթաց զարգացումից քույրական գործն անմասն չէ	41
Վերապատրաստում Սալոնիկի Արիստոտելի համալսարանում	41
«Հետազոտության հիմունքներ» դասընթացը՝ պարտադիր առարկա ԵՊԲՀ-ում	42
Ալիսիա Դեմիրճյանը՝ հակամանրէային կայունության և վարակի հսկողության մասին	43
Միմֆերոպոլի բժշկական համալսարանի ամբիոնի վարիչը ԵՊԲՀ-ում	44
Մեր մասնագետը՝ Ultrasound for Gynecology միջազգային առցանց դասընթացի խոսնակ	45
UCLA-ը և ԵՊԲՀ-ն համատեղ կազմակերպել են բժշկական էթիկային նվիրված միջազգային առցանց համաժողով	45

Կլինիկական

«Հերացի» համալսարանական հիվանդանոց	46-49
«Մուրացան» համալսարանական հիվանդանոց	50-51
«Միքայելյան» համալսարանական հիվանդանոց	52-53
«հերացի» վերլուծական	
Էլեկտրոնային սարքերից կախվածության ազդեցությունը քնի որակի վրա	54
ՄԱՅԻՄԻ 8-ը՝ Ձվարանների քաղցկեղի դեմ պայքարի համաշխարհային օր	55
Երեխային ընդ տարիքից կարելի է թողնել մենակ. խորհուրդներ ծնողներին	56-57
Ամառային ճամփորդություններին ընդառաջ	58
Կարեվորելով կանխարգելիչ վնասվածքների կրճատումը	59
Ձեռքերի հիգիենայի կարեվորությունը՝ կանխարգելիչ միջոցառումների շարքում	59
Հարցազրույց	
«ԵՊԲՀ-ն մեր հետագա կյանքի հիմնասյունն էր». հնդիկ շրջանավարտները տարիներ անց Alma Mater են վերադառնում ընտանիքներով	60-61
Ուսանողի անկյուն	
Մասնագիտությունն ընտրել է՝ վստահելի մասնագետ դառնալու անխախտ որոշմամբ	62
Անիրական իրականացնելու մեծ ցանկությամբ է ապագա բժիշկն առաջնորդվում	63
Ապագա ուսանողի բժիշկը գիտակցում է՝ գիտելիքը կյանքեր է փրկելու	64-65
Մշակույթ	
ԵՊԲՀ դասախոսը՝ «Շառլ Ազնավուրը և Հայաստանը» գրքի հեղինակ	66
Ճանաչողական այց՝ Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան	66
Տիպաբանական խոսք	
Անուշավան Վահանի Ղազարյանի հիշատակին	67
For International students/ Статьи для иноязычного читателя	
68-79	

ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ
APAGA BZHISHK(FUTURE DOCTOR)
ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՄԵԴԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԹՈՐՈՍՅԱՆ
EDITOR- SEDA KH. TOROSYAN

COMPUTER DESIGNER: VARDUHI MELIKSEYAN
RESPONSIBLE FOR ENGLISH MATERIALS: ANNA DEMURCHYAN
LITERARY STAFF: MAYA KHACHATRYAN

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Երևանի Մլիթթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ:
Թերթը գրանցված է ՀՀ արդարադատության նախարարությունում: Գրանցման վկայական՝ N03U990254:
Հասցեն՝ Երևան 0025, Կորյունի փ. 2: Հեռ.՝ (010) 301 000 (Ներքին՝ 2-46): E-mail: info@ysmu.am: Ծավալը՝ 80: Տպաքանակը՝ 300 օրինակ: Ավճար:
Տպագրվում է «Մոնո պրինտ» հրատարակչությունում:

Նյութերի հեղինակներ՝ Տաթևիկ Գրիգորյան, Տաթևիկ Ղազարյան, Մարգարիտա Մլիթթարյան,
Արփիսեն Թովմասյան, Ինգա Մարտինյան: Լուսանկարները՝ Մարի Գալստյանի

ԱՐԴԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐ ՂԱՐԱՇՐՋԱՆԻ ՄԱԴՄԱՆԱԳԾԻՆ



Նախորդ համարում խոստացել էինք անդրադառնալ մի թեմայի, որը օրեցօր փոխում է մեր աշխարհը: Այս համարում ներկայացնում ենք հողվածաշար՝ նվիրված արհեստական բանականությանը՝ դրա սկզբունքներին, կիրառություններին և ազդեցությանը մեր կյանքի տարբեր ոլորտներում:

Արհեստական բանականությունը (ԱԲ) ոչ միայն տեխնոլոգիական առաջընթացի արդյունք է, այլ նաև նոր մտածողության ու հնարավորությունների դուռ, որը վերաբերում է կրթությանը, բժշկությանը, բիզնեսին, արվեստին ու նույնիսկ էթիկային:

Եկեք միասին բացահայտենք՝ ինչպե՞ս է աշխատում ԱԲ-ն, ի՞նչ խոստումներ ու ռիսկեր է այն բերում, և ինչպե՞ս կարող ենք ճիշտ կողմնորոշվել այս հզոր գործիքի աշխարհում:

$$d.r = f(x) = \frac{4}{x+1} = \frac{2}{1}x^k = \frac{1}{0}$$

ԱՊՍԳՆՈՒՄ ՎԱՐՍԿԻՉ ԿԼԻՆԻ ԴԵՆՑ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.

ԱԲ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ Է ՊՐՈՖԵՍՈՐ ԿԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԸ

ԵՊԲՀ պատվավոր պրոֆեսոր, շրջանավարտ, թվային բժշկության և արհեստական բանականության ամբիոնի վարիչ, Եվրոպայում ամենամեծ բիրոսանկի՝ Ավստրիայի Գրացի համալսարանի բիրոսանկի հիմնադիր տնօրեն, ԱՄՆ Կալիֆորնիայի Cedars-Sinai բժշկական համալսարանի օնկոբիրոսանկավորման գիտական տնօրեն Կարինե Սարգսյանը մեր առաջարկով անդրադարձել է թեմային՝ մանրամասնելով, թե ինչպես են թվայնացումը, մեքենայական ուսուցումը և արհեստական բանականությունը փոխում բժշկագիտությունը:

Նրա խոսքով՝ համակարգչային մոդելավորման (in silico modelling) միջոցով ստեղծվող թվային և մոլեկուլյար երկվորյակները նպաստում են ոչ վարակիչ հիվանդությունների ախտորոշման և կանխատեսման բարելավմանը:

«Թվային երկվորյակների օգնությամբ՝ ուղղակի նկարի տվյալների հիման վրա, մենք կարողանում ենք կանխատեսել՝ իմունոթերապիան կաշխատի թե ոչ: Այսօրվա մեր բիրոսանկերների ճշգրտությունն այս առումով լավագույն դեպքում կազմում է 80%: Իսկ եթե օգտագործում ենք արհեստական բանականությունը, մենք կարողանում ենք 99,9% հավանականությամբ կանխատեսումներ անել: Նույն ձևով կարողանում ենք կանխատեսել, թե ուղեղի և սրտի կաթվածների դեպքում որ ուղղությամբ բուժումն առավել արդյունավետ կլինի: Եթե պատկերացնենք, որ դեռ ախտորոշում չկա, բայց մոտ 6 ամիս առաջ գիտենք, որ տվյալ մարդը սրտի իշեմիկ հիվանդություն կարող է ունենալ, կսկսենք այդ մարդու հետ աշխատել, և նա դա չի ունենա: Հենց այդ պատճառով էլ հիվանդանոցները մեծ հաշվով ապագայում պետք չեն լինելու այլևս, որովհետև 90% դեպքերում աշխատելու է կանխատեսող բժշկությունը», - նշում է Կարինե Սարգսյանը:



Պրոֆեսորի փոխանցմամբ՝ հնարավոր է չափել 1 կաթիլ պլազմայի մեջ սպիտակուցների տատանումը: «Եվ այդ տատանման ալիքի բարձրության հաշվին մենք գիտենք՝ տվյալ մարդն առաջիկա 6 ամսվա ընթացքում ինչ-որ ոչ վարակիչ հիվանդություն կունենա, թե ոչ: Այդ տատանման տեսակի հաշվին նույնիսկ արդեն կարողանում ենք կանխատեսել՝ ինչ կարգի ոչ վարակիչ հիվանդություն կարող է ունենալ մարդը, օրինակ՝ ուռուցքի առկայությունը: Իսկ արդեն պացիենտների համար կարողանում ենք կանխատեսել ապրելու և հիվանդության կրկնվելու հավանականությունը:

Ընդամենը 1 կաթիլ արյուն և լազերային ֆիզիկա. սա բժշկության, ֆիզիկայի և ապագայի վերաբերյալ գիտության ունիկալ կոմբինացիա է, որտեղ որպես մեթոդ օգտագործում ենք մեքենայական ուսուցումն ու արհեստական բանականությունը», - բացատրում է բժիշկ-գիտնականը:

Ընդհանուր գործընթացը նա համեմատում է դպրոց գնացող աշակերտի ուսումնառության հետ. «Աշակերտը կատարում է համապատասխան տնային առաջադրանքը. որքան լավ կատարի այն, այնքան լավ գնահատական կստանա: Նույն ձևով մարդը պիտի հմանա իր առողջության «դասերը», և որքան լավ «սովորի», այնքան քիչ կհիվանդանա: Հիմնական միտքը հենց դա է»:

Արհեստական բանականությունն, ըստ նրա, կարելի է կիրառել նաև վարակիչ հիվանդությունների պարագայում: «Օրինակ՝ COVID-19-ի դեպքում ընդամենը մի քանի ամսվա ընթացքում մի քանի պատվաստանյութ ունեցանք: Դա հնարավոր եղավ, քանի որ ունեինք բավականին զարգացած տեխնոլոգիական բազա, որը հիմնականում համակարգչային մոդելավորման և մեքենայական ուսուցման շնորհիվ էր: Այդ պատվաստանյութերի օգնությամբ մենք կարողացանք լուծել շատ լուրջ առողջապահական խնդիր», - ընդգծում է պրոֆեսոր Սարգսյանը, ում նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ Թվային բժշկության և արհեստական բանականության ամբիոնը՝ Բժշկական գենետիկայի ամբիոնի հետ համատեղ, պատրաստվում է համակարգչային մոդելավորման միջոցով մեր երկրում ստեղծել թվային և մոլեկուլյար երկվորյակներ:

«Տարածաշրջանի ոչ մի երկրում բժշկագիտության այս ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ չեն կատարվում: Երկրի մասշտաբով սա նշանակում է անհատականացված մոտեցում բոլոր հիվանդություններին: Օրինակ՝ օնկոլոգիայի ոլորտում մեր երկրում կիրառվում են միջազգային չափանիշների վրա հիմնված արդյունավետ բուժման մեթոդներ, բայց անհատականացված մոտեցման դեպքում, օգտագործելով թվային և մոլեկուլյար երկվորյակներին, բուժման արդյունավետությունը կբարձրանա 50%-ով», - նշում է մասնագետը:

Ապագայում, նրա համոզմամբ, հնարավոր կդառնա բույսերի ընթացքում բուժել վերքերը, աճեցնել լիարժեք օրգաններ, ոսկորներ և բջիջներ, վերականգնել վնասված ուղեղը և շատ ավելին:

«Կանխել մարդկանց վերածվելը պացիենտների. կարծում եմ՝ սա է բժշկության ապագան: Մենք պարզապես առողջ կլինենք, իսկ վարակիչ կլինի հենց առողջությունը», - ամփոփում է ԵՊԲՀ պատվավոր պրոֆեսորը:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Համաշխարհային առողջապահության միտումների հաշվառմամբ բժշկական կրթության որակի ապահովման հիմնահարցերը» ԵՊԲՀ ուսումնամեթոդական XXI գիտաժողովում անդրադարձ կատարվեց արհեստական բանականությանը՝ բժշկական կրթության մեջ:

«Արհեստական բանականությունը բժշկական կրթության մեջ. հնարավորություններ և մարտահրավերներ» զեկույցը ներկայացրեց ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, բժշկական տեսական առարկաների ուսումնամեթոդական հանձնաժողովի նախագահ Արտեմ Գրիգորյանը:

Նրա խոսքով՝ արհեստական բանականությունը գործիք է, որին պետք է կրթել, և որը շատ արագ է սովորում: «Մեր քննարկումների արդյունքում հանգում ենք այն մտքին, որ ինչ տանք արհեստական բանականությանը, այն էլ կստանանք», - ասաց նա՝ շեշտելով, որ բոլորս կարիք ունենք տիրապետելու ԱԲ գործիքներին նույնքան, որքան տիրապետում ենք գրել-կարդալու, համակարգչով տեքստ հավաքելու, PubMed-ում փնտրելու և այլն:

Անդրադարձ կատարվեց բժշկական կրթության ոլորտում ԱԲ-ի օգտագործման ռիսկերին: Աշխատաժողովի մասնակիցները ևս մեկ անգամ փաստեցին, որ, բժշկական կրթության ոլորտում հնարավորություններին զուգահեռ կան վտանգներ՝ սուտ, կեղծիք, անբավարար գիտելիք, մտածողության նվազում, միակողմանի տեղեկատվություն, ախտորոշման անճշտություն, աշխատատեղերի քանակի նվազում և այլն:

«Մենք, որպես բժշկական կադրեր պատրաստողներ, պետք է այս խնդրին մոտենանք մասնագիտորեն: Եվ ինչպես մենք, այնպես էլ բժիշկների ապագա սերունդը ԱԲ-ի գործիքներին պետք է տիրապետի գրագետ ձևով», - հավելեց Արտեմ Գրիգորյանը:

Զարգացման և մարքեթինգի գծով պրոռեկտոր Խաչատուր Մարգարյանը խոսեց «ԱԲ-ի դասավանդումը «Բուժական գործ» ծրագրի շրջանակներում» թեմայով:

Նրա խոսքով՝ ԱԲ-ից պետք չէ վախենալ: «Այս գործիքը նծույգ է, որին պետք է սանձել, հատկապես բժշկական կրթության ոլորտում: Հակառակ դեպքում այն բազմաթիվ խնդիրներ կարող է առաջացնել», - նկատեց նա:

Ներկայացնելով ԱԲ-ի կիրառումը համաշխարհային ճանաչված բուհերում՝ Խաչատուր Մարգարյանը նշեց, որ այն բավականին բարձր ցուցանիշներ է գրանցել:

Համաձայն ԱՄՆ բժշկական ուսանողների շրջանում 2023 թվականին անցկացված հետազոտության՝ ChatGPT-ի (կամ նման ԱԲ-ի) մասին լսել է ուսանողների 96 %-ը, այն ուսումնական նպատակներով օգտագործել է 52%-ի կողմից, ոչ ճշգրիտ կամ կողմնակալ պատասխանների է բախվել 75%-ը: Հստակ էթիկական կանոնակարգման անհրաժեշտությանը կողմ են 92%-ը:

«Էթիկական և կարգավորող խնդիրներից են տվյալների գաղտնիությունն ու ապահովությունը, որակի հսկողությունն ու սխալի հավանականությունը, կողմնակալությունը և արդարության խնդիրները», - մանրամասնեց Մարգարյանը՝ հավելելով, որ նախքան ԱԲ-ի գործիքները կիրառելն անհրաժեշտ են վերջինիս ճիշտ հանձնարարականներ տալու հմտություններ:

Պրոռեկտորն ընդգծեց՝ ԱԲ-ի կիրառումը կրթական գործընթացում միտված է ոչ թե ինչ-որ մեկին փոխարինելու, այլ օգնելու՝ ավելի հեշտացնել աշխատանքը: Նա շեշտեց, որ ուշադրության կենտրոնում է



«Բուժական գործ» կրթական ծրագրում, ինչպես նաև մյուս կրթական ծրագրերի հավատարմագրման շրջանակում ԱԲ-ի վերաբերյալ մոդուլի ներդրումը, ԱԲ ամբիոնի հիմնումը՝ խորհուրդ տալով առաջնորդվել հետևյալ սկզբունքով՝ երբեք չվստահել ChatGPT-ին, ստուգել և քննադատաբար գնահատել պատասխանները:

Գաստրոէնտերոլոգիայի ամբիոնի ավագ դասախոս, ներքին հիվանդությունների ուսումնամեթոդական հանձնաժողովի նախագահ Մանիկ Գեմիլյանը ներկայացրեց «ԱԲ-ի կիրառումը գաստրոէնտերոլոգիայի դասավանդման մեջ. ԵՊԲՀ գաստրոէնտերոլոգիայի ամբիոնի և եվրոպական փորձի համադրում» զեկույցը:

«Շատ հաճախ ասում ենք, որ արհեստական բանականությունը մեր ապագան է, առանց դրա հնարավոր չի լինի, բայց դա ապագան չէ, արհեստական բանականությունն այստեղ է, մենք չենք նկատում, որ հենց մեր կողքին է, կիրառվում է դա: Եվրոպական գաստրոէնտերոլոգիայի միությունը հիմնականում հետբուհական կրթության հետ է աշխատում, կրթական կոմիտեն, որի աշխատանքներին նաև ես եմ մասնակցում, քննարկումներ է իրականացնում, թե ինչպես կարող են հետբուհական կրթության մեջ օգտագործել արհեստական բանականության գործիքները», -նշեց Մանիկ Գեմիլյանը՝ շեշտելով հիմնական կետերի մասին, որոնք կիրառվում են՝ մշակել բարդ տեքստերը և ներկայացնել հեշտ հիշվող քարտեր, առաջարկել անհատականացված կրթության պլան/ծրագիր, հետևել զարգացմանը, գնահատել, ինչպես նաև վարել վիրտուալ պացիենտ:

Նրա հավելմամբ՝ սխալներ ևս հնարավոր է լինեն՝ կախված նրանից, թե ինչ է տրվում արհեստական բանականությանը:

Հաջորդ զեկույցը, որը ներկայացրեց պաթոլոգիայի ամբիոնի վարիչ Փառանձեմ Խաչատրյանը, «ԱԲ-ի կիրառումը պաթոլոգիայում» թեմայով էր: Նա խոսեց, թե ինչ մեխանիզմներով է կիրառվում արհեստական բանականությունը պաթոլոգիայում և ինչ ճանապարհ է անցել պաթոլոգիան տարբեր ժամանակաշրջաններից մինչև մեր օրերը:

«Արհեստական բանականությունը պաթոլոգիայում կարելի է կիրառել տարբեր բնագավառներում. և՛ ուսուցման, և՛ ախտորոշման, բուժման, գիտության մեջ, բայց օրվա հրամայականը, իհարկե, կրթությունն է: Եթե անկեղծ լինենք՝ ես կարծում եմ, որ ամենակարևորը սեփական բանականությունն է և քննադատական վերլուծությունը: Ինչքան էլ մենք հավատանք Chatgpt-ին, որը թվում է ամենագոր, կարողանում է վերլուծել, այնուամենայնիվ, միշտ մարդկային բանական քննադատությունը պետք է առաջնայինը լինի», -եկույթի սկզբում նշեց պաթոլոգիայի ամբիոնի վարիչը՝ շեշտելով, որ արհեստական բանականությունը պետք է օգտագործել գրագետ և ճիշտ:

Մասնագիտական, հետաքրքիր զեկույցներից հետո բանախոսները մասնակցեցին պանելային քննարկմանը, որտեղ պատասխանեցին գործընկերներին հուզող բազմաթիվ հարցերի՝ փորձի, գիտելիքի, տեսակետների փոխանակման հարթակ ստեղծելով:



ԻԶԱԲԵԼ ԱԲԳԱՐՅԱՆԸ՝ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՑԻԵՆՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՋ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ



Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտորի խորհրդական, բուժաշխատողների մասնագիտական էթիկայի կանոնների խախտումները քննող էթիկայի հանձնաժողովի նախագահ Իզաբել Աբգարյանը մայիս ամսին Հելսինկիում մասնակցել է «Արհեստական բանականությունն առողջապահությունում և մարդու իրավունքները» թեմայով միջազգային կոնֆերանսին: Միջոցառումը կազմակերպվել էր Եվրոպայի խորհրդի կողմից՝ Ֆինլանդիայի առողջապահության և սոցիալական հարցերի նախարարության համագործակցությամբ:

Կոնֆերանսի շրջանակում Իզաբել Աբգարյանը հանդես է եկել «Արհեստական բանականության համակարգերը և պացիենտի ինքնավարությունը» թեմայով

պանելային քննարկմամբ՝ ներկայացնելով արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառման բարոյահոգեբանական մարտահրավերներն ու առողջապահական համակարգում դրանց արդյունավետ կիրառման հնարավորությունները:

Միջազգային համաժողովը հարթակ է ծառայել տարբեր երկրների փորձագետների, ոլորտային մասնագետների և քաղաքականության ձևավորողների միջև փորձի փոխանակման, ինչպես նաև արհեստական բանականության ձևավորած նոր իրականության պայմաններում մարդու և պացիենտի իրավունքների պաշտպանության համատեղ լուծումների ձևավորման համար:

Քանի որ արհեստական բանականության կիրառումը բուժման և խնամքի առօրյա գործընթացներում ավելանում է, առավել կարևոր է դառնում մտածել՝ ինչպես լավագույնս անցում կատարել ԱԲ-ի վրա հիմնված առողջապահական համակարգերի: Համաժողովի նպատակն էր քննարկել մարդու իրավունքների հետևյալ ասպեկտները՝ պացիենտի ինքնավարություն, մասնագիտական ստանդարտներ, առողջապահության համահավասար հասանելիություն, անձնական կյանքի գաղտնիություն և տեղեկատվություն ստանալու իրավունք:

ԱՐԿԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱԶԱԿՑՈՂ ԳՈՐԾԻՔ Է. ՊԵՏՔ ԶԷ ՎԱԽԵՆԱԼ ԴՐԱՆԻՑ

Բժշկագիտության ոլորտում արհեստական բանականության կիրառման առավելություններին «Արմա» հեռուստաընկերության հետ զրույցում վերջերս անդրադարձել էր ԵՊԲՀ զարգացման և մարքեթինգի գծով պրոռեկտոր Խաչատուր Մարգարյանը:



Արհեստական բանականությունը, նրա խոսքով, աջակցող գործիք է և պետք չէ վախենալ դրանից: Միևնույն ժամանակ պրոռեկտորը շեշտում է՝ փոխարինել որևէ մեկին այն չի կարող, որովհետև վերջնական որոշում կայացնողը մարդն է:

«Մոտավորապես նույն իրավիճակն է, եթե վախենայինք ներքին այրման շարժիչներից, երբ դրանք նոր առաջացան: Սա աջակցող գործիք է, և պետք չէ վախենալ, հակառակը, պետք է շատ ավելի խորը ներդնել այս գործիքները, որովհետև նրանք բացառապես օգնում են՝ նպաստելով օրինակ բուժման վրա ծախսվող ժամանակը»:

Արդեն 4-րդ տարին է, որ բժշկական համալսարանում կիրառվում է համապատասխան հարթակ, որը կոչվում է Doctor Lex: Այն օգնում է բժիշկներին և ապագա բժիշկներին կլինիկական որոշումներ կայացնելու հարցում և ինքնուրույն գեներացնում է մոտ 1 միլիոնից ավելի կլինիկական դեպք՝ հնարավորություն տալով շփվելու արհեստական բանականության հետ որպես ռեալ պացիենտ, տալով նրան հարցեր, լսելով գանգատները:

Խաչատուր Մարգարյանը խոսել է նաև ռոբոտիկ վիրաբուժության մասին, որը, նրա գնահատմամբ, բժշկին աջակցող գործիք է և ապագայում մեր երկրում ևս կիրառում կունենա:

Նշենք, որ ռոբոտային վիրաբուժությունը նվազագույն ինվազիվ վիրահատությունների տեսակ է, որը պացիենտների համար նշանակում է ավելի կարճ հոսպիտալացում և արագ վերականգնում: Այս վիրահատության ժամանակ ռոբոտային համակարգը օգտագործվում է վիրաբույժներին միջամտության ընթացքում օգնելու համար: Վիրաբույժը շարժում է այս ռոբոտ ձեռքը՝ օգտագործելով կարգավորիչներ և վիրահատարանի դիտման էկրան: Սովորական վիրաբուժական տեխնիկայի համեմատ այս ռոբոտային ձեռքի համակարգը վիրաբույժներին տալիս է ավելի լավ պատկերացում, ճարտարություն և ճշգրտություն, ինչը նաև հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ և արդյունավետ բուժման:

Հարցազրույցում պրոռեկտորն ընդգծել է նաև, որ արհեստական բանականությունը երբևէ չի կարող գեներացնել բժշկի՝ մասնագիտական փորձի հիման վրա ձևավորված կանխագացման ունակությունը:

Հիշեցնենք, որ բժշկական բուհում 2024թ. դեկտեմբերի վերջից ձևավորվել է արհեստական բանականության և թվային բժշկության ամբիոնը, որի ստեղծման կոնցեպտը Գիտական խորհրդի նիստում ներկայացվել էր հենց պրոռեկտոր Խաչատուր Մարգարյանի ղեկուցմամբ:

«ՀԵՐԱՑԻ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 189 ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄՈՒՏՔԸ ՆՈՐ ԿՅԱՆՔ



ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոցի 189 շրջանավարտի համար հնչեց հրաժեշտի վերջին զանգը՝ նրանց ճանապարհելով նոր ու պատասխանատու կյանք:

Խորհրդանշական միջոցառումը մեկնարկեց դպրոցի բակում, որտեղ աշակերտները ներկաների համար պատրաստել էին հետաքրքիր պարային համարներ: Ավարտական հագեցած միջոցառումը շարունակվեց դահլիճում. գեղեցիկ երաժշտական կատարումները կրկնակի տոն դարձրին այս կարևոր օրը:

«Միրելի հերացիականներ, ուսուցիչներ, շրջանավարտներ, այսօր բոլորիս համար ոչ միայն հիշարժան, այլև պատասխանատու պահ է: Այսպիսի թևավոր խոսք կա՝ կյանքը մեծ թատրոն է և ներկայացումները, դերասանները, ռեժիսորները, անգամ ունկնդիրները հենց մենք ենք, մենք ենք ընտրում ներկայացումը, գլխավոր դերակատարներին, խաղում այն: Հնչած ավարտական զանգը, որը նշանակում է՝ սկսվեց մեծ կյանք՝ բոլոր իրադարձությունների համար, որոնց պատասխանատվությունն արդեն ձերն է: Արժանի եղեք ձեր ծնողներին, ուսուցիչներին: Ես ուզում եմ համալսարանի անունից, որը հարյուր տարի շարունակ կերտել է մեծ առողջացողների, ասել՝ կուզեի, որ ձեզանից յուրաքանչյուրն, այս պահը չթերագնահատելով, իր այս ուրախությունը պատասխանատվություն դարձնի: Ես ուզում եմ, որ ձեր պատասխանատվությունը լինի ժպտերես. ժպիտը զենք է», - շրջանավարտներին դիմելով՝ ասաց ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը՝ հատուկ շնորհակալություն հայտնելով դպրոցի տնօրենին, ուսուցիչներին, որոնք իրենց կյանքը նվիրել են աշակերտներին և այսօր կարողացան ևս մեկ սերունդ ճանապարհել դեպի ապագա:

Բուհի ղեկավարի խոսքով՝ երկարատև հիմնանորոգման աշխատանքներից հետո դպրոցի բացմանը բժշկական բուհում երկար են սպասել. «Մի քանի տարի ընթացող շինարարության արդյունքում այժմ ունենք միջազգային, ժամանակակից չափանիշներին համապատասխան կրթագիտական հաստատություն, որտեղ ապահովված են արդյունավետ կրթական գործընթացի իրականացման բոլոր հնարավորությունները»:

ԵՊԲՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի տնօրեն, ինվազիվ-սրտաբան Միքայել Ադամյանը ևս շնորհավանքների ջերմ խոսքեր հղեց շրջանավարտներին, որոնց թվում էր նաև իր դուստրը:

«Հարգելի ուսուցիչներ, մենք խոնարհվում ենք ձեր առաջ, ձեր կատարած աշխատանքի համար շնորհակալություն հայտնում: Պարոն Մուրադյան, ռեկտորատի հարգելի անդամներ, ուրախ եմ, որ «Վերջին զանգը» տեղի է ունենում հենց այս շենքում: Բարի երթ բոլորին», - նշեց նա:



Միջոցառումն ավարտվեց ժողովրդական պարերով, շրջանավարտների ավանդական վայրով՝ միախառնված ժպիտներով ու ջերմ հայացքներով:

Հավելենք, որ ավարտողների զգալի մասը՝ շուրջ 70 տոկոսը, ԵՊԲՀ դիմորդ է՝ ապագա բժիշկ: Նրանք, ավարտելով կենսաքիմիական հոսքը, բարեհաջող հանձնելով ընդունելության քննությունները՝ իրենց ուսումնասիրությունը կշարունակեն բժշկական կադրերի մեկդարյա դարբնոցի ուսանողական նստարանին՝ նպաստելով հայրենի բժշկագիտության զարգացման գործին:



«ՀԵՐԱՑԻ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԵԿՆԱՐԿՆ Է ՏՐՎԵԼ



ՀՀ ԿԳՄՄ նախարարության կողմից կազմակերպված Մայրենի լեզվի միջազգային օրվան նվիրված նախագծային ծրագրերի շրջանակում ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոցը համագործակցել է Երևանի «Պոնտի» հունական համայնքի հետ:

Ծրագրի շրջանակում հունական համայնքի երիտասարդները և «Հերացի» ավագ դպրոցի աշակերտները հնարավորություն կունենան ծանոթանալու երկու երկրների մշակույթին, ժողովրդական ավանդություններին և ճարտարապետությանը, կրթերցման հույն առակագիր Եզոպոսի առակները՝ հունարեն, հայերեն և ռուսերեն:

«Հերացի» ավագ դպրոցում մեկնարկեց ծրագրի առաջին փուլը, որին ներկա էին Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Խրիստոս Սոֆիանուպուլոսը, ԵՊԲՀ միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Երվանդ Սահակյանը:

«Հայ և հույն ժողովուրդների բարեկամությունը հազարամյակների պատմություն ունի: Աշխարհում ամեն ինչ սկսվում է դպրոցից, դպրոցում է ձևավորվում մարդու կերպարը: Ուրախ եմ, որ դեսպանության աջակցությամբ մենք կմշակենք նախագծեր հայ և հույն դպրոցականների շփումների համար: Կարևորում եմ նաև լեզվի իմացությունը, կարծում եմ, որ այս դպրոցում կկազմակերպվի խմբակ, որտեղ երեխաները կսովորեն նաև հունարեն: Բժշկական համալսարանում 3 ուսանող ունենք Հունաստանից: Քանի որ այս դպրոցը ևս պատկանում է բժշկական համալսարանին՝ ցանկանում ենք, որպեսզի միջազգային միջավայր լինի նաև այստեղ: Փաստորեն այս միջավայրը ձևավորում ենք այսօր»,-ասաց պրոռեկտորը՝ հաջողություն մաղթելով նոր նախագծին:

Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպանը ևս կարևորելով սկսված համագործակցությունը՝ նշեց. «Այո, հենց դպրոցից է սկսվում ամեն ինչ և դպրոցում պետք է երեխաները իմանան հայ և հույն ժողովուրդների բարեկամության մասին և շարունակեն այդ ընկերությունը: Մեկ անգամ ևս ուզում եմ նշել Երևանում հունական համայնքի կարևորությունը, ՀՀ կառավարության կողմից ազգային փոքրամասնություններին տրվող աջակցությունը և մեր լեզվի պահպանումը Հայաստանում»:

«Հերացի» ավագ դպրոցի տնօրեն Նարինե Սարգսյանը ներկայացրեց ծրագրի մանրամասներն ու հետագա անելիքները:

«Ուրախ եմ, որ մեր դպրոցը նախագծային աշխատանքների շրջանակում համագործակցում է Պոնտի հունական համայնքի հետ: Առաջին փուլում նախատեսված է ուսումնասիրել միմյանց մշակույթը: Նախագծի հաջորդ փուլում կկազմակերպվի առակների ընթերցում, նկարչության վարպետաց դաս և մրցույթ»,-ասաց նա:

Հետագայում նախատեսվում է ցուցահանդեսի կազմակերպում, և եռալեզու գրքի հրատարակում, ուր տեղ կգտնեն ոչ միայն աշակերտների նկարները և առակները, այլև գրքի ստեղծման պատմությունն՝ իր ֆոտոլուսանկարներով, կկազմակերպվի գրքի շտրիանդես:

Ելույթներից հետո հերացիականները հանդես եկան երաժշտական կատարումներով՝ լավ տրամադրություն ապահովելով ներկաների համար:

ԲԺՇԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

«Համաշխարհային առողջապահության միտումների հաշվառմամբ բժշկական կրթության որակի ապահովման հիմնահարցերը» ԵՊԲՀ ուսումնասնաթողական XXI գիտաժողովը մայիսի 21-ին համախմբել էր բուհի պրոֆեսորադասախոսական կազմին:

ԵՊԲՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լարիսա Ավետիսյանի փոխանցմամբ՝ գիտաժողովի անվանումն արդեն վկայում է, որ համաշխարհային առողջապահության մարտահրավերներին ընդառաջ ուսումնական պրոցեսի որակի ապահովման հիմնախնդիրներն օրակարգում են:

«Ասելիքը մեծ է, որովհետև նման գիտաժողովներ ամեն տարի չեն կազմակերպվում, այլ՝ երբ կա անհրաժեշտություն, իսկ ասելիքն այսօր ավելի քան արդիական է այն պարզ պատճառով, որ համաշխարհային առողջապահության տենդենցները սրընթաց են զարգանում և ուսումնական պրոցեսը պետք է զուգընթաց ընթանա դրանց, որպեսզի մենք կարողանանք աշխատաշուկա ներկայացնել այդ օրվա պահանջներին համապատասխան բժիշկների», - ընդգծեց պրոռեկտորը՝ հավելելով, որ այս առումով հագեցած ասելիքը պայմանավորված է նրանով, որ ընդամենը մեկ տարի առաջ ԵՊԲՀ ամենամեծ կրթական ծրագիրը՝ «Բուժական գործը» ստացավ միջազգային հավատարմագրում Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի կողմից՝ 7 տարի ժամկետով և դա արդյունք էր այն մեծ աշխատանքի, որը վերջին տասնամյակներում կատարվել է բժշկական համալսարանում՝ հատկապես ուսուցման գործընթացի քաղաքականության, մեթոդաբանության, կիրառվող գործիքների արմատական փոփոխության շնորհիվ:

«Ըստ իս՝ ամենամեծ արմատական փոփոխությունն այն էր, որ այլևս բժշկական համալսարանում կրթությունն իրականացվում է մոդուլային ձևաչափով, որը նշանակում է վերջնարդյունքների ուսուցանում ոչ թե մեկ առարկայի շրջանակում, այլ մի քանի. երկու, երեք, երբեմն չորս մոդուլի մեջ մտնող, որն օգնում է ուսանողին տվյալ վերջնարդյունքն առավել լավ հասկանալ: Եվ արդեն մի քանի տարի է մենք դասընթացները վարում ենք այդ մոդուլային ձևաչափով և այսօր արդյունավետության գնահատականներն ավելի քան բարձրացել են և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցների կողմից», - մանրամասնեց պրոֆեսոր Ավետիսյանը՝ շեշտելով, որ գիտաժողովը նվիրված է առկա խնդիրներին և դրանց լուծման ճանապարհներին, փորձի փոխանակմանը:

Գիտաժողովի շրջանակում անդրադարձ կատարվեց ոչ միայն արհեստական բանականությանը, այլև այլ նորարարական գործիքների, որոնք կիրառվում են կրթության մեջ:

«Բժշկության որոշ ճյուղերում այն բավականին լուրջ ներդրվել է, և մենք խոսելու ենք այդ գործիքի կիրառման մասին՝ կրթության դաշտում: Այս առումով մենք բավականին լավ, հետաքրքիր փորձ ունենք, որովհետև վերջին երեք տարում աշխատել ենք տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մեր գործընկերների հետ և ունենք մշակված եռալեզու ծրագիր, որը հնարավորություն է տալիս ուսանողներին, անընդմեջ, առանց սահմանափակման օգտվել այդ ծրագրից և օրվա ցանկացած ժամին, ցանկացած վայրից մտնել և ուսուցանվել կլինիկական լուրջ դեպքերի միջոցով, որոնք վերցված են համաշխարհային գիտական ամսագրերից, մոտավորապես մինչև մեկ միլիոն դեպքի մասին է խոսքը», - նկատեց պրոռեկտոր Ավետիսյանը՝ տեղեկացնելով, որ այժմ իրենք աշխատում են այդ ծրագրի կատարելագործման ուղղությամբ՝ առայժմ այն օգտագործելով կլինիկական առարկաների ուսումնասիրման համար, սակայն առաջարկ կա այն կիրառելու նաև տեսական բժշկության մեջ:



Բազմաբովանդակ ողջույնի խոսքի համար շնորհակալություն հայտնելով գիտա-
ժողովը նախագահում էր Բազմաֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ Արտեմ Գրիգորյա-
նը՝ կարևորելով միմյանց ակտիվ հարցադրումներ հղելը:

Ուսումնամեթոդական վարչության կրթական ծրագրերի բաժնի պետ, ֆարմակո-
լոգիայի ամբիոնի դոցենտ Արամ Բակյովի «Բարձրագույն բժշկական կրթության
համակարգում գնահատումը որպես ուսումնական գործընթացի կարևոր բաղադ-
րիչ. գնահատման համակարգի էվոլյուցիան ԵՊԲՀ-ում» ելույթով տրվեց զեկույցնե-
րի մեկնարկը:

«Հարգելի գործընկերներ, առողջապահական և կրթության միջազգային շուկա-
յում մրցակցությունը կտրուկ սրվել է: Այսօրվա դրությամբ համաշխարհային շրջա-
նառությունը՝ ֆինանսական առումով կազմում է ավելի քան 118 միլիարդ ԱՄՆ
դոլար, մոտակա տասը տարվա կտրվածքով ակնկալվում է շուկայի կրկնապատ-
կում: Առավել դինամիկ և արագ զարգացող շուկան է Հյուսիսային Ամերիկան,
ինչը պարտավորում է համաշխարհային մրցակցություն ուսումնամեթոդական և
կազմակերպչական տարատեսակ լավարկումներ», - ասաց Արամ Բակյովը՝ հան-
գամանալից անդրադառնալով կրթական մի շարք արդի հարցերի:

Ներկայացնելով ԵՊԲՀ ուսանողների գնահատման համակարգի էվոլյուցիան
2006-ից 2016թթ.-ին՝ նա նկատեց, որ ներդրվել է բազմակի ընտրությամբ հարցերով
թեստային ստուգումը, կարևորվել է արդար և թափանցիկ գնահատումը՝ ռոտացիոն
համակարգի ներդրման պահանջով, 2012-ից համակարգչային թեստավորումը բու-
հական թեստավորման կենտրոնում է:

«Ֆարմակոլոգիա» առարկայի դասավանդ-
ման, ուսումնառության և գիտելիքի գնա-
հատման բազմաբաղադրիչ համակարգը Եր-
ևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարանում» թեման հնչեց
ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ Մարինե
Բալասանյանի մեկնաբանությամբ:

«Ֆարմակոլոգիայի ամբիոնում բազմաբա-
ղադրիչ համակարգը ներդրվել է 2018 թվա-
կանին՝ առաջնորդելով մեր համալսարանի
ռազմավարությանը: Այն նպատակ ունի զար-
գացնել դասավանդման, ուսումնառության և
գիտելիքի գնահատման այնպիսի մեթոդներ,
որոնք համահունչ են ԵՊԲՀ-ի կողմից իրակա-
նացվող ուսումնական, կրթական ծրագրերին,
որտեղ մասնագիտական կոնտեքստով կար-
ևորվում է հետազոտության հմտություններն
ու կարողությունները», - ասաց Բալասանյանը՝
ավելացնելով, որ նման մոտեցումը հիմնված
է այն փաստի վրա, որ բազային բժշկական
կրթությունն այսօր գտնվում է համաշխարհա-

յին գլոբալիզացիայի, տեխնիկական առաջընթացի և արհեստական բանականությ-
ան միջև, և ժամանակակից բժշկագիտությունը պահանջում է այնպիսի կադրերի,
մասնագետների պատրաստում, որոնք զինված կլինեն տեսական գիտելիքով և
կկարողանան ճիշտ կողմնորոշվել ահռելի մեծ տեղեկատվական դաշտում՝ ճիշտ
կիրառելով իրենց առջև դրված խնդիրները, հետազոտական վերլուծությունները՝
համապարփակ դրանք ներկայացնելու համար:

Տեսական և կլինիկական առարկաների խաչմերուկում գտնվող ֆարմակոլոգիա-
յի ամբիոնում վերոնշյալ գործոնները խթանեցին բազմաբաղադրիչ համակարգի
ներդրումը:

Ընդհանուր բժշկության ֆակուլտետի դեկան, նորմալ անատոմիայի ամբիոնի վա-
րիչ Կարինե Բարոյանը հանդես եկավ «ԵՊԲՀ-ի՝ մարդու անատոմիայի ամբիոնում
կիրառվող բազմաբաղադրիչ գնահատումը որպես գիտելիքի ստուգման արդիա-
կան մոդել» թեմայով զեկույցով:

«Ժամանակակից պայմաններում աճել են տեղեկատվության ծավալը և
մասնագետի որակին վերաբերող պահանջները, ուստի գնահատման համար նոր
համակարգում պետք է հին մեթոդից հրաժարվել և անցնել նոր մեթոդի, որը կգնա-
հատի ոչ միայն տեսական գիտելիքը, դրա տարողությունը, այլև կբացահայտի ու-
սանողի նոր հնարավորությունները՝ մտածելու, տրամաբանելու, պատճառահետ-
ևանքային կապ գտնելու և դրանց հիման վրա նյութը վերլուծելու և, ինչու չէ, նաև



ինտեգրացիան ավելի բարձր կուրսերում ապահովելու նպատակով: Հետևաբար մենք այսօր քննարկելու ենք գնահատման համակարգի վերաբերյալ մեթոդները, փորձի փոխանակում ենք անելու տարբեր ամբիոնների միջև», - նշեց դոցենտ Բարոյանը: Նրա խոսքով՝ շուրջ 4-5 տարի է համակարգում գործում են գնահատման տարբեր համակարգեր և այս ամենը տանում է նրան, որ համակարգը լինի բազմադադրիչ, կազմված լինի տարբեր կոմպոնենտներից, որոնք ոչ միայն ստուգման գործընթացի օբյեկտիվությունը կբարձրացնեն, այլև հնարավորություն կտան, համադրելով տարբեր մեթոդներ, չափորոշիչներ, ստեղծելու մի նոր գնահատման համակարգ, որը կխթանի ուսումնական պրոցեսը:

Մենք այս ուղղությամբ կատարել ենք բազմաձևավալ աշխատանքներ: Քանի որ ես ինքս ամբիոնի վարիչ եմ և կիրառում եմ բոլոր մեթոդները, ունեմ հավաստիք, որ այսօր նոր մեթոդներ ևս կվերցնեն իմ գործընկերներից, որպեսզի ավելի բազմազան դարձնեն և՛ ուսուցման, և՛ գնահատման պրոցեսը: Սա շատ մեծ փորձի փոխանակում է», - ընդգծելով գիտաժողովի կարևորությունը», - ասաց ընդհանուր բժշկության ֆակուլտետի ղեկանը:

Հաջորդիվ՝ կարևոր, մասնագիտական թեմաների անդրադարձան գիտաժողովի մյուս մասնակիցները:

«ԵՊԲՀ ընդհանուր բժշկության ֆակուլտետի 4-րդ կուրսի օտարերկրացի ուսանողների շրջանում նոր մոդուլային ծրագրով ուսումնառության գործընթացի գնահատում» թեման էր արժանացել համաճարակաբանության ամբիոնի վարիչ, «Հերացի» վերլուծական կենտրոնի ղեկավար Մերի Տեր-Ստեփանյանի ուշադրությանը:

«ԹՎային կրթություն. փիլիսոփայական ակնարկ» թեմային անդրադարձավ հասարակագիտական առարկաների ամբիոնի դասախոս Ռոզա Նեմիշայանը:

«Հետազոտության հիմունքներ» դասընթացի ներդրումը ԵՊԲՀ-ում որպես ուսանողներին հիմնարար հետազոտական հմտությունների փոխանցման գործիք» զեկույցով հանդես եկավ «Հետազոտական հմտություններ» կրթական խմբի ուսումնական պատասխանատու, «ԲՈՒԲԵՅՆ» կենտրոնի գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակի ղեկավար Մարիամ Մովսիսյանը:

«Ուսանողի միջառարկայական հետազոտական աշխատանքը դասավանդման և գիտելիքի գնահատման բազմաբաղադրիչ համակարգում» թեման ներկայացրեց ղեղագիտական ֆակուլտետի ղեկանի տեղակալ, ֆարմացիայի ամբիոնի դոցենտ Աննա Մանջիկյանը, իսկ ընդհանուր բժշկության ֆակուլտետի ղեկանի տեղալ, վիրաբուժության թիվ 1 ամբիոնի դոցենտ Ռաֆայել Մեսրոպյանը ներկայացրեց «ԵՊԲՀ-ում օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական քննության (ՕԿԿԲ) իրականացումը և բարելավման ուղիները» թեման:

«Էլեկտրոնային համալսարանի» դերը և նշանակությունը, թվային միջավայրի (e-university) ներդրումը» թեմային անդրադարձավ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի պաշտոնակատար, գիտության վարչության պետ, բժշկական ֆիզիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ Սեյրան Քոչարյանը:

Գիտաժողովի առաջին օրն ամփոփեց ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր Կոնստանտին Եսկոյանը՝ ներկայացնելով ««Բուժական գործ» կրթական ծրագրում մոդուլային համակարգի մարտահրավերները» թեման: Միջոցառման երկու օրերն ամփոփելով՝ նախաձեռնողները ամբողջացրին բժշկական բուհի բոլոր կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրում ստանալու համար անհրաժեշտ փաթեթները:



ՄԱՇԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ



Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում մայիսի 3-ին կայացավ մաշկաբանության և սեռավարակաբանության ամբիոնի պրոֆեսոր Հ.Ա. Քալամբարյանի անվան մաշկավեներաբանության և մաշկի օպտիկական ախտորոշման ասոցիացիայի XVII միջազգային գիտագործնական համաժողովը, այս անգամ՝ «Երևանյան VIII դերմատոսկոպիական ընթերցումներ. տեսնել և մակաբերել պատկերի տակի պատկերները» խորագրով:

Մաշկավեներաբանության, դերմատոսկոպիայի, ուռուցքամաշկաբանության, բժշկական կոսմետոլոգիայի հիմնահարցերին նվիրված խոշորագույն միջազգային ֆորումի աշխատանքներին մասնակցում էր շուրջ 250 մասնագետ:

Համաժողովի մասնակիցներին բժշկական բուհի և ռեկտոր Արմեն Մուրադյանի անունի ողջունեց ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Կոնստանտին Եսկոյանը: «Ես կցանկանայի, որ

նմանատիպ ֆորումները պահպանեին ժամանակակից բժշկագիտությանը բնորոշ խորությունը: Ի վերջո, երբ մենք քննարկում ենք այս դարի գիտությունը, պարզ է դառնում, որ կենսաբժշկության բարձրագույն ձեռքբերումներն արտացոլվում են գործնական բժշկության մեջ», – նշեց պրոռեկտորը՝ հայ և ռուս գործընկերներին հորդորելով կիսվել մաշկավեներոլոգիայի աշխարհում առկա ձեռքբերումներով և իրենց իսկ բացահայտումներով, իսկ համաժողովին՝ մաղթելով բարի երթ:

Բացման խոսքով հանդես եկավ նաև ԵՊԲՀ մաշկաբանության և սեռավարակաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Խաչիկ Խաչիկյանը: Համալսարանական մասնագետն անդրադարձավ մաշկային ենթաստի կարմիր գայլախտի կլինիկական, դերմատոսկոպիական և ախտահյուսվածքաբանական առանձնահատկություններին:

Պրիվոլժիեի հետազոտական բժշկական համալսարանի մաշկային և վեներական հիվանդությունների ամբիոնի վարիչ, համալսարանական կլինիկայի մաշկի ուռուցքների ախտորոշման և բուժման գիտագործնական կենտրոնի ղեկավար Իռենա Շիվկոյի խոսքով՝ սա մասնագետների հանդիպում է, երբ իրենց կաբինետներում նստած և պացիենտներին ընդունող բժիշկները հանդիպում են միմյանց: «Նրանք բացառիկ հնարավորություն ունեն շփվելու, մասնագիտական նորություններով փոխանակվելու: Հաջորդ կարևոր հանգամանքը՝ ֆորումի շրջանակում շատ հետաքրքիր ցուցահանդես է անցկացվում, և առաջատար ընկերությունները ներկայացնում են նորագույն ապրանքները», – շեշտեց մասնագետը:

Համաժողովից առաջ՝ մայիսի վերջին կայանալիք Մելանոմայի օրվա նախօրեին, հայ և ռուս մաշկաբանները վարպետության դաս անցկացրին մաշկի ուռուցքների ախտորոշման վերաբերյալ: «Այս հանդիպումը ցույց տվեց, որ Հայաստանն առանձնանում է բարձրակարգ մասնագետներով: Հայ բժիշկներն օժտված են մասնագիտական շատ բարձր որակներով. նրանք ծանոթ են ամենաժամանակակից միտումներին, նրանց համար հասանելի են ամենաժամանակակից սարքավորումները», – ընդգծեց Իռենա Շիվկոյն:

Նրա զեկույցը կրում էր «Նևուսները՝ երեխաների շրջանում, վարման մարտավարությունը» խորագիրը:

Ռուս մասնագետի գնահատմամբ՝ կարևոր է՝ ինչի վրա ուշադրություն դարձնել, ինչը հանգիստ թողնել, որտեղ մայրը պետք է մտահոգվի և որտեղ պետք է պարզապես հետևի երեխային և չմիջամտի: «Սա նաև յուրատեսակ ծնողական և բժշկական իմաստություն է. պետք չէ ամեն ինչ շտկել, երբեմն պետք է ուղղակի հաճույքով դիտել, թե ինչպես են վերափոխվում այդ կազմավորումները», – նշեց Իոենա Շլիվկոն:

ՌԴ ՆԳՆ թիվ 2 կենտրոնական պոլիկլինիկայի ՄՎ բաժանմունքի վարիչ, ՌԴ ԲԳԱ «Հիմնարար ՄՎ և կոսմետոլոգիա» բաժնի խորհրդատու, դերմատոսկոպիայի և ՄՕՍ ռուսական ընկերակցության վարչության անդամ, «Ոսկե դերմատոսկոպի» ազգային մրցանակի դափնեկիր Միխայիլ Ուստինովի փոխանցմամբ՝ առաջին նմանատիպ ֆորումն անցկացվել էր դեռևս տասը տարի առաջ՝ 2015 թվականին: «Այդ ժամանակվանից ի վեր մենք կարողացել ենք այս համաժողովն անցկացնել տարին երկու անգամ՝ բացառությամբ COVID-19-ի համավարակի տարիների: Սա մասնագիտացման այն ոլորտն է, որն այսօր բժիշկներին տալիս է ախտորոշիչ սոր կարողություններ: Եթե նախկինում խոսում էինք բացառապես մաշկի ուռուցքների մասին, ապա այժմ խոսքը վերաբերում է նաև դերմատոզներին, տրիխոլոգիական խնդիրներին, դերմատոսկոպիայի ներմուծմանը նաև կոսմետոլոգիայի ոլորտ: Մեզ համար կարևոր է, որ դասախոսությունները չկրկնվեն, յուրաքանչյուր նման միջոցառում սոր գիտելիք հաղորդի», – շեշտեց Միխայիլ Ուստինովը, որի զեկույցը վերաբերում էր դեմքի լենտիգինային գոյացությունների տարբերակիչ ախտորոշման մեջ դերմատոսկոպիայի դերին:

Մանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի մաշկավեներաբանության և կոսմետոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Իրինա Սմիրնովայի համոզմամբ՝ կոնֆերանսն արտացոլում է բոլոր ժամանակակից միտումները, որոնք ներկայումս առկա են բժշկության և մաշկաբանության մեջ: Նրա զեկույցը նվիրված էր գլխամաշկի հիվանդություններին, այսինքն՝ տրիխոլոգիական խնդիրներին: Իրինա Սմիրնովան ներկայացրեց դերմատոսկոպիայի դերն այս կատեգորիայի հիվանդությունների ախտորոշման մեջ:

Համալսարանական հարկի ներքո մասնակիցները քննարկեցին նաև դեմքի մաշկի սորագոյացությունների դերմատոսկոպիան, պորտի մաշկային ախտաբանության դերմատոսկոպիական առանձնահատկությունները, արհեստական ինտելեկտի մարտահրավերներն ու ռիսկերը 21-րդ դարում, երեքնուկանման կառույցները դերմատոսկոպիական սեմիոտիկայում, եղունգների տափակքջային քաղցկեղը, ցողունային բջիջների կիրառման հեռանկարները մաշկաբանության մեջ, բոտուլինոթերապիայի ներուժային հնարավորությունները բժշկական կոսմետոլոգիայում և բազմաթիվ այլ արդիական հիմնախնդիրներ:



ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻՑ

«Իմունականխարգելման եվրոպական շաբաթի» շրջանակում անցկացվեց բժիշկների լայն ընդգրկմամբ հավաստագրված կոնֆերանս՝ «Իմունականխարգելման նվաճումներն այսօր և ապագայում. Մարդկայնորեն հնարավոր» թեմայով:

«Հերացի» վերլուծական կենտրոնի ղեկավար, համաճարակաբանության ամբիոնի վարիչ Մերի Տեր-Ստեփանյանը՝ ողջունելով ներկաներին, շեշտեց, որ Հայաստանում ավելի շատ իրազեկման, քան պատվաստանյութերի հասանելիության խնդիր կա: «Եթե բուժաշխատողներն իրենց անձնական օրինակով, խոսքով ու վստահությամբ խոսեն պատվաստումների կարևորության մասին, համոզված եմ, որ բնակչությունն ավելի վստահ կգնա պատվաստման», – ասաց նա՝ հիշեցնելով, որ տարակուսելը անհիմն է, քանի որ ըստ ԱՀԿ տվյալների՝ պատվաստումների շնորհիվ 50 տարվա ընթացքում փրկվել է 154 մլն կյանք, կամ՝ 1 րոպեում՝ 6 երեխա:

«Հերացի» վերլուծական կենտրոնի ղեկավարը այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների մեջ ընդգծեց ԵՊԲՀ կլինիկական իմունոլոգիայի և պերգոլոգիայի ամբիոնի ներկայացուցիչների մասնակցության կարևորությունը:

«Շատ հաճախ բախվում ենք այն խնդրին, որ քաղաքացիները պերգոլոգիան ներկայացնում են որպես պատվաստման հակացուցում: Եվ այսօր հնարավորություն է ստեղծվել այդ հարցերի պատասխանները ստանալ հենց սկզբնաղբյուրից, և նրանք կկիսվեն իրենց սեփական փորձով», – հավելեց նա:

Կոնֆերանսը մեկնարկեց ԵՊԲՀ այցելու դասախոս, ՀՀ ԻԱՓԻՄ ղեկավար, Եվրոպական իմունականխարգելման փորձագիտական խորհրդատվական խմբի անդամ, բ.գ.թ. Արման

Բադալյանի՝ «ՄՊՊ պատվաստումային գործընթացի քաղաքականության վերանայումը Հայաստանում. հիմնավորումներ, ապացուցահեն տվյալներ» թեմայով զեկույցով:

«Իմունականխարգելումը բժշկագիտության մեջ ամենամեծ ձեռքբերումներից է: Դրա ուղղություններից մեկն էլ օնկոլոգիական խնդիրների վերաբերյալ պատվաստանյութերի ստեղծումն է, որոնց թիվը դեռ մեծ չէ, սակայն արդյունավետությունն ակնհայտ է», – նշեց մասնագետը:

Նա անդրադարձավ մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստումների 1 դեղաչափով անցնելու նպատակահարմարությանը:

«Մեկ այց, մեկ պատվաստում՝ դա ամենաբաղձալի տարբերակներից մեկն է, որին միշտ ձգտում ենք իմունականխարգելման գործընթացում», – մեջբերեց ԵՊԲՀ այցելու դասախոսը՝ հիշեցնելով, որ թիրախային խումբը 13-14 տարեկան աղջիկներն են, ինչպես նաև 9 տարեկան և բարձր անձինք, որոնք ունեն իմունային անբավարարություն կամ ՄԻԱՎ:

Աշխարհում տարեկան գրանցվում է արգանդի պարանոցի քաղցկեղի մոտ 604 հազար նոր դեպք, որոնցից 342 հազարը՝ մահվան ելքով: ՄՊՎ-ի բարձր ռիսկի քաղցկեղածին տեսակներից՝ արգանդի պարանոցի քաղցկեղի առաջացման մոտ 71%-ը պայմանավորված է 16-րդ և 18-րդ տեսակներով, այդ թվում՝ Հայաստանում:

Կլինիկական իմունոլոգիայի և պերգոլոգիայի ամբիոնի վարիչ, «Հերացի» համալսարանական հիվանդանոցի պերգոլոգիայի և իմունոլոգիայի կլինիկայի ղեկավար Արմինե Հակոբյանը ներկայացրեց «Հետպատվաստումային պերգոլոգիկ ռեակցիաների դրսևորումները» թեմայով զեկույցը:

«Կա թյուր կարծիք, որ պատվաստումներն առաջացնում են բազմաթիվ պերգոլոգիկ ռեակցիաներ: Պատվաստանյութից պերգոլոգիկ ռեակցիաներ շատ հազվադեպ են առաջանում: Հատկապես COVID-19 պատվաստանյութի դեպքում՝ 1,5 մլն պատվաստումների հաշվով գրանցվել են ընդամենը 1-3 հետպատվաստումային պերգոլոգիկ ռեակցիաներ, որոնք չեն ավարտվել մահվան ելքով», – նշեց նա՝ ավելացնելով, որ այն կարծիքը, թե պատվաստումները բարձր պերգոլոգիկ ռիսկեր ունեն և հակացուցված են պերգոլոգիկ անձանց, չափազանցված է:

Նա հիշեցրեց, որ հատկապես երեխաների շրջանում կարող են ի հայտ գալ հետպատվաստումային ռեակցիաներ: Այստեղ կարևորվում է տարբերակել պերգոլոգիկ ռեակցիաները՝ պատվաստումից զարգացած նորմալ կողմնակի ազդեցություններից:

«Պատվաստանյութը դեղորայք է, իսկ ցանկացած դեղորայք կարող է առաջացնել անբարենպաստ կողմնակի ազդեցություններ: Սակայն պատվաստանյութերը շատ ավելի հազվադեպ են նման ազդեցությունների պատճառ դառնում, քան օրինակ՝ հակաբիոտիկները կամ ցավազրկող դեղերը», – մասնագիտական փորձով շեշտեց կլինիկայի ղեկավարը:

Համաճարակաբանության ամբիոնի ավագ դասախոս Նաիրա Մելքոնյանը շարունակում էր կոնֆերանսը՝ «Պոլիոմիելիտի համաճարակաբանական դիտարկումը և իմունականխարգելումը հետհամավարակային փուլում» թեմայով զեկույցով:

«Իմունականխարգելման եվրոպական շաբաթը նշվում է ամեն տարի և նպատակ ունի բնակչությանը ևս մեկ անգամ իրազեկել պատվաստումներով կանխարգելվող վարակների վտանգների, բարդությունների, տարածվածության ու ներկայիս համաճարակային իրավիճակի մասին՝ ընդգծելով պատվաստումների կարևորությունը, որպեսզի բնակչությունը լինի զգուս, չերկմտի և չխուսափի պատվաստումներից», – ասաց նա,

շեշտելով, որ իմունականխարգելումն առողջապահական համակարգի կարևորագույն ներդրումներից է, որի շնորհիվ կանխվում են կյանքին սպառնացող բազմաթիվ հիվանդություններ:

«Աշխարհում իրականացվում են պատվաստումներ ավելի քան 30 վարակիչ հիվանդությունների դեմ, որոնց շնորհիվ տարեկան փրկվում է 3.5-5 միլիոն մարդու կյանք, կամ՝ յուրաքանչյուր 1 րոպեում՝ 6 մարդ: Վերջին 30 տարում մանկական մահացությունը 30%-ով նվազել է նաև հենց պատվաստումների շնորհիվ», – նշեց նա՝ ավելացնելով, որ մեր երկրում իրականացվում են պատվաստումներ 20 վարակիչ հիվանդությունների դեմ՝ հիմնականում պլանային, ինչպես նաև համաճարակաբանական ցուցումների դեպքում:

«Հետքովիդային ժամանակահատվածում չափազանց կարևոր է պատվաստված լինել, քանի որ վարակիչ մի շարք հիվանդություններ ակտիվացել են: Այսօր կա պո-



լիումիելիտի, դիֆթերիայի, կարմրուկի, կապույտ հազի տարածման վտանգ», – եզրափակեց նա:

«ՄՊՊ պատվաստանյութի վերաբերյալ իրագեկվածության մակարդակը ուսուցիչների և բժիշկների շրջանում» թեմայով զեկույցը ներկայացրեց համաճարակաբանության ամբիոնի դասախոս Կուլիյա Օհանը՝ անդրադառնալով մարդու պապիլոմավիրուսի պատվաստման նկատմամբ երկնտանքի մասին՝ ներկայացնելով Հայաստանում վիճակագրությունը՝ պատվաստման և սքրինինգի հետ կապված:

«Կներկայացնեմ երկու վերլուծություն՝ կատարված 2017-2018թթ. բժիշկների շրջանում, իսկ մյուս ուսումնասիրությունը շատ թարմ է՝ 2025 թ. մարտ-ապրիլ ամիսներ՝ կատարված ուսուցիչների շրջանում: Մենք փորձում ենք հասկանալ, թե ինչու է մարդու պապիլոմավիրուսի պատվաստման դիմելիությունը ցածր տոկոս կազմում: Հիմնական պատճառը գիտելիքի բացն է, մենք աշխատում ենք լրացնել այդ բացը արշավների, իրագեկման միջոցով», – ընդգծեց դասախոսը:

Կլինիկական ինունտոլոգիայի և ալերգոլոգիայի ամբիոնի դասախոս, «Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի ալերգոլոգ-ինունտոլոգ Մերի Խաչատրյանը գործընկերներին ներկայացրեց «Պատվաստումների առանձնահատկությունները ինունային անբավարա-

րությունների և ալերգիկ հիվանդությունների ժամանակ» թեմայով զեկույցը:

Մասնագետը շեշտեց, թե երբ է պետք զգուշանալ պատվաստումներից, երբ՝ ոչ: «Պատվաստումների մասին անհիմն վախերը հանգեցնում են տվյալ պատվաստանյութերը չստանալուն, իսկ դա հետագայում կարող է առաջացնել ինֆեկցիոն բարդություններ: Իմ զեկույցի նպատակը իրագեկվածության բարձրացումն է: Անհիմն վախերի փոխարեն անհրաժեշտ է դիմել համապատասխան մասնագետների, հասկանալ՝ արժե՞ տվյալ դեպքում զգուշանալ, թե՞ ոչ, քանի որ պատվաստանյութ չստանալու պատճառով կարող են գլուխ բարձրացնել բազմաթիվ հիվանդություններ», – հավելեց ալերգոլոգ-ինունտոլոգը:

Հերթական կարևոր՝ «Իմունականխարգելման ոլորտում թվային հարթակի մշակման նվաճումները» թեմայով զեկույցը ներկայացրեց էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի բժշկական գործընթացների կառավարման բաժնի ղեկավար Աննա Արծրունին, «Dr.LEX արհեստական բանականության գործիքի ինտեգրման նվաճումները և հեռանկարները ԱՐՄԵԴ թվային առողջապահական ազգային հարթակում» թեմայով խոսեց նույն համակարգի կլինիկական տվյալների վերլուծաբան Սիլվի Մարյանը:

ԵՊԲՀ-Ն ԱՄԵՆԱԱՐԱԳ ԶԱՐԳԱՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ Է ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ



«Հետխորհրդային տարածաշրջանում ամենաարագ զարգացող բժշկական համալսարանը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանն է»:

Այս գնահատականը հիմնված է մեծածավալ հետազոտության վրա, որի ընթացքում վերլուծության է ենթարկվել ողջ հետխորհրդային տարածաշրջանի բժշկական համալսարանների, ինչպես նաև բժշկական ֆակուլտետներ ունեցող համալսարանների գեներացրած գիտական արդյունքը: Այն չափվել է ԱՄՆ Ազգային բժշկական գրադարանում ինդեքսավորված գիտական ամսագրերում տպագրված հոդվածների միջոցով:


Նշված տարածաշրջանից Բժշկական դպրոցների համաշխարհային ռեզիստրում գրանցված է 249 բժշկական համալսարան (կամ համալսարաններ, որոնք ունեն

բժշկական ֆակուլտետ): Հետազոտության առաջին փուլում հաշվարկվել են բոլոր համալսարանների աշխատակիցների և ուսանողների կողմից տպագրված հոդվածները, և հետազոտության երկրորդ փուլ անցել են այն համալսարանները, որոնք նվազագույնը ունեցել են 500 տպագրված աշխատանք՝ 1991-ից 2024 թվականների ընթացքում: 249 համալսարանից երկրորդ փուլ անցել են միայն 41-ը: Երկրորդ փուլում չափվել է համալսարանների գիտական աճը: Առավել օբյեկտիվ լինելու համար, այսինքն՝ հաշվի առնելով վերջին զարգացումները և չանտեսելով պատմական ձեռքբերումները, ձևավորվել է հատուկ գործակից՝ Exponentially Weighted Growth Index (EWGI):

Ինչպես նշում են հեղինակները, այս մեթոդը թույլ է տվել բնական ճանապարհով առանձնացնել համալսարաններին, որոնք ունցել են իրական և կայուն աճ:

Արդյունքում պարզվել է, որ ողջ հետխորհրդային տարածաշրջանում ամենաարագ զարգացող բժշկական համալսարանը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանն է:

Հետազոտությունը կատարվել է Բոստոնի գլոբալ աստիճանակարգման ինստիտուտի (The Boston Institute for Global Rankings) կողմից, որն ակադեմիական նախաձեռնություն է, որի հիմնադիրների մեջ նաև ԵՊԲՀ շրջանավարտներն են:



ՄԱՅԻՄԱՄԵԿՅԱՆ ՖՈՏՈՇԱՐՔ

Մայիսի 1-ն աշխատանքի և աշխատավորների միջազգային օրն է:
Այն ևս մեկ առիթ է գնահատանքի խոսքեր հղելու յուրաքանչյուր աշխատակցի՝ անկախ ոլորտից, զբաղեցրած պաշտոնից և մասնագիտական գործունեությունից:
Բժշկական մայր բուհն ունի 3265 աշխատող:
Օրվա խորհրդով ձեզ համար պատրաստել ենք ֆոտոշարք, որտեղ համալսարանականների առօրյան է:
Մարդիկ, որոնց գործունեությունը տեսանելի չէ հանրությանը սոցիալական հարթակներում, էջերում, սակայն յուրաքանչյուրը կարևոր ներդրում ունի:
Մրտանց շնորհավորում ենք բոլորիդ տոնի առիթով՝ մաղթելով անսպառ եռանդ:
Շնորհակալություն ամենօրյա անձնվեր և բարեխիղճ աշխատանքի համար:



ԻՏԱԼԱՅԻ ՊՐՈՖԵՍՈՐ ՖԵՂԵՐԻԿՈ ՎԻՋԵՎԱՆՈՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑ ԵՊԲՀ-ՈՒՄ



Նյարդաբանության և հոգեբուժության պրոֆեսոր, Իտալիայի San Raffaele ինստիտուտի տարիքային զարգացման խանգարումների բաժանմունքի ղեկավար Ֆեղերիկո Վիջեվանոն ապրիլի 28-ին հյուրընկալվեց ԵՊԲՀ-ում:

Անվանի պրոֆեսորի աշխատանքային այցը մեկնարկեց «Մուրացան» համալսարանական հիվանդանոցում:

Բժիշկ-գիտնականին ներկայացվեցին համալսարանական բուժաստատության հնարավորությունները, այնուհետև նա անցկացրեց պացիենտների խորհրդատվություն:

Դրան հաջորդեցին երկու դասախոսություններ:

Օրվա երկրորդ կեսին պրոֆեսորը այցելեց «Զինվորի տուն», որտեղ հանդիպում ունեցավ ԵՊԲՀ ռեկտորի և վերականգնողական կենտրոնի թիմի հետ:

«Զինվորի տանը» հանդիսավոր արարողությամբ, որին ներկա էին Հայաստանում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեսսանդրո Ֆերրանտին, ՀՀ ԱԺ պատգամավորներ, ԵՊԲՀ ռեկտորատի անդամներ, ապագա բժիշկներ՝ նյարդաբանության և հոգեբուժության պրոֆեսոր Ֆեղերիկո Վիջեվանոյին շնորհվեց «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի այցելու պրոֆեսորի պատվավոր կոչում:

Այն տրվել է անվանի մասնագետին՝ բժշկական բուհի նոմինացիոն կոմիտեի որոշմամբ՝ Հայաստանի նյարդաբանների ասոցիացիայի առաջարկով:

ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը նշեց, որ այս արարողության անցկացումը «Զինվորի տանը»՝ խորհրդանշական է, քանի որ այստեղ անցկացվող յուրաքանչյուր միջոցառում կրկնակի պարտավորեցնող է:

«Այս կենտրոնը հայ ժողովրդի կողմից ստեղծված հարթակ է, որտեղ տղաներն ամբողջովին վերականգնվում են և ներգրավվում սոցիալական կյանքում: Մենք առանձնահատուկ դեպքերում ենք այստեղ իրականացնում ռեկտորատի նիստեր», – ասաց նա՝ ընդգծելով, որ այս կոչումը նաև աշխատանքային կարգավիճակ է:

Հետայսու տարվա ընթացքում մի քանի անգամ կկազմակերպվեն մասնագիտական փոխայցեր ու վերապատրաստումներ Ֆեղերիկո Վիջեվանոյի ղեկավարած կլինիկայում: «Պրոֆեսորի այցը նվիրված է մեր երեխաներին և նրանց առողջությանը, որովհետև այդ խնդիրը բավականին արդիական է ամբողջ աշխարհում և ,մասնավորապես, Հայաստանում, խոսքը մասնական էպիլեպսիայի մասին է: Մանկական տարիքում ձևավորված խնդիրները հաջորդաբար արձագանքում են նաև դեռահաս և ավագ տարիքային խմբում: Մեզ համար շատ արժեքավոր է ոչ միայն իր ներկայությունն, այլև կարծիքը՝ տարաբնույթ հարցերի շուրջ, որոնք քննարկվում են այսօր բժշկագիտության բնագավառում», – շեշտեց Արմեն Մուրադյանը և հավելեց, որ բաց աշխարհում համագործակցությունը թույլ է տալիս թվացյալ անլուծելի խնդիրները շատ առարկայական և պարզ դարձնել:

Հայաստանում Իտալիայի դեսպան Ալեսսանդրո Ֆերրանտինի փոխանցմամբ՝ իր



համար մեծ պատիվ է այստեղ ներկա գտնվելը: Դիվանագետի գնահատմամբ՝ պրոֆեսորի այցը, այս միջոցառումն արտացոլումն են այն բանի, թե ինչպես կարելի է արդյունավետ գործակցություն ծավալել Հայաստանի և Իտալիայի միջև:

Դեսպանի խոսքով՝ երկու երկրի միջև կապերը յուրահատուկ բնույթ ունեն, և այդ հարաբերությունները խորացնելու ուղղությամբ աշխատանքները շարունակական են:

ԵՊԲՀ նյարդաբանության ամբիոնի վարիչ Հովհաննես Մանվելյանը փաստեց, որ ավագ կոլեգան միջազգային նյարդաբանական հանրային կողմից ճանաչվել է «Էպիլեպսիայի դեսպան»:

«Իտալացի պրոֆեսոր Ֆեդերիկո Վիջելանտոն կենդանի լեգենդ է նյարդաբանության և հոգեբուժության բնագավառում: Նա ամբողջ կյանքը նվիրել է էպիլեպսիայի ուսումնասիրությանը: Նրա ջանքերի շնորհիվ ստեղծվել են արդյունավետ գործող մասնագիտական կազմակերպություններ, որոնց գործունեությունն ուղղված է էպիլեպսիայի դեմ պայքարին: Մասնագետների ներգրավվածությունն այս կազմակերպությունների աշխատանքներին թույլ է տալիս զինվել և՛ գիտելիքով, և՛ համապատասխան տեխնիկայով՝ հետազոտելու, ախտորոշելու և բուժելու համար:

2001 թվականից ի վեր իտալացի պրոֆեսոր Ֆեդերիկո Վիջելանտոն կրում է էպիլեպսիայի դեսպանի միջազգային կոչումը, – ասաց պրոֆեսոր Մանվելյանը:

Պրոֆեսոր Ֆեդերիկո Վիջելանտոն լրագրողների հետ զրույցում ամփոփեց աշխատանքային այցը ԵՊԲՀ, «Զինվորի տուն»:

«Շատ տպավորված եմ այսօրվա բավականին հազեցած օրակարգից: Եվ այցելու պրոֆեսորի կոչում ստանալն ինձ համար շատ պատվաբեր է, շնորհակալ եմ: Ինձ համար կարևոր է նաև, որ իմ գործունեությամբ եմ արժանացել բժշկական համալսարանի այս պատվավոր կոչմանը: Կյանքս նվիրել եմ մանկական զարգացման խնդիրներին, էնցեֆալոպատիայի և էպիլեպսիայի ուսումնասիրությանը», – տպավորություններով կիսվեց իտալացի մասնագետը՝ շեշտելով, որ իր կողմից կատարված աշխատանքներն ամփոփել է «Մուրացան» համալիրում կայացած քննարկումներով, որտեղ հանդիպել է բժիշկների, կլինիկական օրդինատորների հետ, նաև խորհրդատվություններ անցկացրել մանկահասակ պացիենտների հետ:

Միջոցառումը եզրափակվեց շրջայցով, որի ընթացքում «Զինվորի տան» տնօրեն Հայկունի Մինասյանը դեսպանին և պրոֆեսորին ներկայացրեց կենտրոնի գործունեությունը, տղաների համար վերականգնողական բուժման, հանգստի, աշխատանքի, սոցիալական լայն ընդգրկման համար ձևավորված բոլոր պայմանները:

Հյուրը փաստեց, որ ինչպես «Մուրացանում» երիտասարդ բժիշկների հետ շփվելիս, այնպես էլ «Զինվորի տանը» կայացած միջոցառման արդյունքում հանգել է այն եզրակացության, որ գործակցության հեռանկարներ նա տեսնում է մասնավորապես հետազոտական ծրագրերի իրականացման ոլորտում:

ՊԱՏՐԱՍ Է ՆՈՐ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՏԵՍՔԸ



Գրադարանային նոր նախագծի վերջնական ինժեներական, դիզայնիերական տեսքն օրերս ներկայացվեց համալսարանականներին՝ «Կերոն» հիմնադրամի ղեկավար կազմի և ներկայացուցիչների հետ անցկացված խորհրդակցության ժամանակ:

Նախագծային փուլն ավարտված է, և համալիր փորձաքննության եզրակացությունից, համապատասխան շինթույլտվություն ստանալուց հետո կմեկնարկեն վերակառուցման, կառուցման, վերահատակագծման ծավալուն աշխատանքները, որոնց շնորհիվ ԵՊԲՀ-ն կունենա գերժամանակակից գրադարան:

Ըստ նախագծի՝ կիրականացվի լաբորատոր մասնաշենքի և հարակից տանիքի վերակազմակերպում, կմաշկվի գործողությունների հստակ ժամանակացույց:

Defesche van den Putte (DVDP) ընկերության համահիմնադիր և գլխավոր ճարտարապետ Յեֆ վան դեն Պուտը՝ դիմելով քննարկման մասնակիցներին, շեշտեց, որ ուրախ է այս նախագծի վրա աշխատելու համար:

«Այն միանշանակ ստացված է լինելու: Մենք արդեն ճանաչում ենք թե՛ շինարարական ընկերությանը, թե՛ համալսարանին և թե՛ ռեկտորին, որպես էներգիայով լեցուն մարդ: Վստահ եմ՝ արդյունքում ձեռք ենք բերելու ոչ միայն գրադարան, այլև նոր ընկերներ», - ասաց Ռոտերդամից ժամանած մասնագետը:

Նրան հաջորդելով՝ ընկերության համահիմնադիր, ճարտարապետ Փիթեր Դեֆեշը նկատեց, որ նախագծում ներառված բոլոր լուծումները երկարատև ամիսների աշխատանք է:

Փիթեր Դեֆեշը խոսեց ծրագրի հավակնություններից՝ որակական և քանակական առումով:

«Մա գուտ գրադարանի նախագիծ չէ, այլ նոր միջավայրի ստեղծում», - ասաց նա:

ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը, նոր գրադարանի ստեղծման աշխատանքների ներհամալսարանական հանձնախմբի ղեկավար, արգացման և մարքեթինգի գծով պրոռեկտոր Խաչատուր Մարգարյանը մի շարք տեխնիկական և բովանդակային հարցեր քննարկեցին գործընկերների հետ:

Հազեցած հանդիպումը լի էր մտքերի փոխանակմամբ ու ամենակարևորը՝ հստակ հաստատականությամբ, որ շինարարության ավարտից հետո գրադարանային համալիրը դառալու է ապագա բժիշկների, դասախոսների, երիտասարդ հետազոտողների սիրելի վայրն ու ուսանողական տարածքը:

Նախքան քննարկումը «Կերոն» հիմնադրամի հիմնադիր Մարետա Գևորգյանը, գործադիր տնօրեն Վանանե Արարքյանը, հիմնադրամի ներկայացուցիչները՝ «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնի տնօրեն Հայկուհի Մինասյանի ուղեկցությամբ շրջայց ունեցան, ծանոթացան կենտրոնի ստեղծման պատմությանը, վերականգնողական բուժում ստացող տղաների համար իրականացվող բազմաթիվ ծրագրերին ու հաջողություններին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՇԱԲԱԹԸ՝ ԲԺՇԿԱԿԱՆՈՒՄ

Այս տարի ԵՊԲՀ-ն ևս միացավ գլոբալ առողջապահական համայնքին՝ նշելու «Եվրոպական իմունականխարգելման շաբաթ 2025-ը»: Կարիերայի զարգացման կենտրոնի նախաձեռնությամբ ապրիլի 30-ին կայացած միջոցառման շրջանակում ուսանողները համախմբվել էին՝ բարձրացնելու իրագրելիությունը, կիսվելու գիտելիքով և ներշնչելու գործողություններ՝ ուղղված հանրային առողջապահության ամենամեծ նվաճումներից մեկին՝ պատվաստմանը:

Ապրիլի 24-30-ն անցկացվող համաշխարհային արշավի թեման՝ «Մարդկայնորեն հնարավոր», ընդգծում էր այն անհավատալի առաջընթացը, որին մարդկությունը պատվաստումների շնորհիվ հասել է հիվանդությունների կանխարգելման, համայնքների պաշտպանության և կյանքեր փրկելու գործում:

Ապագա բժիշկները ներկայացրին հետաքրքիր և արդիական ելույթներ: Միջոցառումը ներառում էր մշակութային վառ հատված՝ արվեստը՝ բժշկական հայացքով, և վիկտորինա: Ամենաազդեցիկ և ներշնչող ելույթով հանդես եկած ուսանողին շնորհվեց «Լավագույն բանախոս» կոչումը, միջոցառման ընթացքում ամենախորհմաստ, հետաքրքրաշարժ և արդիական հարցը հնչեցրած ուսանողն արժանացավ «Լավագույն հարց» մրցանակին, բացառիկ գիտելիքի, վերլուծական մտածողության և միջոցառման ողջ ընթացքում ակտիվ ներգրավվածության համար ճանաչվեց «Ամենախելացի ուսանողը», առողջապահական ուղերձով ստեղծագործականության համար ընտրվեց «Լավագույն արվեստի աշխատանքը»՝ «Մարդկայնորեն հնարավոր» թեմայի ամենատպավորիչ աշխատանքի հեղինակը»: Հաղթողները ստացան հատուկ մրցանակներ:

Բժշկական համալսարանը միջոցառման ընթացքում հյուրընկալեց նաև դպրոցականների, որոնք հանդես եկան վակցինացիայի թեմայով հետաքրքիր բեմականացմամբ:



«ՆԵՅՐՈԳԻՏՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ -2025» . ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՑՔՈՎ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ



Բժշկական բուհում մայիսի 16-ին մեկնարկեց «Նեյրոգիտության շաբաթ -2025»-ը: ԵՊԲՀ «ԲՈՒՐԵՅՆ» կենտրոնի և Սթրեսի և վարքագծի միջազգային կազմակերպության (International Stress and Behavior Society – ISBS) գործակցությամբ անցկացվող արդեն երրորդ տարեկան միջազգային համաժողովը համախմբել էր շուրջ 150 առաջատար մասնագետի՝ աշխարհի 20 երկրից, սկսնակ հետազոտողների և ուսանողների, որոնք կուսումնասիրեն ուղեղի գիտության և վարքագծի սահմանները:

Մայիսի 16-19-ը նախատեսված և արդեն ավանդույթ դարձած քառօրյա միջոցառման շրջանակում ներկայացին տարատեսակ բանավոր և պաստառային գեկույցներ, անցկացվեցին պլենար նիստեր և գիտական քննարկումներ, գլխավոր թեման՝ նեյրոգիտություն և մտավոր առողջություն:

Գիտության գծով պրոռեկտոր, համաժողովի համանախագահ, պրոֆեսոր Կոնստանտին Ենկոյանը ռեկտորի և բժշկական համալսարանի անունից ջերմորեն ողջունեց

ներկաներին:

«Մոտակա 4 օրերին բժշկական համալսարանը հնարավորություն է ընձեռել մեր երկրում հյուրընկալելու նեյրոգիտության ասպարեզում ամենաբարձր արդյունք ներկայացնող բազմաթիվ գիտնականների: Առաջատար մասնագետները խոսելու են ուղեղի տարբեր ասպեկտների մասին՝ սկսած աուտիզմ հիվանդությունից՝ վերջացրած ծերունական ալցհեյմերով, պոստտրավմատիկ սթրեսիով, COVID-19-ի հետևանքով առաջացած փոփոխություններով: Երեք տարի անընդմեջ բժշկական համալսարանը կարծես թե դառնում է որոշակի հարթակ՝ գիտական բանակցությունների, բանավեճերի համար՝ Չինաստանից՝ Միացյալ Թագավորություն, Նորվեգիա, Գերմանիա, Լեհաստան, Ռուսաստան», – շեշտեց պրոռեկտորը: Բյուրսելի, Փարիզի, Նյու Յորքի, Լոնդոնի, Մոսկվայի շարքում Երևանը, նրա խոսքով, զբաղեցնում է ուրույն տեղ նեյրոգիտության աշխարհում:

«Մեր ուսանողներն այսօրվա դրությամբ մասնակից են դառնում առաջադեմ բոլոր հետազոտություններին: Մեր գիտնականները պարզ ճակատով կարող են ներկայացնել այս դաշտում իրենց հետազոտությունները: Այսինքն՝ մենք արդեն ասելիք ունենք և միանշանակ կունենանք այդ դաշտում», – ընդգծեց Կոնստանտին Ենկոյանը:

Պրոռեկտորի մասնագիտական գեկույցը կրում էր «COVID-ից հետո հայ բնակչության մոտ նախածերունական դեմենցիա և ճանաչողական դեֆիցիտներ» խորագիրը:

ԵՊԲՀ այցելու պրոֆեսոր, «ԲՈՒՐԵՅՆ» կենտրոնի խորհրդատվական խորհրդի անդամ, ZENEREI հետազոտական կենտրոնի տնօրեն, նեյրոգիտության պրոֆեսոր Ալան Կալունեֆը նկատեց, որ նեյրոգիտության ոլորտում լավ ավանդույթ է ձևավորվել: Երախտագիտություն հայտնելով բժշկական համալսարանի գործընկերներին՝ գիտնականը շեշտեց, որ նրանք հայկական կենսաբժշկության դրոշակակիրներն են:

«Գիտական հետազոտությունը նման է գիտության գնացքով ճանապարհորդության, իսկ այդ գնացքը շատ յուրահատուկ վայր է, կարելի է հեշտությամբ նստել այն կամ իջնել, բայց կարևոր է մի բան. այն չի կանգնում, այն անընդհատ առաջ է շարժվում՝ չսպասելով որևէ մեկին: Եվ այժմ մենք վայելում ենք գիտության գնացքով մեր ճանապարհորդությունը գեղեցիկ Երևանում», – նշեց Ալան Կալունեֆը:

Մեր օրերում, նրա փոխանցմամբ, գիտությունը զարգանում է ոչ թե մեկ ուղղությամբ, այլ լայն ճակատով՝ ճանաչողական գիտություններից մինչև մոլեկուլային նյարդակենսաբանություն, հետևաբար բացահայտումներ են արվում ամեն մակարդակում՝ բջիջների մակարդակով, մոլեկուլների մակարդակով, ուղեղի համակարգային ֆիզիոլոգիական միավորների մակարդակով, ամբողջ ուղեղի մակարդակով, ամբողջ օրգանիզմի մակարդակով, քանի որ գլուխը մարմնից առանձին գոյություն չունի:

«Նյարդակենսաբանությունը զարգանում է տիեզերքի նման՝ բոլոր ուղղություններով միաժամանակ և հսկայական արագությամբ: Գիտությունը սահմաններ չունի, գիտությո-

յունը միջազգային է, այն պետք է դինամիկ լինի՝ ինչպես էլեկտրոնը, որը միանգամից ամենուր է: Հայաստանը պատմականորեն շատ կարևոր է մեզ համար ներդրողության առումով. այստեղ կա հզոր դպրոց, ակտիվ ինստիտուտներ, «ԲՈՒԲՆՅՆԻ» նման հիանալի կենտրոններ, որոնք մի քանի տարի առաջ ստեղծվել են գրոյից: Այն փոքր, բայց շատ հյուրընկալ և բարեկամական երկիր է, ուստի Հայաստանը յուրաքանչյուր ներդրելու-սաքանի համար առանձնահատուկ նշանակություն ունի», – փաստեց Ալան Կալունֆըլ:

ՀՀ ԳԱԱ Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն Նաիրա Այվազյանը ևս ողջունեց համաժողովի մասնակիցներին. «Ուրախ եմ, որ այս ձևաչափն արդեն ավանդական է դարձել: Կրթության այս տաճարում շատ արդյունավետ քննարկումներ են ծավալվում, որոնք հետագայում՝ վերջին օրը, փոխանցվում են նաև մեր ինստիտուտին», – ընդգծեց նա:

ԵՊԲՀ այցելու պրոֆեսոր, «ԲՈՒԲՆՅՆ» կենտրոնի խորհրդատվական խորհրդի անդամ, Վարշավայի Մոլեկուլային և բջջային կենսաբանության միջազգային ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, մոլեկուլային և բջջային նյարդակենսաբանության մասնագետ, բնական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յացեկ Յավոբսկու խոսքով՝ աշխարհում տարբեր խնդիրներ կան ներդրողության ոլորտում:

«Առաջնային խնդիրներից ուզում եմ անդրադառնալ ներդրողներատիվ հիվանդություններին, քանի որ շատ ավելի շատ ծեր մարդիկ են այսօր ապրում աշխարհում: Ներդրողական հիվանդությունները նույնպես գնալով շատանում են, շուտով նրանք կգրավեն առաջին տեղը՝ անցնելով ներդրողներատիվ հիվանդությունների: Բացի դրանից, այդպիսի հիվանդություններով մարդկանց մոտ ևս հաճախ սկսում է զարգանալ դեպրեսիա և այլ խանգարումներ: Եվ վերջում, բայց ոչ վերջինը, պետք է անդրադառնանք նաև գենետիկական խնդիրներին», – նշեց լեհ գիտնականը:

Համագործակցությունը բժշկական համալսարանի և «ԲՈՒԲՆՅՆ» կենտրոնի հետ, նրա խոսքով, խորանում է.

«Միտում եմ լինել այստեղ այն պատճառով, որ երիտասարդները շատ մոտիվացված են ու անդադար աշխատում են»:

Յացեկ Յավոբսկու զեկույցը վերաբերում էր հակադեպրեսանտների նույնականացման նոր մոտեցումներին:

Համաժողովի բացման պլենար դասախոսությունը վստահված էր բժիշկ-գիտնական, Օքսֆորդի համալսարանի ֆարմակոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, Մասատրիխտի համալսարանի հոգեբանության և նյարդահոգեբանության ամբիոնի դասախոս, Մոսկվայի Ի. Մեչենովի անվան առաջին պետական բժշկական համալսարանի ֆիզիոլոգիայի պրոֆեսոր Տատյանա Ստրեկալովային, որը ներկայացրեց «Սթրեսի մոդելները մարդու նյարդաբանական հիվանդությունների ուսումնասիրման մեջ. փաստեր, արտեֆակտներ և ապագայի հեռանկարներ» խորագրով զեկույցը:

Մասնագետի խոսքով՝ սթրեսը մեր կյանքում գնալով ավելի մեծ տեղ է զբաղեցնում: Անդրադառնալով անհատական վարքագծի ձևերի բազմազանությանը՝ Տատյանա Ստրեկալովան սահմանափակ շարժունակությունը բնորոշեց որպես սթրեսի աղբյուրներից մեկը:

«Այնուամենայնիվ՝ ոչ բոլոր վարքագծերը կարելի է բացատրել», – միաժամանակ հավելեց նա:

Միջոցառման մեկնարկային օրն առանձնացավ պրոֆեսոր Միխայիլ Աղաջանովին նվիրված Ներդրումային սիմպոզիումի և, հաջորդիվ, պրոֆեսոր Գաբրիել Խաչատրյանի 100-ամյակին նվիրված ներդրումեկույցար գիտության սիմպոզիումի անցկացմամբ:

Երկու անվանի գիտնականներն էլ՝ ինչպես բուհի պատմության, այնպես էլ ներդրողության մեջ իրենց կարևոր հետքն են թողել՝ կրթելով սերունդներ, նպաստելով հայրենի բժշկագիտության զարգացմանը Հայաստանի նորագույն պատմության մեջ:

Այդ առիթով ցուցադրվեց տեսաֆիլմ՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գաբրիել Խաչատրյանի անցած ուղու, գիտահետազոտական և կրթական գործունեության մասին, որտեղ կոլեգաները, այդ թվում՝ ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը, պրոֆեսոր Կոնստանտին Ենկոյանը, նրա ասպիրանտ Ռեգինա Մինասյանը, թողր՝ նյարդաբան Սամոն Խաչատրյանը պատմում են նրա անցած ուղու մասին:

«Վառ անհատականություն էր, պատմության մեջ կմնա որպես առանձնահատուկ մարդ-գիտնականի տեսակ», – տեսանկյունում խոսելով Գաբրիել Խաչատրյանի մասին՝ ընդգծում է ԵՊԲՀ ռեկտոր, պրոֆեսոր Արմեն Մուրադյանը:





Համաժողովի առաջին օրվա ընթացքում մասնակիցները շրջայց կատարեցին «ԲՈՐԲԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնում, ծանոթացան տարածաշրջանում առաջատար հաստատության տեխնիկական հագեցվածությանը և նորագույն հետազոտական մեթոդներին:

Նշենք, որ ԵՊԲՀ-ում «Նեյրոգիտության շաբաթ» երրորդ տարեկան գիտաժողովի և Սթրենի և վարքագծի միջազգային կազմակերպության 31-րդ միջազգային տարեկան համաժողովի ընթացքում տեղի ունեցան գիտական տարբեր միջոցառումներ, այլնար և բանավոր զեկույցներ՝ ոլորտի միջազգայնորեն ճանաչված մասնագետների կողմից, ներկայացվեցին պաստառային զեկույցներ:

Շաբաթվա շրջանակում կազմակերպված ցուցահանդեսում՝ Art in Neuroscience, ուսանողները ներկայացրել էին իրենց ստեղծագործությունները՝ ներշնչված ուղեղի և նեյրոգիտության թեմաներով:

«Նեյրոգիտության շաբաթ -2025» միջոցառման երկրորդ օրը ոլորտի շուրջ 150 մասնագետ աշխարհի 20 երկրից բժշկական մայր բուհում

շարունակեցին իրենց աշխատանքը Զոֆիա Զուկովսկայի անվան տրանսլյացիոն նեյրոգիտության սիմպոզիումի շրջանակում:

Համաժողովի համանախագահող՝ ԵՊԲՀ այցելու պրոֆեսոր, «ԲՈՐԲԵՅՆ» կենտրոնի խորհրդատվական խորհրդի անդամ, ZENEREI հետազոտական կենտրոնի տնօրեն, նեյրոգիտության պրոֆեսոր Ալան Կալուեֆը շեշտեց, որ Զոֆիա Զուկովսկայի անվան տրանսլյացիոն նեյրոգիտության սիմպոզիումի շրջանակում:

Նեյրոգիտական էր, որը զգալի ներդրում է ունեցել սթրենի ֆիզիոլոգիայի և նեյրոպեպտիդ Y-ի (NPY) ուսումնասիրության ոլորտներում: Այդ առումով սիմպոզիումը կենտրոնանում է սթրենի նեյրոգիտության, հոգեկան խանգարումների և նեյրոպեպտիդների դերի վրա՝ հատկապես նեյրոպեպտիդ Y-ի (NPY) ազդեցության ուսումնասիրության համատեքստում:

Սառույան Արաբիայից, Ռուսաստանից, Չինաստանից և այլ երկրներից ժամանած գիտնականների ու հետազոտողների ելույթները սիմպոզիումի ընթացքում նվիրված էին ինչպես կլինիկական, այնպես էլ կենդանաբանական մոդելների վրա հիմնված ուսումնասիրություններին:

Չժեցյան Չինական բժշկական համալսարանի Միջազգային տրանսլյացիոն նեյրոգիտության հետազոտական ինստիտուտի պրոֆեսոր և տնօրեն, նեյրոգիտական Վլադիմիր Պարպուրյան, որը նեյրոգիտության ոլորտում մեծ դեր ունի՝ մասնավորապես գլխալ բջիջների և նեյրոնների փոխազդեցության ուսումնասիրության մեջ, հատկապես՝ տրանսլյացիոն նեյրոգիտության և նեյրոկենտրոնական հիվանդությունների ուսումնասիրության համատեքստում, ներկայացրեց իր զեկույցը գլեյմաների (ուղեղի կամ ողնուղեղի ուռուցք) հետազոտությունների վերաբերյալ: Որպես Միջազգային նյարդաքիմիայի ընկերության (ISN) գանձապետ՝ նա անդրադարձավ նաև ԵՊԲՀ ներուժին՝ ընդգծելով բուհի կարողությունները տրանսլյացիոն նեյրոգիտության զարգացման գործում:

Վլադիմիր Պարպուրյան կարևորեց բժշկական համալսարանի դերակատարությունը՝ սկսած միջազգային ճանաչում ունեցող մասնագիտացված դպրոցների կազմակերպումից մինչև հայ երիտասարդ գիտնականների ներգրավվածությունը գլոբալ գիտական ցանցերում: Այս քայլը ոչ միայն բարձրացնում է ԵՊԲՀ-ի տեսանելիությունը միջազգային գիտական դաշտում, այլև ստեղծում է նոր հնարավորություններ հետազոտողների և ուսանողների համար՝ համագործակցության, վերապատրաստման և համատեղ նախագծերի իրականացման բնագավառներում:

«Նյութափոխանակային էներգիայի աղբյուրների ազդեցությունն առողջ և քաղցկեղային աստրոցիտների վրա» զեկույցը ներկայացրեց Միջազգային թարգմանական նյարդագիտության հետազոտական ինստիտուտի, Չժեցյան չինական բժշկության համալսարանի պրոֆեսոր Վեդրանա Մոնտանան: Վեդրանա աշխատանքները կարևոր ներդրում են նեյրոգիտության ոլորտում՝ բացահայտելով էներգետիկ սուբստրատների դերն առողջ և քաղցկեղային աստրոցիտների գործունեության մեջ:



Սաուդյան Արաբիայի King Fahad Medical City (KFMC) առողջապահական կենտրոնի մագնիտոէնցեֆալոգրաֆիայի (MEG) լաբորատորիայի ղեկավար Վահե Պողոսյանը ներկայացավ «Դեպրեսիայի ժամանակ զգացմունքային վերամշակման նեյրոնային համապատասխանությունները մինչև և ստանդարտ դեղաբուժական բուժումից հետո՝ MEG հետազոտություն» գեկույցով: Նյարդաբանական ու հոգեբանական հետազոտության նպատակն էր պարզել՝ ինչպես է մարդու ուղեղը վերամշակում էմոցիոնալ (զգացմունքային) տեղեկատվությունը դեպրեսիայի պայմաններում, ինչպես նաև՝ ինչպես են այդ գործընթացները փոխվում բուժման արդյունքում:

Ինչպես նշեց ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Կոնստանտին Ենկոյանը, տրանսլյացիոն նեյրոգիտությունը, նեյրոգիտության ոլորտի այն ճյուղն է, որն ուղղված է գիտական հիմնարար հետազոտությունների արդյունքները տեղափոխելուն դեպի բժշկական և կլինիկական կիրառություն: «Լաբորատոր հետազոտություններից (մոլեկուլային, բջջային, կենդանային մոդելներ) դեպի գործնական բուժում, դեղամիջոցներ և ախտորոշման մեթոդներ

մարդկային հիվանդությունների համար»,- ասաց նա՝ հավելելով, որ տրանսլացիոն գիտություն նշանակում է՝ տեղափոխում հիմնարար գիտությունից դեպի կիրառելի արդյունքներ:

Այս տարի «Նեյրոգիտության շաբաթ-2025»-ին ակտիվ ներգրավվածություն ունեցան արտասահմանցի և տեղացի կամավորները: «Դա կարևոր նշանակություն ունի և նրանց հետագա գործունեության ընթացքում մեծ ազդեցություն կունենա՝ փորձառության և որպես կամավոր՝ անձի ձևավորման տեսանկյունից»,- շեշտեց Կոնստանտին Ենկոյանը:

«Նեյրոգիտության շաբաթ- 2025»-ի երկրորդ օրն առանձնացավ տրանսլացիոն նեյրոգիտության ոլորտում նորարարությունների և ձեռքբերումների ներկայացմամբ:

Միջոցառման երկրորդ մասն առանձնահատուկ էր հայ և արտասահմանցի երիտասարդ գիտնականների պաստառային գեկույցների ներկայացմամբ: Այս ձևաչափով աշխատանքների ներկայացումը հետազոտողներին հնարավորություն է տալիս ամփջականորեն շփվել մասնակիցների հետ, պատասխանել նրանց հարցերին:

22/05/2025

Երևանի պետական բժշկական համալսարանում մայիսի 18-ին անցկացվեց «Նեյրոգիտության շաբաթ-2025» միջոցառման երրորդ օրը: Այդ օրը կենտրոնացած էր մարդու ուղեղի և նյարդահոգեբանական գործընթացների առավել նուրբ և զգայուն կողմերի վրա՝ սկսած մանկական նյարդահոգեբանական զարգացումից մինչև հուզական կարգավորում, թվային միջավայրում վարքի փոփոխություններ, սթրեսի ազդեցություն և կոգնիտիվ վերափոխումներ:

Երրորդ օրը գիտաժողովին մասնակցում էին առաջատար մասնագետներ Ռուսաստանից, Նիդերլանդներից, Նորվեգիայից, Չինաստանից և այլ երկրներից: Նրանք միավորվեցին՝ քննարկելու ուղեղի մասին գիտության ապագայի մարտահրավերներն ու հնարավորությունները, հնչեցրին գեկույցներ՝ տարիքային նեյրոհոգեբանության, վարքագծային նեյրոգիտության, ինչպես նաև կոգնիտիվ զարգացման և նոր տեխնոլոգիաների ազդեցության վերաբերյալ:

Մայիսի 19-ին գիտաժողովը շարունակվեց Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում, որտեղ քննարկվեցին տարբեր թեմաներ՝ գերբաձկան նեյրովարքաբանական մոդելների վրա մինոցիկլինի ուսումնասիրությունից մինչև կարիճի տոքսիններով TRPA1 անցուղիների նեյրոմոդուլյացիան: Օրը շարունակվեց պաստառային գեկույցներով:

Այս հազեցած օրով ավարտվեց «Նեյրոգիտության շաբաթ 2025»-ը, որը դարձավ ոչ միայն գիտական հարթակ, այլև նեյրոգիտական մտածողության մշակութային հարթակ՝ գիտության, արվեստի և մարդկային փորձառության միաձուլմամբ:



BRAIN BEE ARMENIA-Ն ԲԱՑԱՌԻԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԷՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՈՐԱՑՆԵԼՈՒ ԳԻՏԵԼԻՔԸ ՆԵՅՐՈԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԵՊԲՀ «ԲՈՒՐԵՅՆ» կենտրոնի և UWC Դիլիջան միջազգային դպրոցի կողմից համատեղ կազմակերպված Brain Bee Armenia միջազգային մրցույթի եզրափակիչ փուլն է անցկացվել վերջերս:

Մրցույթի հաղթող է ճանաչվել Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական կրթահամալիրի աշակերտուհի Աննա Պողոսյանը, ով կներկայացնի Հայաստանը՝ մրցույթի միջազգային փուլում:

Երկրորդ տեղը զբաղեցրել է Սատլե Գրիսկուտեն՝ UWC Դիլիջան միջազգային դպրոցից, իսկ երրորդ հորիզոնականը՝ Կոնստանտին Թորոսյանը՝ Հայաստանի բրիտանական միջազգային դպրոցից:

Մինչև մրցույթը՝ մասնակից աշակերտների համար կազմակերպվել էին ներդրողության դասընթացներ, որոնք անցկացվել էին ԵՊԲՀ դասախոսների կողմից:

Դասընթացների ընթացքում աշակերտները խորացրել էին իրենց գիտելիքը ուղեղի կառուցվածքի, գործառույթների, նյարդային համակարգի բջիջների, դրանց հաղորդակցության և ներդրողության մի շարք կարևոր թեմաների վերաբերյալ:

Այս տարի մրցույթն անցկացվեց մեր համալսարանում: Եզրափակիչ փուլի առաջին ենթափուլում մասնակիցների իմացությունը ստուգվել է գրավոր թեստի միջոցով, իսկ ամենաբարձր միավորներ հավաքած տասը աշակերտ մասնակցել է երկրորդ՝ բանավոր ենթափուլին:

Բացի մրցութային փուլերից՝ աշակերտներին ընձեռվեց հնարավորություն շրջայց կատարել «ԲՈՒՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի լաբորատորիաներում և ծանոթանալ իրականացվող գիտական ծրագրերին:

Նշենք, որ Brain Bee Armenia-ն բացառիկ հնարավորություն էր դպրոցականների համար՝ խորացնելու գիտելիքները ներդրողության ոլորտում:

Շնորհավորում ենք հաղթողին և մաղթում հաջողություն միջազգային փուլում՝ պատվով ներկայացնելու Հայաստանը:



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ, ՈՐԸ ԿՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՂԱԴԻՐԻՉԸ

ԵՊԲՀ նորմալ անատոմիայի ամբիոնը և «ԲՈՐԲԵՅՆ» կենտրոնը համատեղ մեկնարկել են նոր հետազոտական նախագիծ, որը կմիավորի առաջատար տեխնոլոգիաները և կրթական բաղադրիչը:

Հետազոտության նպատակը վիրտուալ իրականության (VR) տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության գնահատումն է նորմալ անատոմիայի դասավանդման մեջ: Հետազոտության ընթացքում գնահատվում են վիրտուալ իրականության ազդեցությունը ուսանողների ըմբռնման, գիտելիքների պահպանման և տարածական կողմնորոշման վրա:

Նախագծի թիրախ խումբը բժշկական բուհի առաջին կուրսի ուսանողներն են:

Սա հետաքրքիր հնարավորություն է՝ միավորելու ժամանակակից տեխնոլոգիաները բժշկական կրթության հետ և բացահայտելու նոր մեթոդների առավելությունները: Նախագիծն իրականացվում է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի Նորարարությունների մրցակցային հիմնադրամի շրջափուլով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Ուղեղի վիզուալիզացիայի լաբորատորիա» (ՈԻՎԼ) դրամաշնորհային ծրագրի շրջանակում:



ԿՈՆՖԵՐԱՆՍ ՆՎԻՐՎԱԾ ԴՆԹ-Ի ՕՐՎԱՆ

Ապրիլի 25-ին անցկացված՝ ԴՆԹ-ի օրվան նվիրված կոնֆերանսում (DNA Day Conference) բժշկական գենետիկայի ամբիոնի և բժշկական գենետիկայի և հազվադեպ հիվանդությունների հայկական ասոցիացիայի առաջատար մասնագետները հանդես եկան գիտականորեն հագեցած զեկուցումներով:

Նրանք կիսվեցին գիտելիքով, հետազոտական փորձով և գենետիկայի ոլորտի ժամանակակից զարգացումներով՝ ընդգծելով այս գիտության կարևոր դերն առողջապահության մեջ:

Միջոցառումը նաև ուղեկցվեց ինտերակտիվ վիկտորինաներով, որոնց ընթացքում մասնակիցները փորձեցին իրենց ուժերը գիտելիքի մրցույթում:

Հաղթողները ստացան նվերներ՝ ակտիվ մասնակցության համար: Ավարտին բոլոր մասնակիցները հեռացան նոր իմացությամբ, հաճելի տպավորություններով և մեծ ոգևորությամբ՝ ապագայի ձեռքբերումների հանդեպ:



«ՄՏՈՐԻՆ ՎԵՐՋՈՒՅԹԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ-2025» ԿՈՆՖԵՐԱՆՍԸ



• недостаточно глубокий или широкий carter-box + импланция тестового или самого компонента
• чрезмерно глубокое пропиливание этой зоны
• медиализация бедренного компонента
• наиболее часто: переломы медиального мыщелка
• Aiden K.J. и соавторы, 2009, Lombardi A.V. и соавторы, 1995

Երևանի պետական բժշկական համալսարանում ապրիլի 25-ին մեկնարկեց «Ստորին վերջույթի վնասվածքներ-2025» թեմայով երկօրյա կոնֆերանսը, որի ընթացքում ոլորտի հայ և արտասահմանցի մասնագետները հանդես եկան կարևոր և արդիական թեմաներով զեկույցներով՝ ներկայացնելով իրենց փորձն ու գիտելիքը ստորին վերջույթների վնասվածքների վերաբերյալ:

«Հերացի» համալսարանական հիվանդանոցի վնասվածքաբանության և օրթոպեդիայի կլինիկայի ղեկավար, ԵՊԲՀ վնասվածքաբանության և օրթոպեդիայի ամբիոնի դասախոս Արմենակ Բոդյանի խոսքով՝ շատ կարևոր է փորձի փոխանակումը՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսանկյունից:

«Աշխարհում այս ոլորտում նորագույն մեթոդներ են կիրառվում: Այսպիսի կոնֆերանսները բացում են ինֆորմացիոն դաշտը, քանի որ ընդգրկված են մասնագետներ

ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից: Ստորին վերջույթի վնասվածքները բազմաբնույթ են. դրանց բուժման մոտեցումները հիմնականում ընդհանուր են, սակայն կան նաև անհատական տարբերակներ: Հանդիպման նպատակն էր համեմատել դրսի և տեղական փորձը», - նշեց նա՝ հավելելով, որ մասնագիտության մեջ նորագույն մեթոդներին ծանոթանալը չափազանց կարևոր է:

Կլինիկայի ղեկավարը շեշտեց, որ համալսարանական հիվանդանոցը հազեցած է անհրաժեշտ սարքավորումներով, իսկ մասնագետները տիրապետում են աշխարհի նորագույն բուժման մեթոդներին:

«Վերապատրաստումներն անընդհատ են, և տեխնիկական հազեցվածությանը մենք չենք զիջում առաջատար կլինիկաներին», - հավելեց Արմենակ Բոդյանը:

ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր Կոնստանտին Ենկոյանը ռեկտոր Արմեն Մուրադյանի անունից ողջունեց վիրաբույժ-վնասվածքաբաններին, որոնք բժշկական բուհի հարկի տակ մասնակցում էին միջոցառմանը:

«Քննարկվող թեմաներն ունեն կարևոր գիտագործնական նշանակություն: Այսօր կտրվելով ձեր առօրյայից՝ համալրում եք գիտելիքի այն պաշարը, որն այստեղ միայնակ հետ կիսելով կհարստացնեք և վիրաբույժ-վնասվածքաբաններին համալրումներով», - նկատեց նա՝ մասնագետներին մաղթելով արդյունավետ աշխատանք:



Վերջույթների վերականգնման և երկարացման կենտրոնի (ԵՎՎԵԿ) հիմնադիր-ղեկավար օրթոպեդ-վնասվածքաբան Արշակ Միրզոյանը կարևորելով միջոցառումը՝ շեշտեց, որ ոլորտի մասնագետներն իրարից շատ բան ունեն սովորելու հենավելով միմյանց փորձի վրա: «Այսօրվա միջոցառումը կնպաստի Հայաստանի օրթոպեդների և վնասվածքաբանների ասոցիացիայի զարգացմանը», - հույս հայտնեց նա:

«Էրեբունի» բժշկական կենտրոնի վասսվածքաբանության և օրթոպեդիայի բաժանմունքի ղեկավար Գագիկ Բդոյանը շեշտեց, որ սա այն հարթակն է, որտեղ պետք է բարձրաձայնվեն մասնագետներին հուզող բոլոր խնդիրները՝ բարձրացնելով մասնագիտական մակարդակը:

Երկօրյա կոնֆերանսի առաջին զեկույցը ներկայացրեց Մոսկվայի թիվ 31 քաղաքային կլինիկական հիվանդանոցի վասսվածքաբանության և օրթոպեդիայի բաժանմունքի վարիչ Անդրեյ Միրոնովը: Նա խոսեց պոլիտրավմայով պացիենտների բուժման ժամանակակից մոտեցումների մասին, որի հիմնական պատճառներից են ճանապարհատրանսպորտային պատահարները, բարձրությունից ընկնելը, արդյունաբերական վթարները, սպառազինության կամ պայթյունների հետևանքները (ռազմական ոլորտում՝ «մարտական պոլիտրավմա»):

«Բժշկական անձնակազմի գլխավոր խնդիրը տուժածի կյանքի պահպանման առաջնային միջոցառումների իրականացումն է, որին հաջորդում է մասնագետների թիմային համակցված աշխատանքը», - ընդգծեց վասսվածքաբան-օրթոպեդը:

Մոսկվայի Ֆ. Ի. Ինոզենցի անվան քաղաքային կլինիկական հիվանդանոցի (ԴԿԵ №36) վասսվածքաբանության և օրթոպեդիայի բաժանմունքի վարիչ Արտակ Չարչյանը ոլորտի ներկայացուցիչների հետ կիսվեց պոլիտրավմայով պացիենտների մոտ ազդրոսկրի կոտրվածքների բուժման առանձնահատկություններով, ներկայացրեց կոնքի օղի անկայուն վասսվածքների և ազդրոսկրի պրոքսիմալ հատվածի միջային կոտրվածքների վիրաբուժական մարտավարությունը:

«Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի օրթոպեդիայի և վասսվածքաբանության ծառայության ղեկավար Ատոմ Տեր-Գրիգորյանը հանդես եկավ զեկույցով՝ նվիրված կոնքի ոսկրերի կոտրվածքների բուժման մինի-ինվազիվ օստեոսինթեզի հնարավորություններին: Ներկայացրեց բարդ կլինիկական դեպքեր՝ բուժման բարենաջող ելքերով:

Ստորին վերջույթների վասսվածքների համալիր անեսթեզիոլոգիական միջոցառումների մասին խոսեց «Սլավնեդ» բժշկական կենտրոնի անեսթեզիոլոգ-ռենսիմատոլոգ Յուրի Խաչատուրյանը, իսկ «Աստղիկ» բժշկական կենտրոնի կրծքային վիրաբուժության ծառայության ղեկավար Շահեն Դանիելյանը՝ Հայաստանում վասսվածքների վիրաբուժական հսկողություն դասընթացների վերաբերյալ:

«Ստորին վերջույթի վասսվածքներ 2025» թեմայով երկօրյա կոնֆերանսով Հայաստանի օրթոպեդների և վասսվածքաբանների ասոցիացիան վերսկսում է իր ակտիվ գործունեությունը: Միջոցառման ընթացքում շեշտվեց կառուցիկ դերը, որը միավորում է մեր երկրի օրթոպեդներին և վասսվածքաբաններին՝ նպատակ ունենալով բարելավել օրթոպեդիկ բժշկական ծառայությունների որակը մեր երկրում:

Հազեցած միջոցառումը շարունակեց աշխատանքը նաև հաջորդ օրը՝ անդրադառնալով մի շարք մասնագիտական թեմաների:



ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Համալսարանական երեք հիվանդանոցների 2024 թվականի գործունեության հաշվետվությունն էր ապրիլի 30-ին հրավիրված գիտական խորհրդի նիստում հիմնական քննարկվող նյութը:

Ձեռքբերումներից մինչև խնդիրներ ու անելիքներ՝ վերջին մեկ տարվա կտրվածքով ներկայացրեց կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Մինայանը:

ԵՊԲՀ-ի կազմում գործող «Հերացի», «Մուրացան» և «Միքայելյան» հիվանդանոցային համալիրները բազմապրոֆիլ վիրաբուժական և թերապևտիկ ծառայություններով բուժհաստատություններ են: Համալսարանական հիվանդանոցների կազմում գործում է երկու առողջության առաջնային պահպանման պոլիկլինիկա, ինչպես նաև՝ հանրապետական նշանակության նորածնային վերակենդանացման, բժշկական գենետիկայի, մանկական էնդոկրինոլոգիայի, մանկական թունաբանության և մուկովիսցիդոզի կենտրոններ:

«Ուսումնասիրելով վերջին տարիների համալսարանական հիվանդանոցների բուժական գործունեությունը, կարելի է արձանագրել, որ նախորդ տարվա համեմատ երեք հիվանդանոցում նկատվել է ստացիոնար պացիենտների ընդհանուր թվի 9,2% աճ», - թվային տվյալներով հազեցած էլույթում ասաց պրոֆեսոր Մինայանը:

2023 թվականին երեք հիվանդանոցները ամբողջապես կարգով սպասարկել են 103862 պացիենտ, իսկ 2024 թվականին՝ 121882, ինչը 17,3%-ով ավել է նախորդ տարվանից:

Շտապ օգնությամբ դիմելիությունը «Հերացի» և «Միքայելյան» հիվանդանոցներ նույնպես ավելացել է, կազմելով 8,4%-ով: 2024 թվականին 1,5 %-ով նվազել են նորածնային վերակենդանացման կլինիկայի սանավիագիայի ծառայության կողմից Երևանում սպասարկված կանչերը՝ կազմելով 127 կանչ, մինչդեռ ժամանակ 2%-ով ավելացել է մարզերի կանչերի քանակը՝ կազմելով 545 կանչ: Սանավիագիայի ծառայության կողմից կանչերի թիվը նշված ժամանակահատվածում 672-ն է:

Ընդհանուր առմամբ երեք հիվանդանոցներում աճել է վիրահատությունների ընդհանուր թիվը: Երեք հիվանդանոցներում ընդհանուր բուժաշխատողների թիվը 2024թ. կազմել է 1910, որից բժիշկ՝ 716, բուժքույր՝ 682:

Այս առնչությամբ հարց հղեց ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը՝ հետաքրքրվելով, թե բժիշկների քանի տոկոսն է ուսումնական պրոցեսի մեջ ներգրավված:

Համալսարանական հիվանդանոցների կրթելու առանձնահատկությունը որպես չափորոշիչ ձևավորելն ու դիտարկելը նա առանձնակի կարևորեց: Թեմայի շուրջ էլույթներ ունեցան նաև հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գառնիկ Ավետիսյանը և գիտության գծով պրոռեկտոր Կոնստանտին Եսկոյանը:

Հաջորդիվ՝ կլինիկական աշխատանքների գծով պրո-

ռեկտորն ուսումնական գործընթացին անդրադառնալով նշեց, որ համալսարանում «Բուժական գործ» և «Մտումատուլոգիա» կրթական ծրագրերի կլինիկական ամբիոնների դասապրոցեսը կազմակերպվում է համալսարանական երեք հիվանդանոցներում և համալսարանի հետ պայմանագրեր կնքած 29 բժշկական կազմակերպությունում:

Փաստացի՝ 3-6-րդ կուրսի ավելի քան 3000 ուսանողների շուրջ 60%-ը (1839 ուսանող) 1 օրվա ընթացքում հաճախում է համալսարանական հիվանդանոցներ:

«2023 թվականից ռեկտորի հանձնարարությամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ մշակվել է ամառային պրակտիկայի անցկացման, ինչպես նաև գործնական հմտությունների դասավանդման նոր մոդել: Այս փոփոխությունը հանգեցրեց նրան, որ ամառային շրջանում պրակտիկ հմտությունների դասավանդման ձևաչափը փոխարինվեց ուսումնական տարվա ընթացքում դասավանդման մոդելով: Արդյունքում՝ համալսարանի «Բուժական գործ» կրթական ծրագրով նախատեսված գործնական հմտությունների դասավանդման նոր ձևաչափով այն իրականացվում է բացառապես համալսարանական հիվանդանոցներում», - նկատեց Արմեն Մինայանը՝ հավելելով, որ նման փոփոխություններ նախատեսվում են նաև «Մտումատուլոգիա» և «Ֆարմացիա» կրթական ծրագրերի հավատարմագրման շրջանակում, ինչի կապակցությամբ նախապատրաստական աշխատանքներ են տարվում, շարունակվում են ուսանողների կամավորական աշխատանքները համալսարանական բժշկական հաստատություններում և համալսարանական կլինիկաների միջազգային համագործակցությունն արտերկրյա այլ առաջատար կլինիկաների հետ:

Ընդգծվեց, որ 2024 թվականի ապրիլին տեղի ունեցավ հայ-գերմանական «Սրտային անբավարարության գարնանային դպրոց» առաջին գիտաժողովը՝ «Հերացի» համալիրի և Գերմանիայի Մագդեբուրգի համալսարանական հիվանդանոցի սրտաբանության և անգիոլոգիայի կլինիկայի հետ համատեղ:

Համագործակցության շրջանակում 4 սրտաբան և 2 սրտաբանության ոլորտի բուժքույր մասնագիտական կատարելագործում անցան Մագդեբուրգի համալսարանական կլինիկայում:

Սրանով ամրապնդվեցին նաև հետագա համագործակցության հիմքերը: 2024թ. նոյեմբերին տեղի ունեցավ հայ-գերմանական ուռուցքաբանության դպրոցի 6-րդ հանդիպումը «Միքայելյան» վիրաբուժության ինստիտուտի ընդհանուր ուռուցքաբանության ամբիոնի և Գերմանիայի Մյունսթերի համալսարանական կլինիկայի հետ համատեղ:

Քննարկվեցին ուռուցքաբանության ոլորտի բազմաթիվ արդի հարցեր: 2024թ. հունիսին «Մուրացան» համալիր այցելեցին մանկաբուժության և դեռահասների բժշկության գերմանական ասոցիացիայի 3 մանկաբույժ պրոֆեսորներ, որոնք կիսեցին իրենց փորձը մեր մասնագետների հետ:



2025թ. փետրվարին կատարվեց կրկնակի այց:

Շարունակվում է «Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիրի և Շվեդիայի Յոնշոփինգի Ռիհով հիվանդանոցի հետ սերտ համագործակցությունը: 2024թ.-ի ընթացքում 5 բժիշկներ մասնագիտական կատարելագործում անցան նշված հիվանդանոցում: Այս համագործակցությունը արդեն ավանդույթ է դարձել:

Պրոռեկտորն անդրադարձավ նաև ֆինանսական գործունեությանը՝ տեղեկացնելով, որ ավելացել է «Հերացի» և «Մուրացան» հիվանդանոցների պետական պատվերի քույզն:

Նույն երկու հիվանդանոցում աճել են վճարովի ծառայությունները:

Համալսարանական կլինիկաների կողմից իրականացված այլ ծրագրերի մասին խոսելով՝ գեկուցողը նկատեց, որ 2023 թվականի ապրիլին գիտական խորհրդի որոշմամբ ամրագրված ծրագրի դրույթներից նպատակ էր դրվել մշակել համալսարանական հիվանդանոցներում կառուցվածքային, կազմակերպչական բարեփոխումներ և աշխատավարձի վարձատրման նոր մեխանիզմներ:

Այսպիսով՝ 2024 թվականի ընթացքում կատարվել են բազմաթիվ բարեփոխումներ, որոնց արդյունքում ոչ միայն վերակազմակերպվել և ստեղծվել են նոր կառուցվածքային ստորաբաժանումներ, այլև ավելացվել են նոր հաստիքներ և կրճատվել մի շարք հաստիքային միավորներ:

ԵԳԲՀ-ում կլինիկական հետազոտությունների կարողությունների բարելավման նպատակով գիտական մասի հետ համատեղ իրականացվել է ոլորտի բացերի ուսումնասիրություն:

2024-2025թթ. գիտակրթական հետազոտական աշխատանքների միասնական հարթակ ստեղծելու նպատակով իրականացվել են մի շարք քայլեր:

«Միքայելյան» հիվանդանոցում հաջողությամբ ավարտին է հասցվել երեք համալսարանական հիվանդանոցների միասնական լաբորատորիայի գործարկման աշխատանքները:

Միասնական լաբորատորիայում նախատեսվում է իրականացնել երեք հիվանդանոցների լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունները: Աշխատանքները կատարվում են փուլային կարգով: Համալսարանական երեք հիվանդանոցների գործող լաբորատորիաները արդեն ստացել են որակի հավատարմագիր՝ համաձայն ՀՀ կառավարության որոշման պահանջների և արդեն գործում են որպես հավատարմագրված լաբորատորիաներ:

րատորիաներ:

«Միքայելյան» հիվանդանոցի լաբորատորիան ստացել է որակի միջազգային ISO հավատարմագիր: Ավարտված է նաև «Հերացի» լաբորատորիայի թվայնացման գործընթացը:

Ընթացքում են «Մուրացան» և «Միքայելյան» հիվանդանոցների լաբորատորիաների թվայնացման գործընթացները:

Այս ամենին զուգահեռ՝ պրոռեկտորը հանգամանակից անդրադարձավ նաև հիվանդանոցների զարգացման ծրագրերի կատարողականին: Ամփոփելով, նա փաստեց, որ առաջիկայում ծրագրված աշխատանքները ևս քիչ չեն:

Դրանց թվում է համալսարանական կլինիկաներում ISO 9001:2015 կառավարման որակի չափորոշիչների ներդրումը, կլինիկաների թվայնացման գործընթացի շարունակումը:

Գիտակլինիկական հետազոտական աշխատանքների միասնական հարթակի կայացման գործընթացին, վերազինման, մի շարք այլ կարևոր պրոցեսներին զուգընթաց առանցքային է լինելու նաև ստումատոլոգիական ծառայությունների բարեփոխումների ծրագիրն ավարտին հասցնելը (2025-2027թթ):

Լսելով ծավալուն գեկույցը՝ Արմեն Մուրադյանը փաստեց, որ որակական ցուցանիշները բուժական հատվածում տեսանելի են հատկապես ապագա բժիշկների, ուսանողների համար:

Նա բարձր գնահատեց բուժաշխատողների սվիրումն ամենօրյա աշխատանքին:

Օրակարգում ներառված հարցերի համաձայն, գիտական խորհրդի հաստատմամբ ընդհանուր բժշկության ֆակուլտետում կսահմանվի վիրաբուժության թիվ 1 ամբիոնի բազմամյա պրոֆեսոր Վիկտոր Թադևոսի Ափոյանի անվան կրթաթոշակ:

Հարցը գեկուցեց նումինացիոն կոմիտեի նախագահ Վլադիմիր Շեկոյանը:

Առաջարկն ու նախաձեռնությունը նույն ամբիոնի ներկայիս ղեկավար, պրոֆեսոր Մուրեն Ստեփանյանին է: Մայիսին մեծանուն բժիշկ-գիտնականի 95-ամյա հոբելյանն է:

«Ամփոփիչ ատեստավորման մասին» կանոնակարգի փոփոխությունը հաստատվեց ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լարիսա Ավետիսյանի, իսկ «Անձնակազմի և մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կանոնակարգը»՝ անձնակազմի և մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետ Վարազդատ Դանիելյանի ներկայացմամբ:

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՐԹԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ



Մայիսին կայացած գիտական խորհրդի նիստում ԵՊԲՀ խորհրդատու-պրոֆեսորի պատվավոր կոչման արժանացան ևս երեք վաստակաշատ մասնագետներ:

Հետրուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գառնիկ Ավետիսյանի փոխանցմամբ՝ հիմք ընդունելով երկար տարիների ավանդն ու ներդրումը թե՛ բժշկական կրթության, թե՛ միջին բուժանձնակազմի շարունակական կրթության, թե՛ մասնագիտական բնագավառում երկարամյա աշխատանքը, նումինացիոն կոմիտեն որոշում է կայացրել այս ներկայանալի կոչումը շնորհել բժշկական գիտությունների դոկտոր, ԵՊԲՀ քույրական գործի կազմակերպման ամբիոնը երկար տարիներ ղեկավարած Ալինա Քուշկյանին, մանկական վիրաբուժության ամբիոնի դոցենտ, «Մուրացան» հիվանդանոցի մանկական վիրաբուժական հիվանդությունների կլինիայի ղեկավար Նիկոլայ Դավաթյանին և միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, դատական բժշկության ամբիոնի դոցենտ Երվանդ Սահակյանին:

Երեք պարգևատրվածների մասին խոսք հղեց ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը՝ ընդգծելով, որ լինում են դեպքեր, երբ կլինիկական գործունեության մեջ դառնում են պրոֆեսոր մինչ այդ կոչումը ստանալը, ավաղ՝ կա նաև հակառակը:

«Տիկին Քուշկյանը, ինչպես գիտեք, երկար տարիներ աշխատել է մեզ հետ՝ նվաճելով ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի բարձր հեղինակությունը և տարիների իր ավանդը փաստացի չի հասցրել ամփոփել: Համոզված եմ, որ հետագայում մայր բուհի հետ նա կպահի իր աշխատանքային և գործընկերային կապերը: Երկրորդ նումինանտը՝ Նիկոլայ Դավաթյանը, երկար տարիներ գլխավորել է մանկական ամենաձանրաբեռնված բուժհաստատություններից մեկը, նա մանկական վիրաբուժության մեջ իր մեծ ավանդն ունի և այս պահին շարունակում է իր աշխատանքը «Մուրացան» համալիրում՝ որպես կլինիկայի ղեկավար: Այս կոչումը թույլ կտա անհամեմատ ավելի մեծ բնագավառներ ձևավորել՝ հաշվի առնելով, որ հունիսի սկզբից մեկնարկելու է «Մանկաբուժության դպրոց» կրթական ծրագիրը համալսարանական մանկական հիվանդանոցում: Տարիներ շարունակ մենք պատրաստվել ենք այս իրադարձությանը: Համոզված եմ, որ իր վիթխարի փորձով և բարձր հեղինակությամբ Նիկոլայ Դավաթյանը կնպաստի այդ դպրոցի զարգացմանը: Իր կողմից բուժված երեխաները ոչ միայն ծնող են, այլև արդեն նրանց երեխաներն են սերունդ մեծացնում», - ասաց ռեկտորը՝ շեշտելով, որ ԵՊԲՀ այս կոչումը տասնամյակների ծառայությունը հավուր պատշաճի գնահատելու հնարավորություն է:

«Դժվար է թերագնահատել Երվանդ Սահակյանի այն վիթխարի դերակատարումը, որ նա ունեցել է իր աշխատանքի ընթացքում, այն բեկումնային փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել առհասարակ կրթական ոլորտում, երբ Երվանդ Սահակյանի առաջիններից էր, որն այլոց հետ հիմքեր դրեց բժշկական կրթության արտահանման համար: Միջազգային հավատարմագրման գործընթացի ջատագովն ու շարժիչ ուժը հանդիսացել է Երվանդ Սահակյանը: Այսօր մենք աշխատում ենք հավատարմագրված բուհում, երբ արագ զարգացող իրականության մեջ շատ դժվար է կանոնակարգվում բժշկական կրթությունը», - նշեց Արմեն Մուրադյանը՝ ավագ գործընկերոջը մաղթելով համալսարանականամետ գործունեության շարունակություն:

Երյթներ ունեցան նաև կոչումներ ստացողները՝ շնորհակալություն հայտնելով կոլեգաներին անցած ճանապարհի նման բարձր գնահատականի համար, որը պարտավորեցնող է:

Համալսարանի հետրուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գառնիկ Ավետիսյանի 2024-2025 թվականների հաշվետվությունը նիստի գլխավոր հարցերից էր:

«Կլինիկական օրդինատուրա» կրթական ծրագրով և պետական պատվերի շրջանակներում և վճարովի հիմունքներով շարունակվում է իրականացվել կլինիկական օրդինատուրայի կրթական պրոցեսը:

Հետբուհական մասնագիտական կրթության ընդունելությունը նշված ուսումնական տարում ներկայացնելով՝ նա նշեց, որ պետական պատվերի շրջանակում ընդունվել է 110 կլինիկական օրդինատոր և ինտերն: 2021-2023 և 2023-2025 թվականների համեմատ փոփոխվել է նախընտրելի մասնագիտությունների առաջին հնգյակը, որտեղ մանկաբարձությունը տեղը զիջել է ընտանեկան բժշկությանը, ինչը պրոռեկտորը ոգնունելի համարեց:

Մանկաբարձությանը նախորդում է ճառագայթային ախտորոշումը, մաշկաբանությունը, կլինիկական լաբորատոր ախտորոշումը և սրտաբանությունը:

«Համեմատելիս փոփոխություն է եղել ընդամենը մեկ մասնագիտության մասով, որը բավականին ուրախալի երևույթ է, այստեղ ընդահանուր հինգ մասնագիտությունների բաշխվածությունը փոքրացել է ամբողջ 100 տոկոս մասնագիտությունների բաշխվածության մեջ: Այլ կերպ ասած՝ կլինիկական օրդինատուրա ընտրողները տարածվել են մնացած մասնագիտությունների մեջ: Բժշկական համալսարանի կլինիկական օրդինատուրա բոլոր մասնագիտություններով ընդունվել է 753 դիմորդ, որոնցից ընդամենը 38-ն են ոչ պետական բուհերի շրջանավարտներ», - ոչ պետական բուհերից ընդունելության ցուցանիշների 2022-2024 թթ. համեմատական նկարագրի մասին խոսելիս նկատեց Գառնիկ Ավետիսյանը:

Կլինիկական օրդինատորների շրջանում 2019 թվականից մեկնարկած հարցումները շարունակվում են:

3026 հարցվածից՝ «Որքան արդի էք գնահատում օրդինատուրան ԵՊԲՀ-ում» հարցին՝ 88.2 տոկոսը «գերազանց» և «լավ» գնահատականն է տվել:

Հետբուհական կրթություն ստացողները պատասխանել են նաև տեսական և գործնական գիտելիք, ինչպես նաև հարակից կուրսերին՝ մոդուլներին վերաբերող հարցերին, այս ցուցանիշներում ևս որակական փոփոխությունները կրթության պատասխանատուների համար հարցման միջոցով տեսանելի են:

ՇՄՁ կրեդիտավորված դասընթացների ընդհանուր թիվը բուհում 422-ն է, որից 218-ը՝ միայն 2024-ին է հաստատվել:

Փաստացի՝ միջին և ավագ 3987 բուժաշխատող է մասնակցել համալսարանական հավաստագրված դասընթացներին:

«Բժշկական համալսարանն ամենաշատ թվով հավաստագրված դասընթացներ իրականացնող կրթական հաստատությունն է», - տեղեկացրեց պրոռեկտորը՝ անդրադառնալով նաև հետբուհական բլոկում ֆինանսական մուտքերին, լրացուցիչ մասնագիտացման և կատարելագործման դասընթացներին, որոնց մասնակցողների թիվը նույնպես աճել է՝ կազմելով 3987:

Եզրափակելով՝ պրոռեկտոր Ավետիսյանը տեղեկացրեց, որ ԵՊԲՀ-ն գնում է Հետբուհական կրթական ծրագրի կլաստերային ծրագրային հավատարմագրման:

Օրակարգի համաձայն տեղի ունեցավ ԵՊԲՀ պրոֆեսորադասախոսական կազմից համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամների ընտրություն: Լրացել է գործող հոգաբարձուների խորհրդի լիազորությունների ժամկետը և համաձայն կանոնադրության առաջադրվեցին նոր թեկնածուներ, որոնք ընտրվեցին գիտական խորհրդի կողմից:

Ընտրված հինգ թեկնածուն հաջորդիվ կներկայացվեն լիազոր մարմնին՝ հետագա հաստատման նպատակով:

«ՀՀ բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագիծը վերջերս հավանության է արժանացել ՀՀ կառավարության նիստում և առաքվել է Ազգային ժողով՝ սահմանված կարգով ընթացք տալու նպատակով: Նկատի ունենալով, որ կան քննարկման ենթակա մի շարք հարցեր, գիտական խորհրդում քննարկվեցին նախագծով առկա կարգավորումները, վեր հանվեցին առանձին խնդիրներ և ներկայացվեցին առաջարկություններ, որոնք փաթեթով կփոխանցվեն հետագա լրանշակման ակնկալիքով:

Հաջորդիվ հաստատվեցին գիտական խորհրդի որոշումներից մեկում լրացումներ, ինչպես նաև գիտակորդինացիոն խորհրդի կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցերը:

Շուրջ երեք ժամ տևողությամբ նիստում համալսարանականները քննարկված բոլոր հարցերի շուրջ տեսակետներ հնչեցրին, կարծիքներ հայտնեցին:

Ռեկտորը օրենքի նախագծի քննարկումը համարեց առարկայական, որը հնարավորություն տվեց բոլոր հետաքրքրող կետերին հիմնավոր պատասխաններ տալ:



ԵՐԿՕՐՅԱ ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍ



Մայիսի 22-ին և 23-ին անցկացվեց «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրման, ախտահանման, նախամանրէագերծման և մանրէագերծման գործընթացները, բուժաշխատողների մասնագիտական վստահության կանխարգելման միջոցառումները» թեմայով վարպետաց դաս, որին մասնակցում էին բժիշկ-համաճարակաբաններ, բժիշկ-կոսմետոլոգներ, ստոմատոլոգներ, բուժքույրեր:

Երկօրյա վարպետաց դասի նպատակն էր ուսուցանել բուժաշխատողներին բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրման, ախտահանման, նախամանրէագերծման և մանրէագերծման ընթացակարգերը և դրանց որակի գնահատման գործընթացները, ինչպես նաև նշանակությունը՝ բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների կանխարգելման գործում, տիրապետել բուժաշխատողների մասնագիտական վստահության կանխարգելման միջոցառումներին:

«Հերացի» վերլուծական կենտրոնի ղեկավար, համաճարակաբանության ամբիոնի վարիչ Մերի Տեր-Ստեփանյանի խոսքով՝ դասընթացի հիմքում գործնականում բժշկական նշանակության արտադրատեսակների կամ գործիքների մշակումը սովորեցնելն է, ինչը բուժքույրերի պրակտիկայում ամենակարևոր, բայց ամենացավոտ կետերից է: «Մինչև 2015 թվականը մենք չունեինք գործիքների մշակման վերաբերյալ միասնական սանիտարական նորմ: Միասնական մոտեցումը Հայաստանում ձևավորվեց 2015 թվականից հետո: Այն հետագայում փոփոխության ենթարկվեց, 2022 թվականին վերահաստատվեց», – տեղեկացրեց մասնագետը:

Վարպետաց դասը կենտրոնացավ նաև ոչ բժշկական կազմակերպությունների վրա, որոնք ինվազիվ էսթետիկ միջամտություններ են կատարում: «Իրանք կարող են լինել եղունգի մշակումները, տարբեր էսթետիկ ներարկումները, որոնք նույնպես պահանջում են ստերիլություն: Եվ եթե բուժքույրը որոշակիորեն տեղեկացված է, կրթված է, ապա մյուս դաշտը բավականին բաց է: Մեր թիրախը նաև այս դաշտի ներկայացուցիչներն են: Սա պահանջում է շարունակական կրթություն, քանի որ ոչ ոք ապահովագրված չէ. որտեղ կա մարդկային գործոն, այնտեղ միշտ կա սխալի հավանականություն», – հավաստիացրեց Մերի Տեր-Ստեփանյանը: Նրա զեկույցները կրում էին «Բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանման և նախամանրէագերծման գործընթացները, նախամանրէագերծման որակի ստուգիչ փորձի կատարում, արդյունքների գնահատում», «Բուժաշխատողների մասնագիտական վստահության կանխարգելման միջոցառումներ» և «Ախտահանման և մանրէագերծման որակի ներքին հսկողությունը ստացիոնար, առողջության առաջնային պահպանման և ստոմատոլոգիական բժշկական կազմակերպություններում» խորագրերը:

Հաջորդ բանախոսը համաճարակաբանության ամբիոնի ավագ դասախոս Նաիրա Մելքոնյանն էր. «Բժշկական նշանակության արտադրատեսակների դասակարգումը ըստ վտանգավորության աստիճանի, բաղարկում, ապաբաղարկման մակարդակները» զեկույցի շրջանակում նա առաջին հերթին սահմանեց, թե ինչ է բժշկական նշանակության արտադրատեսակը, ապա անդրադարձավ «Բաղարկում» տերմինին:

«Բաղարկումը կոնտամինացիան է, այսինքն՝ վարակային, օրգանական կամ քիմիական ցանկացած գործոնի առկայությունը շրջակա միջավայրի իրերի մակերեսներին կամ բժշկական նշանակության արտադրատեսակների մակերեսներին, ինչպես նաև օրգանների հյուսվածքների խոռոչների վրա: Հետևաբար տրամաբանորեն ապաբաղարկումը կլինի այդ մակերեսներից նշված գործոնների հեռացումը կամ ոչնչացումը», – նշեց մասնագետը:

Նա ներկայացրեց ապաբաղարկ-

ման երեք հիմնական նպատակները՝ պացիենտի անվտանգություն, բուժաշխատողի անվտանգություն և շրջակա միջավայրի փոխազդեցություն, մանրամասնորեն անդրադարձավ ապաբաղարկման հիմնական եղանակներին՝ մաքրում, ախտահանում, նախամանրէագերծում և մանրէագերծում՝ ուշադրություն հրավիրելով յուրաքանչյուր փուլի հիմնական էությունը, նշանակությանը, տեսակներին:

Նաիրա Մելքոնյանը խոսեց նաև բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրման գործընթացի, թույլատրելի մաքրող միջոցների, ինչպես նաև բժշկական նշանակության արտադրատեսակների մանրէագերծման գործընթացների, մանրէագերծման ֆիզիկական, քիմիական եղանակների, մանրէագերծման որակի հսկողության զգայորոշիչների կիրառման մասին:

Համաճարակաբանության ամբիոնի դոցենտ, հիգիենիկ և հակահամաճարակային բաժնի պետ Կարինե Պողոսյանը հանդես եկավ «Գրանցամատյանների վարում» զեկույցով: Գրանցամատյանը, նրա փոխանցմամբ, իրավական փաստաթուղթ է: «Նախատեսված է մե քանի գրանցամատյան. դրանք պետք է լինեն համարակալված, կարված և կնքված», – շեշտեց նա:

Համալսարանական մասնագետը մանրամասնորեն ներկայացրեց գրանցամատյանների լրացման ճիշտ ձևը:

Կարինե Պողոսյանի հաջորդ զեկույցը վերաբերում էր բժշկական կազմակերպության շրջակա միջավայրի մակերեսների մաքրման և ախտահանման գործընթացին, մաքրող պարագաների կիրառմանը:

Դասընթացի մասնակիցները գործնականում իրականացրին բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրման, ախտահանման և նախամանրէագերծման գործընթացները, ստուգեցին թաքնված արյան հետքերի առկայությունը, այսինքն՝ նախամանրէագերծման որակը:

Քննարկվեցին հետաքրքիր դեպքեր, իրավիճակային խնդիրներ, որոնց լուծումն առաջարկեցին հենց իրենք՝ մասնակիցները:

Վարպետաց դասը կրեդիտավորված էր. ավագ բուժանձնակազմին կտրվի 10, իսկ միջին բուժանձնակազմին՝ ՇՄՋ 5 գործնական կրեդիտ:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ՝ «ՀԱԿԱՄԱՆՐԷԱՅԻՆ ՆՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՐՈՆՈՄ ՀԱԿԱԲԻՈՏԻԿԱԿԱՅՈՒՆՆՈՒԹՅԱՆ ԽՆԻԻՐԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ԹԵՄԱՅՈՎ

ԵՊԲՀ բժշկական մանրէաբանության ամբիոնում Erasmus+ ծրագրի շրջանակում կայացավ Իսպանիայի Սանտյագո դե Կոմպոստելայի համալսարանի մանրէաբանության և մակաբուծաբանության ամբիոնի դոցենտ, PhD Տրինիդադ դե Միգելի դասախոսությունը՝ «Հակամանրէային նոր աղբյուրների որոնում հակաբիոտիկակայությունության խնդիրը մեղմելու համար» թեմայով:

Տրինիդադ դե Միգելը Սանտյագո դե Կոմպոստելայի համալսարանի դեղագիտության և բժշկության ֆակուլտետի ընդհանուր մանրէաբանություն և կլինիկական մանրէաբանություն առարկաների պատասխանատուն է, նաև դասավանդում է «Մանրի մանրէաբանություն» մագիստրատուրայում: Բազմաթիվ գիտական հոդվածների և արտոնագրերի հեղինակ է: 2017 թվականից ներգրավված է «Փոքրիկ Երկիր» (իսպաներեն՝ MicroMundo) անվանումով միջազգային ուսումնական ծառայությունների նախագծում, որին մասնակցում են ուսանողներ, գիտնականներ և ուսուցիչներ՝ ամբողջ աշխարհից:

Դեղագիտության դոկտորը համալսարանականներին՝ ապագա բժիշկներին և դասախոսներին ներկայացրեց Սանտյագո դե Կոմպոստելայի համալսարանը, որը հիմնադրվել է 1495 թվականին և ունի հարուստ պատմություն ու ակադեմիական ավանդույթներ:

Չնայած համալսարանի ոչ մեծ չափերին, այն համարվում է Իսպանիայի առաջատար համալսարաններից մեկը: Նշվեց, որ միջազգային ուսանողների համար բաց են բազմաթիվ հնարավորություններ՝ մագիստրոսական, դոկտորական ծրագրերի և «Erasmus» փոխանակման միջոցով՝ հատկապես Հայաստանի ուսա-



նողների համար նախատեսված կրթաթոշակները հաճախ մնում են չօգտագործված:

Հրավիրյալ դասախոսը խոսեց նաև իր գիտական խմբի կատարած աշխատանքների մասին՝ ներկայացնելով մի փորձագիտական նախագիծ, որտեղ ուսումնասիրում են խաղողի և հատուկ բույսերի (օրինակ՝ Cephysoscomparis) պոլիֆենոլները՝ որպես բնական հակաբիոտիկներ:

Դրանք կարող են ոչնչացնել վնասակար բակտերիաները՝ միաժամանակ պաշտպանելով օգտակար միկրոֆլորան, ինչը կարևոր է մարդու իմունային համակարգի համար:

Ներկայացվեցին նաև հետազոտության արդյունքները:

Վերջում Տրինիդադ դե Միգելն ընդգծեց ուսման, հետազոտական նախագծերում ներգրավվելու և Սանտյագոյում ապրելու հնարավորությունները՝ խրախուսելով ուսանողներին՝ օգտվել «Erasmus» ծրագրից և կապ հաստատել համագործակցության համար:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

«Միքայելյան» համալսարանական հիվանդանոցում ամերիկյան Code 3 Life կազմակերպության մենթորների կողմից անցկացվեց առաջին բուժօգնության մասնագետների վերապատրաստման երկօրյա դասընթաց:

Ծրագիրն իրականացվեց բժշկական մայր բուհի և «Հենար» հիմնադրամի համատեղ ջանքերով: Դրա շնորհիվ AHA (American Heart Association) ստանդարտներին համապատասխան կունենանք 6 ինտրուկտոր BLS (Basic Life Support) ծրագրից, իսկ 4 մասնագետ՝ ASLC ծրագրից:

Որակավորում ստանալուց հետո մեր մասնագետները իրենք կանցկացնեն առաջին բուժօգնության վերապատրաստման դասընթացներ ԵՊԲՀ ուսանողների, կամավորների և արտաքին շահառուների համար:

Դասընթացների կազմակերպման վերաբերյալ հայտարարություն կհրապարակվի հետագայում:



ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ



ՀՀ-ում բժշկական որակյալ կադրերի պատրաստման պատասխանատու գործընթացը մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնում անընդհատ է:

Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի չափանիշներին համապատասխան ծրագրային հավատարմագրումը հնարավորություն կտա հետբուհական կրթական ծրագրերը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, ինչպես նաև ճանաչելի կդարձնի շնորհված որակավորումները:

Ներկայումս շրջանավարտների դիպլոմների և շնորհված որակավորումների ճանաչումը միջազգային ասպարեզում պահանջում է ծրագրային հավատարմագրում:

Խոսելով բժշկական համալսարանում թափ առած հավատարմագրման գործընթացի մասին՝ մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնի ղեկավար Սաթենիկ Բաղդասարյանն ընդգծում է, որ այն կոչված է հավաստելու, թե շնորհվող որակավորումները որքանով են արժանահավատ և որքանով են շրջանավարտները ձեռք բերել միջազգային չափանիշներով սահմանված, ինչպես նաև գործատուների պահանջներին համապատասխան կարողություններ: Եվրոպական կրթական տարածաշրջանի երկրներում ծրագրային հավատարմագրումը կարևորված է և հավաստում է որակավորումների արժանահավատ շնորհումը: «Ելնելով այդ հանգամանքից առաջիկայում բժշկական համալսարանի հետբուհական մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնում կփոփոխվեն կրթական ծրագրերի կառուցվածքը, կթարմացվի բովանդակությունը՝ ներառելով համաշխարհային նորությունները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևը և գնահատումը՝ ինչը հնարավորություն կտա ավելի ճիշտ գնահատել գիտելիքներն ու հմտությունները», - ավելացրեց նա:

Սաթենիկ Բաղդասարյանի խոսքով՝ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է առողջապահության բնագավառի մասնագետների հիմնական և լրացուցիչ մասնագիտությունների նոր ցանկը, ինչի արդյունքում

պետք է հաստատվեն հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների բնութագրերը՝ գիտելիքներ, հմտություններ և կոմպետենցիաներ, որից հետո՝ դրանց վրա հիմնված կրթական ծրագրերը:

«Կրթության այս ձևն ավելի ընդունելի ու ճանաչելի է այլ երկրների կողմից: Եթե նախկինում ընդունելությունը կազմակերպվում էր 80-ից ավելի մասնագիտություններով, ապա հիմա կլինի 44 հիմնական մասնագիտություններով կլինիկական օրդինատուրա, որից հետո սովորողները կանցնեն լրացուցիչ մասնագիտացում՝ նեղ մասնագիտացում ձեռք բերելու համար», - շեշտեց նա:

Ներկայացնելով մասնագիտությունները, որոնք ամենապահանջված են ուսանողների կողմից՝ ղեկանն առանձնակի կարևորեց այն մասնագիտությունները, որոնք առավել պահանջված են Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգի կողմից:

«Օրդինատորներին հետաքրքրող մասնագիտությունների առաջին հորիզոնականներում են ճառագայթային ակտորոշումը, պլաստիկ վիրաբուժությունը, մաշկավեներաբանությունը, որին հաջորդում է սրտաբանությունը և այլն: Սակայն, եթե սովորողներն ընտրեն առողջապահության համակարգի կողմից պահանջված մասնագիտությունները՝ մանկաբուժություն, ընտանեկան բժշկություն, այրվածքաբանություն և այլն, ապագա բժիշկներն ավելի արագ կարող են մասնագիտական առաջընթաց ունենալ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում», - համոզմունք հայտնեց մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնի ղեկավարը՝ շեշտելով, որ այդ մասնագիտությունների համար պետությունն ամեն տարի անվճար տեղեր է հատկացնում:

Ապագա բժիշկների մասնագիտական կողմորոշմանն աջակցելու համար յուրաքանչյուր տարի ամբիոններում և կլինիկական բազաներում կազմակերպվում է մասնագիտական կողմորոշման շաբաթ, որի ընթացքում ուսանողները ծանոթանում են ապագա մասնագիտությանը:

Շատ կարևոր և խնդրահարույց է մտում բժշկական բազային կրթություն իրականացնող այլ օպերատորների շրջանավարտներին կրթական մակարդակը: ԵՊԲՀ-ում կլինիկական օրդինատուրայի ընդունելության համար այդ շրջանավարտները պարտադիր պետք է հանձնեն կլինիկական օրդինատուրայի ընդունելության քննություն, որը համահարթեցված է և համապատասխանում է բժշկական համալսարանի ավարտական քննություններին, որը, սակայն, վերջին 7 տարիների ընթացքում հանձնում են դիմորդների 8,5-ից մինչև 14,0 տոկոսը:

Հավելենք, որ բժշկական համալսարանում բուժական գործ, ստոմատոլոգիա և դեղագիտություն մասնագիտություններով կրթություն է ստանում շուրջ 1800 կլինիկական օրդինատոր:

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՐԸՆԹԱՑ ԶԱՐԳԱՑՈՒՄԻՑ ԲՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾՆ ԱՆՄԱՄՆ ՉԷ

Մայիսի 4-ին Երևանի պետական բժշկական համալսարանում կայացել է Բուժքույրերի միավորման ամենամյա կոնֆերանսը, որին մասնակցել է ավելի քան 500 բուժքույր՝ Հայաստանի տարբեր մարզերից:

Այս տարվա կոնֆերանսի կարգախոսն էր՝ «Կրթություն -Որակ-Անվտանգություն», որի երեք բաղադրիչը վերաբերում էին թե՛ բուժքույրերին, թե՛ պացիենտներին և խնամողներին:

Օրակարգը բավական հագեցած էր, քննարկվող թեմաները՝ բազմազան: Մասնավորապես ներկայացվել են գեկուցումներ մի շարք տարածված հիվանդությունների վարման և դրանց բարդությունների կանխարգելման մասին: Օրինակ՝ լյարդի հիվանդություններ, կծած վերքերից առաջացող վարակներ, քրոնիկ երակային հիվանդություններ, շաքարային դիաբետ, ինչպես նաև սիրտ-թոքային վերակենդանացում և հակահամաճարակային կանոնների պահպանում:

Բուժքույրերի միավորման նախագահ, ԵՊԲՀ քույրական գործի կազմակերպման ամբիոնի վարիչ, «Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի գլխավոր բուժքույր Գեղամուշ Ստեփանյանը ողջունելով մասնակիցներին՝ շնորհավորել է նրանց Բուժքույրերի օրվա՝ մայիսի 12-ի առթիվ՝ մաղթելով արդյունավետ աշխատանք խաղաղ պայմաններում:

Նրա խոսքով՝ բժշկագիտությունը սրընթաց զարգացում է ապրում, և քույրական գործն այս գործընթացից անմասն չէ: Ուստի, ըստ Գ.Ստեփանյանի, կրթական ծրագրերի իրականացումը և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը պետք է շարունակական լինեն: Կոնֆերանսն ընթացավ ակտիվ քննարկումներով, հարցուպատասխանով:

Բուժքույրերը մեծ հետաքրքրությամբ էին մտռնում ներկայացված թեմաներին, բժիշկ-գեկուցողներն էլ բարձր գնահատեցին բուժքույրերի ակտիվ ներգրավվածությունն ու բարձրացրած հարցերը: Մասնակիցներին տրվեց 8 ՇՄՋ կրեդիտ:



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՍԱԼՈՆԻԿԻ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Մայիսի 5-9-ը հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնի դոցենտ Արմեն Մկրտչյանը մեկնել էր մասնագիտական վերապատրաստման Սպոնիկի Արիստոտելի համալսարան:

Մեկ շաբաթվա ընթացքում Արմեն Մկրտչյանը հանդիպել է Արիստոտելի համալսարանի հիգիենայի, սոցիալական և կանխարգելիչ բժշկության և բժշկական վիճակագրության լաբորատորիայի վարիչ, պրոֆեսոր Աննա-Բետինա Հայդիսի, սննդաբանության, հիգիենայի և սոցիալական բժշկության բաժինների պատասխանատուների հետ, քննարկել համալսարանում դասավանդվող «Հիգիենա և էպիդեմիոլոգիա» մոդուլի կառուցվածքի, ուսանողների գնահատման համակարգի, հետազոտական և ինքնուրույն հանձնարարությունների թեմաների ընտրության, իրականացման և ներկայացման հարցերը, դասախոսությունների և լաբորատոր աշխատանքների անցկացման մոտեցումները օտարալեզու ուսանողների խմբերում:

Դոցենտ Մկրտչյանը համալսարանի 3-րդ կուրսում սովորող օտարազգի ուսանողներին ներկայացրել է Հայաստանում «Դպրոցական սնունդ» ծրագրի իրականացման գիտական հիմքերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև պատմել է հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնի գործունեության, գիտական հետաքրքրությունների շրջանակի մասին:

Ձեռք է բերվել կապերն ավելի ամրապնդելու, համատեղ գիտական և փոխանակային ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ պայմանավորվածություն:



«ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԴԱՍԸՆԹԱՑԸ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՌԱՐԿԱ ԵՊԲՀ-ՈՒՄ



Ընդհանուր բժշկության ֆակուլտետի ուսանողների համար 2024թ. աշնանային կիսամյակից «Հետազոտությունների հիմունքներ» նորարարական դասընթացը պարտադիր առարկաների շարքում է:

Դասընթացի նպատակն է ձևավորել քննադատական մտածողություն, զարգացնել հմտություններ, որոնք կօգնեն ուսանողներին արդյունավետ օգտվել ակադեմիական գրականությունից, վերլուծել բժշկական հոդվածները և ուղեցույցները:

«Հետազոտական հմտություններ» կրթական խմբի ուսումնական պատասխանատու, ԵՊԲՀ «ԲՈՒՐԵՅՆ» կենտրոնի գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակի ղեկավար Մարիամ Մովսիսյանի խոսքով՝ որպես առարկայի պարտադիր բաղադրիչ, կրթական ծրագրում ներառված են ակումբային քննարկումները (Journal Club), որոնց ընթացքում ուսանողները ներկայացնում են գիտական հոդվածների վերլուծություն՝ քննարկելով ժամանակակից բժշկության հիմնարար հարցեր:

Դասընթացը, զինելով ուսանողներին հիմնարար հետազոտական հմտություններով, հանդես է գալիս որպես կարևոր ներդրում նրանց ապագա կարիերայում: Այն խթանում է հետազոտական մտածողությունը և խորացնում է ապացույցների վրա հիմնված բժշկության ըմբռնումը:

«Նորարարություններից է «դասախոսի օգնականի» (Teacher Assistant) դպրոցի ներդրումը, որի շրջանակներում «Հետազոտության հիմունքներ» դասընթացը գերազանց ավարտած և վերապատրաստում անցած ավագ կուրսերի ուսանողները և օրդինատորներն ընդգրկվել էին կրթական խմբի կազմում՝ որպես դասախոսի օգնական: Դա յուրահատուկ փորձառություն էր ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների համար՝ նոր, երիտասարդ կադրերի պատրաստման գործում», - ասում է Մովսիսյանը:

Նրա գնահատմամբ՝ ուսանողական արձագանքները վկայում են, որ դասընթացը մեծ մասամբ բավարարել է նրանց ակնկալիքները՝ հաստատելով դասավանդման ընտրված մեթոդների և ուսուցման նպատակների արդյունավետությունը: Ուսանողներն առանձնացրել են դասընթացի կառուցվածքային հստակությունն ու արդիականությունը՝ որպես հիմնական առավելություններ:

Դասը վարում են ԵՊԲՀ դասախոսները՝ տարբեր ամբիոններից ներգրավված, և բժշկական բուհի «ԲՈՒՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի գիտաշխատողները:

Դասընթացի առավել հաջողված բաղադրիչների թվում ուսանողները նշել են՝

Teacher Assistant ծրագրի կիրառումը, տնային առաջադրանքները, գործնական սեմինարները,

Journal Club-ը,

որոնք էական դեր են խաղացել հետազոտական հմտությունների ամրապնդման և ակտիվ ուսուցման խթանման գործում:

Կրթական ծրագրում դասընթացի ներդրումը խթանելու է որակապես նոր և շարունակաբար զարգացող բժշկության արդի պահանջներին համապատասխան մասնագետների նոր սերնդի զարգացմանը:

ԱԼԻՍԻԱ ԴԵՄԻՐՃՅԱՆԸ ՀԱԿԱՄԱՆՐԷԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հերացի» վերլուծական կենտրոնի կողմից կազմակերպված հերթական արդիական թեմայի շուրջ հանդիպում-քննարկում է կայացել, որի ընթացքում հանդիպման կազմակերպիչ, «Հերացի» վերլուծական կենտրոնի ղեկավար, համաճարակաբանության ամբիոնի վարիչ Մերի Տեր-Ստեփանյանը ներկայացրել է համաճարակաբանության ամբիոնի և հանրային առողջության ֆակուլտետի այցելու դասախոս Ալիսիա Դեմիրճյանին, ով միաժամանակ Մեծ Բրիտանիայի Առողջապահության ազգային գործակալության աշխատակից է:

Լինելով և՛ մանկաբույժ, և՛ համաճարակաբան՝ նա ակտիվորեն զբաղվում է հակամանրէային կայունության դեմ պայքարի ծրագրերի իրականացմամբ և ներդրմամբ:

«Հակամանրէային կայունություն և վարակի հսկողություն» հանդիպում-քննարկման ընթացքում ներկայացրած իր զեկույցում բժիշկ Դեմիրճյանը ներկայացրեց հակամանրէային կայունության դեմ պայքարի արդիականությունը, հակաբիոտիկների նշանակման կարևորությունը, շեշտելով, որ վերջին 10 տարվա ընթացքում դեղագործական ընկերությունները նոր հակաբիոտիկներ չեն ստեղծել, քանի որ այդ գործընթացը ծախսատար է և անշահութաբեր:

Մասնագետը կարևորեց այն փաստը, որ մեր օրերում անհնար է պատկերացնել քաղցկեղի բուժումը, վիրաբուժական միջամտությունները և անգամ որոշ ոչ վարակային հիվանդությունների համալիր բուժումն առանց հակաբիոտիկների, սակայն դրանց կիրառումն աստիճանաբար հանգեցնում է հակաբիոտիկների հանդեպ կայունության ձևավորման, և անհրաժեշտություն է առաջանում կիրառել արդեն իսկ վերջին սերնդի հակաբիոտիկներ:

Այցելու դասախոսի կարծիքով՝ մերօրյա թվային ժամանակներում, երբ արդեն կա արհեստական բանականություն և նոր բույսերի անող սերունդ, ավելի հեշտ կլինի որոշ ուղեցույցների, դիտարկումների հիման վրա բարելավել հակամանրէային կայունության դեմ պայքարին ուղղված ջանքերը, քանի որ նորագույն տեխնոլոգիաների միջոցով հարցի լուծումն էլ ավելի իրատեսական է թվում:

Բանախոսը Հայաստանում նույնպես այս արդիական ու կարևոր խնդրի լուծման համար պոտենցիալ է տեսնում՝ դրա դեմ պայքարին ուղղված գործողությունների, ազգային ծրագրի մշակման, բուժհաստատություններում ակնհայտ փոփոխությունների, «Արմեդ» ծրագրի ներդրման, դեղատներից հակաբիոտիկների ձեռքբերման և նշանակման վերբերյալ օրենքների ընդունման միջոցով:

Նա խորհուրդ տվեց հնարավորության դեպքում ծանոթանալ այլ երկրներում կիրառված և հաջողություն գրանցած ծրագրերին և դրանց փորձից օգտվելով՝ համապատասխան ծրագրեր մշակել և իրականացնել:

Նմանօրինակ հանդիպումները, հատկապես այլ երկրների փորձի մասին տեղեկատվություն ստանալն ու հետագա համագործակցության հեռանկար ունենալը, խթան է հանդիսանում մեր սեփական գործողությունների տեսլականը կազմելու և տարբեր կառույցների ներգրավվածությունը խթանելու համար:



ՄԻՄՖԵՐՈՊՈԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԸ ԵՊԲՀ-ՈՒՄ

Բժշկական համալսարանը հյուրընկալեց Միմֆերոպոլի բժշկական համալսարանի ընդհանուր ստոմատոլոգիայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Ինեսա Ռոմանենկոյին, որը սովորողներին ներկայացրեց «Բերանի խոռոչի ախտահարումներ» թեմայով զեկույցը:

Վիրաբուժական ստոմատոլոգիայի և դիմաձևոտային վիրաբուժության ամբիոնի վարիչ Գագիկ Հակոբյանը ներկայացրեց հյուրին՝ կարևորելով նրա այցն ու փորձի փոխանակման պատրաստակամությունը ԵՊԲՀ օրդինատորների հետ:

Պրոֆեսոր Ինեսա Ռոմանենկոն ընդգծեց, որ համալսարանը գիտության տաճար է իր համար. «Ուրախ եմ գտնվել ավելի քան 100-ամյա պատմություն ունեցող բուհում և հույս ունեմ, որ իմ զեկույցը հետաքրքիր և արդյունավետ կլինի ձեր հետագա մասնագիտական գործունեության ընթացքում», – ասաց նա՝ մեջբերելով միտքը, որ օնկոլոգիական հիվանդություն ունեցող մարդու ճակատագիրն այն բժշկի ձեռքերում է, որին առաջինը կդիմի պացիենտը: Շարունակելով՝ նշեց. «Պատմեք մարդկանց քաղցկեղի մասին, և նրանք կդադարեն վախենալ դրանից»:



Դասախոսի խոսքով՝ վաղ փուլում ախտորոշված բերանի խոռոչի քաղցկեղը բուժելի է: «Հիվանդության վաղ հայտնաբերումը հատկապես դժվար է, քանի որ կլինիկական ախտանիշներն ի հայտ են գալիս չարորակ փոխակերպումներից ավելի ուշ», – ասում է նա՝ ևս մեկ անգամ շեշտելով, որ վաղ փուլերում սկսված համապատասխան բուժումը զգալիորեն մեծացնում է բուժման հաջողության հավանականությունը: Չարորակացման սկիզբը հայտնաբերելը հնարավորություն կտա իրականացնել արմատական և օրգանապահպան բուժում:

Բերանի խոռոչի քաղցկեղը 4-6 անգամ ավելի տարածված է տղամարդկանց, քան կանանց շրջանում, ինչը պայմանավորված է ծխելու, ալկոհոլի օգտագործման և այլ վնասակար սովորություններով:

Ղրիմի բժշկական համալսարանի շրջանավարտ, դիմաձևոտային վիրաբույժ, բ.գ.թ. Քրիստինա Առաքելյանը ներկայացրեց «Բերանի խոռոչի լորձաթաղանթի բորբոքման կանխարգելումն ու բուժումը քաղցկեղով հիվանդների մոտ քիմիաթերապիայի փուլում» թեմայով ստենախոսությունը, որը հաջողությամբ պաշտպանել է Միմֆերոպոլի բժշկական համալսարանի ընդհանուր ստոմատոլոգիայի ամբիոնի վարիչ բ.գ.դ., պրոֆեսոր Ինեսա Ռոմանենկոյի ղեկավարությամբ:

«Այն պացիենտները, որոնք ունեն բերանի խոռոչի քաղցկեղ, մինչ հիվանդության բուժման բուն փուլը պետք է նախապատրաստվեն՝ կանխարգելելով զուգահեռ զարգացող բերանի խոռոչի խնդիրները՝ էրոզիաները, խոցերը և այլն, որոնք հավելյալ բարդություններ են առաջացնում քաղցկեղի բուժման ընթացքում»:

Մասնագետը կարևորում է հայ գործընկերների հետ համագործակցությունը. «Բերանի խոռոչի լորձաթաղանթի բորբոքման կանխարգելման և բուժման նպատակով լայն կիրառություն ունի ծիրանի կորիզից ստացված թուրմը: Եթե պացիենտը նախապես ողողումների տեսքով օգտագործում է թուրմը, ճառագայթային բուժման ընթացքում խորը խոցերի և էրոզիաների, բարդությունների հավանականությունը նվազում է և հեշտացնում է բուժման գործընթացը»:

Քրիստինա Առաքելյանը նպատակ ունի հայ գործընկերների հետ համագործակցության շրջանակում շրջանառության մեջ դնել ծիրանի կորիզից պատրաստված թուրմ՝ նպաստելով բերանի խոռոչի քաղցկեղ ունեցող հիվանդների բուժման ընթացքին:


ՄԵՐ ՄԱՍՆԱԳԵՏԸ՝ ULTRASOUND FOR GYNECOLOGY ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌՅԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԽՈՄՆԱԿ

ԵՊԲՀ պրոֆեսոր, «Գերձայնային ախտորոշումը մասնաբարձությունում, գինեկոլոգիայում և ֆետալ բժշկությունում» կուրսի վարիչ Կարինե Թոխունցն ընտրվել է «Ուլտրաձայնային հետազոտությունը՝ գինեկոլոգիայում» (Ultrasound for Gynecology) խորագրով միջազգային ամառային սեմինարների շարքի խոսնակ:

Համաշխարհային առաջատար խոսնակների շարքում համալսարանական մասնագետը հունիսի 3-ին, 10-ին, 17-ին և 24-ին հանդես կգա արդեն 4-րդ առցանց դասընթացին, որի նպատակն է բարելավել գինեկոլոգիայի ոլորտում ուլտրաձայնային հետազոտություններ կատարելու գործնական հմտությունները:

Կարինե Թոխունցը մասնակիցների հետ կկիսվի գիտելիքով և ոլորտում բազմամյա փորձով:

Նշենք, որ երկու տարի առաջ նա ընտրվել էր Մասնաբարձության և գինեկոլոգիայի ուլտրաձայնային հետազոտությունների միջազգային միության (International Society of Ultrasound In Obstetrics and Gynecology – ISUOG) դեսպան (ISUOG AMBASSADOR)՝ ակտիվորեն ներգրավվելով կազմակերպության գործունեության մեջ:



ՓԱՌԱՆՁԵՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է CHIMERA ԾՐԱԳԻՆ

ԵՊԲՀ պաթոլոգիայի ամբիոնի վարիչ, համալսարանական հիվանդանոցների կլինիկական ախտաբանության ծառայության ղեկավար Փառանձեմ Խաչատրյանը Նիդերլանդների Ռադբաուդի բժշկական համալսարանի Պաթոլոգիայի բաժանմունքում այս տարվա սկզբին վերապատրաստում է անցել «Թվային և համակարգչային պաթոլոգիա» մասնագիտացմամբ:

Վեցշաբաթյա վերապատրաստման ընթացքում համալսարանականը մասնակցել է արհեստական բանականության կիրառման CHIMERA challenge (Combining Histology, Medical Imaging (Radiology), and molEcular Data for Medical pRognosis and diAgnosis) նախագծի կազմակերպմանը (<https://chimera.grand-challenge.org/>):

CHIMERA-ն հավակնոտ ծրագիր է՝ արհեստական բանականությունը պաթոլոգիայի, ռադիոլոգիայի բնագավառներում, այն մուլտի-մոդալ մոտեցում է, որի նպատակն է նպաստել ճշգրիտ բժշկության առաջընթացին քաղցկեղի բուժման մեջ՝ վերհանելով բազմամոդալ տվյալների ինտեգրման կարևորագույն անհրաժեշտությունը:

«Բն կողմից արված ծրագիրը միզապարկի և շագանակագեղձի քաղցկեղին է վերաբերում: Այս նախագիծը լինելու է իմ պրակտիկայի հաշվետու զեկույցը, այլ կերպ ասած՝ մինի աշխատանքը մագիստրոսական ծրագիրն ավարտելիս», – մանրամասնում է բժիշկ-գիտնականը, որի անունն ախտաբանության բնագավառում արհեստական բանականության գործիքակազմի կիրառմանն ուղղված այս ծրագրի համախաձեռնողների ցանկում է:

Փառանձեմ Խաչատրյանը մասնակցել է պրոյեկտին՝ շագանակագեղձի 700-ից ավելի դեպքերի մորֆոլոգիան թվայնացնելով: Մասնագետի փոխանցմամբ՝ թվային տեխնոլոգիաների զարգացումը և արհեստական բանականության ինտեգրացիան առօրյայում, այդ թվում՝ առողջապահության բնագավառում, արդեն իսկ փաստ է, ուստի օր առաջ այդ գործիքակազմին տիրապետելը և հնարավորինս ներդնելը համալսարանական միջավայրում խիստ կարևոր է:

«Համալսարանական կլինիկաներն ունեն բավականաչափ ներուժ ինտեգրվելու առողջապահության բնագավառում արհեստական բանականության զարգացումներին, պարզապես պետք է գիտելիք և ցանկություն՝ նորարարական մոտեցումներ որդեգրելու և դրանք կյանքի կոչելու համար», – վստահեցնում է Փառանձեմ Խաչատրյանը:



«Հերացի» համալսարանական հիվանդանոց

Կայացավ հայ և ֆրանսիացի նյարդաբանների 8-րդ աշխատաժողովը



«Հերացի» համալսարանական հիվանդանոցն ապրիլի 23-ին համախմբել էր հայ և ֆրանսիացի մասնագետներին՝ «Նյարդային վնասվածքների էլեկտրանեյրոմիոգրաֆիկ (ENMG) գնահատումը» թեմայով 8-րդ աշխատաժողովի շրջանակում:

Ռադիոլոգիայի կենտրոնի էլեկտրանեյրոմիոգրաֆիայի բժիշկ, ԷՄԳ լաբորատորիայի հիմնադիր, նյարդաբան, ք.գ.թ. Բելլա Գրիգորյանը, ողջունելով մասնակիցներին, համառոտ ներկայացրեց համագործակցության պատմությունը, որը մեկնարկել էր 2020 թվականի պատերազմից հետո՝ 2021 թվականի հունվարից, երբ ֆրանսիացի նյարդաբանները ժամանեցին՝ աջակցելու վիրավոր հայ զինվորներին օգնություն ցուցաբերելու հարցում: «Ստեղծվեցին էլեկտրանեյրոմիոգրաֆիայի նոր լաբորատորիաներ Կենտրոնական զինվորական հոսպիտալում, Գյումրիի և Գորիսի բժշկական կենտրոններում: Ֆրանսիացի գործընկերների օգնությամբ մենք գնում էինք պացիենտներին, քննարկում և բացահայտում բարդ կլինիկական դեպքերը, կիսվում փորձով և գիտելիքով», – պատմեց համալսարանական բժիշկը, հավելելով, որ տեղացի մասնագետների համար կազմակերպվել է գործնական դասընթաց:

«Մեր հետագա նպատակներն են՝ շարունակել համագործակցությունը, ավելի շատ պրակտիկ դասընթացներ կազմակերպել հայ մասնագետների համար և, իհարկե, ստեղծել ամուր կապ երկու երկրների նյարդաբանների միջև: Ի դեպ՝ արդեն 2 հայ նյարդաբան վերապատրաստվել են Լիոնի համալսարանական հիվանդանոցի էլեկտրանեյրոմիոգրաֆիայի լաբորատորիայում», – շեշտեց Բելլա Գրիգորյանը:



Լիոնի համալսարանական հիվանդանոցի ԷՄԳ լաբորատորիայի ղեկավար, նյարդաբան Ֆրանսուազ Բուհուրն աշխատաժողովի ընթացքում անդրադարձավ կլինիկական դեպքերին և դրանցից քաղված դասերին, նույն հիվանդանոցի նյարդաբան, ԷՄԳ մասնագետ Լոռան Ժումիոը խոսեց ունար ներոպաթիայի մասին, իսկ նույն հիվանդանոցի ֆիզիոթերապիստ, վերականգնողական կինեզիստ Անն-Լիզ Գառելի դասախոսությունը վերաբերում էր նյարդաբանական պաթոլոգիաների գնահատմանը և վերականգնմանը:

Բժշկական համալսարանի մասնագետների և կլինիկական օրդինատորների համար նախատեսված հայ և ֆրանսիացի նյարդաբանների աշխատաժողով-սեմինարները կլինեն շարունակական:

Ուլտրաձայնային հետազոտությունը՝ հողային հիվանդությունների ժամանակ

Ուլտրաձայնային հետազոտությունը ոչ ինվազիվ մեթոդ է:

Ուլտրաձայնային հետազոտությամբ հնարավոր է ուսումնասիրել ուսային հողերը, արմնկային հողերը, ճաճանչ-դաստակային հողերը, կոնքազդրային հողերը, ծնկան հողերը, սրունք-թաթային հողերը:

Ռադիոլոգիայի կենտրոնի բժիշկ-սոնոգրաֆիստ, Ճառագայթային ախտորոշման ամբիոնի դասախոս Վահագն Միսակյանի խոսքով՝ հողերի ուլտրաձայնային հետազոտությունը թույլ է տալիս ուսումնասիրել հողերի, կապանների, ջլերի և մկանների վիճակը, ինչը հնարավոր չէ ռենտգեն հետազոտության ժամանակ:

Հողերի ուլտրաձայնային հետազոտությունը հնարավորություն է տալիս հողը հետազոտել դինամիկայում, ինչպես նաև շարժման ժամանակ:

Հետազոտության այս տեսակի օգնությամբ հնարավոր է կատարել ներհողային, միջջլային միջամտություններ:

Դաստակային հողերի ուլտրաձայնային հետազոտությունը թույլ է տալիս գնահատել փափուկ հյուսվածքներում բորբոքային պրոցեսները, ջլերի, կապանների և մկանների վնասվածքները:

Մասնագետի խոսքով՝ դաստակային հողերի հիվանդությունների ժամանակ առավել հաճախ հանդիպող խնդիրներն են՝

ջլերի բորբոքումը, հողերում բորբոքային պրոցեսը, հողերի դեգեներատիվ փոփոխությունները, բարորակ կամ չարորակ նորագոյացությունները (հիգրոմաներ, նևրոմաներ և լիպոմաներ), կարպալ թունելի համախտանիշը, հողերի զարգացման բնածին անոմալիաները:



Համալսարանականները մասնակցել են Անեսթեզիոլոգների Եվրոպական ասոցացիայի փարեկան կոնգրեսին

Անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի կլինիկայի բժիշկներն ու կլինիկական օրդինատորները մասնակցել են Անեսթեզիոլոգների Եվրոպական ասոցացիայի տարեկան կոնգրեսին:

Համալսարանականները ներկայացրել են արտրակտ՝ ռեգիոնար անզգայացման ոլորտում:

Արտրակտում ներկայացված է եղել անրակի կոտրվածի վիրահատական միջամտության ժամանակ ցավազրկման նորագույն մեթոդ- Կլավիպեկտորալ պաշարում՝ ՈւՁՀ հսկողությամբ:

Այս պաշարումը թույլ է տալիս պացիենտին վիրահատել նույնիսկ առանց ընդհանուր անզգայացման կամ թեթև սեդացիայի պայմաններում: Այն ապահովում է լիարժեք ներ և հետվիրահատական ցավազրկում: Ունի շատ ավելի ցածր բարդությունների հավանականություն՝ ի տարբերություն ռեգիոնար անզգայացման այլ տեսակների:

Հոդվածի հեղինակը իրնտենսիվ թերապիայի ծառայության բժիշկ-անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ Արփինե Մանուկյանն է, համահեղինակը՝ կլինիկայի 3-րդ կուրսի կլինիկական օրդինատոր Էրիկ Թեյլանը:

Արփինե Մանուկյանի խոսքով՝ այցը ոչ միայն հնարավորություն է տվել ներկայանալ միջազգային հանրությանը՝ կատարած աշխատանքով, այլև ծանոթանալ ժամանակակից սարքավորումներին, արհեստական ինտելեկտի կիրառմանը անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ոլորտում:

Մասնագետները լսել են հետաքրքիր դասախոսություններ հանրաճանաչ պրոֆեսորների կողմից՝ նոր հմտություններով ու նոր գիտելիքով վերադառնալով հայրենիք:



Ինչ անալիզներ հանձնել ամուսնը և ինչու են դրանք կարևոր



Ամառը ոչ միայն հանգստի ու արձակուրդների շրջան է, այլ նաև ժամանակաշրջան, երբ օրգանիզմը կարող է ենթարկվել որոշակի սթրեսների՝ ջերմաստիճանի բարձրացման, ջրազրկման, վարակների և սննդային թունավորումների պատճառով: Այդ իսկ պատճառով կան որոշակի լաբորատոր թեստեր, որոնք հատկապես նպատակահարմար են ամուսնը:

1. Ընդհանուր արյան անալիզ (CBC).

- Բացահայտում է վարակներ, սակավարյունություն, բորբոքումներ:
- Կարևոր է հատկապես ամուսն ընթացքում տարածված վիրուսային վարակների կամ աղիքային խնդիրների ժամանակ:
- Տիպիկ նշաններ՝ գլխապտույտ, թուլություն, շոգի հանդեպ զգայունություն:

2. Կենսաքիմիական անալիզներ.

a. Էլեկտրոլիտների մակարդակ (Na, K, Cl)

- Շոգ եղանակին քրոնարտադրությունը բարձր է, և օրգանիզմը կորցնում է նատրիում և կալիում:

- Էլեկտրոլիտների խանգարումները կարող են առաջացնել մկանային ցնցումներ, հյուծում կամ սրտային խնդիրներ:

b. Որիշ կենսաքիմիական ցուցանիշներ.

- Որոտինային ֆունկցիա (UREA, CREATININE)՝ կարևոր է ջրազրկման հետևանքները գնահատելու համար,

- Լյարդի ֆունկցիոնալ թեստեր՝ տոքսինների կուտակում, սթրեսային վիճակներ

3. Աղիքային վարակների հայտնաբերում.

Ամուսնը տարածված են սննդային վարակները, այդ թվում՝ սալմոնելլա, շիգելլա և E. coli:

- Պետք է հանձնել մեզի և կղանքի մանրէաբանական մշակույթ,
- Երբեմն նշանակվում են նաև ֆեկալ կոպրոցիտոլոգիա կամ պարազիտոլոգիական հետազոտություններ:

4. Վիտամին D մակարդակ.

Ամուսնը արևի առկայությունը մեծ է, բայց նաև շատերն օգտագործում են արևապաշտպան քսուքներ կամ աշխատում են փակ տարածքներում:

- Վիտամին D-ի անբավարարությունը շարունակական խնդիր է՝ անկախ եղանակից:
- Կարող է ազդել ոսկրային առողջության, իմունիտետի և տրամադրության վրա:

5. Միզուղիների վարակների անալիզներ.

Ձերնությունն ու հիգիենայի խախտումները նպաստում են միզուղիների վարակների տարածմանը, հատկապես կանանց և երեխաների մոտ:

- Ընդհանուր մեզի անալիզ,
- Մեզի մանրէաբանական մշակում (միզամշակում):

6. Ալերգոլոգիական անալիզներ.

Ծաղկափոշիների ալերգիաները, արևային ալերգիաները և միջատների խայթոցների նկատմամբ ռեակցիաները հաճախանում են ամուսնը:

- Թեստեր՝ ընդհանուր IgE, սպեցիֆիկ IgE ալերգենների հանդեպ
- Կլինիկական ախտորոշիչ լաբորատորիայի ղեկավար, արյունաբանական կետի պատասխանատու, կլինիկական լաբորատոր ախտորոշման ամբիոնի ասիստենտ Գայանե Պետրոսյանը խոսքն ամփոփում է խորհուրդներով.

- Եթե հաճախակի եք շփվում բաց ջրերում, ճանապարհորդում եք կամ ունեք քրոնիկ հիվանդություններ, անցեք նախարգելիչ ստուգումներ:

- Մի հանձնեք անալիզ շոգ եղանակին՝ առանց բավարար ջրային բալանսի: Դա կարող է խեղաթյուրել արդյունքները:

- Օգտագործեք լաբորատորիաներ, որոնք ունեն սերտ վերահսկում կենսաանոթի պահան և մշակման պայմանների վրա:

Ալերգոլոգիայի և իմունոլոգիայի կլինիկական 40 փարեկան է



Ալերգոլոգիայի բաժանմունքը ստեղծվել է 1985 թվականի հունիսի 7 -ին: Բաժանմունքի առաջին վարիչը եղել է ալերգոլոգ Մարինա Մաքսիմի Պրայյան: Բաժանմունքի բացմանը անձամբ ներկա է եղել պաթոֆիզիոլոգ, ԽՍՍՀՄ ակադեմիկոս, իմունոլոգ Անդրեյ Դմիտրիի Ադոն:

Կլինիկական 4 տասնամյակ լի է եղել բազմաթիվ իրադարձություններով, ձեռքբերումներով, հաջողություններով:

Այսօր ևս բաժանմունքը շարունակում է նույն գործունեությունը ծավալել՝ հետևելով իր ուսուցիչներին:

Ալերգոլոգիայի և իմունոլոգիայի կլինիկայի մեր կոլեգաներին առաջիկա տարիներին մաղթում ենք շարունակական հաջողություններ՝ ի նպաստ բնակչության առողջության պահպանման:

ԵՊԲՀ այցելու պրոֆեսոր Ալին Հերլոպյանի մասնագիտական այցը նոր շունչ կհաղորդի Էպիլեպսիայի բուժման ոլորտին

«Հերացի» համալսարանական հիվանդանոցում մեկնարկեցին Ելլի համալսարանի բժշկական դպրոցի նյարդաբանության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊԲՀ այցելու պրոֆեսոր Ալին Հերլոպյանի կողմից անցկացվող երկօրյա անվճար խորհրդատվությունները՝ նախատեսված 18 տարին լրացած էպիլեպսիա ունեցող պացիենտների համար:

Խորհրդատվությունների ընթացքում ոլորտի առաջատար մասնագետն անհատական մոտեցմամբ պացիենտների և նրանց բուժող մասնագետների հետ քննարկեց էպիլեպսիային վերաբերող հարցերը, բուժման հնարավոր տարբերակներն ու յուրաքանչյուրի առողջական կարիքներին համապատասխանող լուծումները:

Նյարդաբանական ծառայության ղեկավար, նյարդաբանության ամբիոնի ասիստենտ Եկատերինա Հովհաննիսյանի գնահատմամբ՝ պրոֆեսոր Ալին Հերլոպյանի այցը կարևոր է ինչպես բուժական, այնպես էլ կրթական տեսանկյունից:

«Համալսարանական հիվանդանոցները, հանդիսանալով կրթօջախներ, համագործակցում են տարբեր բուհերի հետ, որոնցից է նաև Ելլի համալսարանը», – ասաց նա՝ հավելելով, որ առաջիկայում նախատեսվում են կլինիկական օրդինատորների վերապատրաստման դասընթացներ:

ԵՊԲՀ այցելու պրոֆեսոր Ալին Հերլոպյանը նախաձեռնել է «Հերացի» հիվանդանոցում հիմնել Էպիլեպտալոգիայի ծառայություն, ինչը թույլ կտա իրականացնել էպիլեպսիայի ախտորոշում, բուժում և հետևողական վերահսկողություն՝ էպիլեպսիա ունեցող պացիենտներին:

Ծառայությունը կառաջնորդվի ժամանակակից բժշկության և նյարդաբանության վերջին ձեռքբերումներով՝ ապահովելով բարձրակարգ մասնագիտական աջակցություն ինչպես նոր ախտորոշված, այնպես էլ քրոնիկ ձևով տառապող պացիենտների համար: Այստեղ կտրամադրվեն բազմակողմանի խորհրդատվություններ, կանցկացվեն կլինիկական և լաբորատոր հետազոտություններ, անհրաժեշտության դեպքում՝ համագործակցություն այլ մասնագիտացված ծառայությունների հետ:

Ալին Հերլոպյանը ընդգծեց, որ իր, «Հերացի» համալսարանական հիվանդանոցի և Երևանի պետական բժշկական համալսարանի հետ շուրջ երկու տարի առաջ սկսված համագործակցությունը կարևոր նշանակություն ունի ինչպես մասնագետների փորձի փոխանակման, այնպես էլ «Էպիլեպսիա» ախտորոշում ունեցող պացիենտների համար:

«Այսօրվա այցելուները ևս մեկ անգամ փաստեցին, որ Էպիլեպտալոգիայի ծառայության հիմնումը օգտակար և անհրաժեշտ քայլ է այս ոլորտում առաջընթաց ունենալու համար», – նշեց պրոֆեսոր Հերլոպյանը:

Շուրջ 10 պացիենտի խորհրդատվություն տրամադրելուց հետո Ալին Հերլոպյանը ԵՊԲՀ կլինիկական օրդինատորներին ներկայացրեց մասնագիտական գեկույցներ՝ «Էպիլեպսիայի ռադիոլոգիական ասպեկտները, արդի բուժումը», «Էպիլեպսիայով հղիների վարումը» թեմաներով՝ կիսվելով արդի, միջազգային գիտելիքով և կլինիկական փորձով:

Նա պատասխանեց այս ոլորտում մասնագիտանալ ցանկացող սովորողների հարցերին:

ԵՊԲՀ այցելու պրոֆեսոր Ալին Հերլոպյանին ընդունեց «Հերացի» հիվանդանոցի գլխավոր բժիշկ Արեն Բաբլումյանը: Քննարկվեցին կրթական համագործակցության խորացման, ինչպես նաև բժիշկների և օրդինատորների վերապատրաստման ծրագրերի ընդլայնման հնարավորությունները:

Հաջորդիվ Ելլի համալսարանի բժշկական դպրոցի նյարդաբանության ամբիոնի պրոֆեսորը հանդիպում ունեցավ Երևանի պետական բժշկական համալսարանի հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գառնիկ Ավետիսյանի հետ: Կարևորվեց միջազգային լավագույն փորձի ինտեգրումը ԵՊԲՀ կրթական համակարգում, մասնավորապես՝ նյարդաբանական մասնագիտացման շրջանակում:

Մեծ պատրաստակամությամբ համալսարանական հիվանդանոց և բժշկական մայր բուհ այցելած հայազգի պրոֆեսորն իր մասնագիտական խորհրդատվությունը շարունակեց նաև հաջորդ օրը՝ ընդունելով նախապես հերթագրված ևս 10 պացիենտի:



«Մուրացան» համալսարանական հիվանդանոց

Արդյունավետ գործակցություն շվեդ գործընկերների հետ

Աշխատանքային հերթական այցով «Մուրացան» համալսարանական հիվանդանոցում էին

Շվեդիայի Յոնշոփինգ քաղաքի «Ռիհովի» շրջանային հիվանդանոցի մանկաբուժական բաժանմունքի ղեկավար Սիմոն Ռոնդբլիստը, մանկաբույժներ Ստինա Էդբլոմը, կլինիկո-դինամոլոգ Էմմի Լիլիբյորգը և նորածնային ռեանիմատոլոգ Ֆրեդրիկ Իսյեմանսոնը:

Արտերկրի բժիշկները հայ կոլեգաների հետ տարբեր բաժանմունքներում իրականացրել են բարդ դեպքերի քննարկումներ, դասախոսություններ են կարդացել միզուղիների ինֆեկցիաների, նորածնային սնուցման, նորածնային թոքային հիպերթենզիայի թեմաներով:

Շվեդ կոլեգաների հերթական այցն արդյունավետ էր՝ հազեցած մասնագիտական տեղեկատվությամբ:

Նշենք, որ բժշկական համալսարանի և Շվեդիայի Յոնշոփինգ քաղաքի մարզային խորհրդի միջև համագործակցությունը տարիների պատմություն ունի:



Ռենտգեն դենսիտոմետրիայի անհրաժեշտությունը և առավելությունները

«Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիրի ախտորոշիչ կենտրոնի գլխավոր բժշկի տեղակալ, ռենտգեն ծառայության պատասխանատու, բժիշկ-ռենտգենաբան Նունե Գոռյանը ներկայացնում է ռենտգեն ծառայությունում գործող ռենտգեն դենսիտոմետրիայի անհրաժեշտությունը և առավելությունները:

Ախտորոշիչ կենտրոնի ռենտգեն ծառայությունում գործող ժամանակակից սարքով կատարվում են թե՛ մանուկների և թե՛ մեծահասակների ռենտգեն դենսիտոմետրիկ հետազոտություն:

Առավելություններն են՝

- ցածր ճառագայթային բեռնվածություն
- հասանելի,
- մատչելի,
- արագ,
- ինֆորմատիվ:

Ռենտգեն դենսիտոմետրիան օստեոպորոզի ախտորոշման ամենահավաստի մեթոդն է, որը իրենից ներկայացնում է շատ ցածր ճառագայթային բեռնվածությամբ ռենտգենաբանական հետազոտություն (հավասար մեկ թոքերի լուսանցման 1/10-ին):

Հետազոտությունը կարևոր է օստեոպորոզի կանխարգելման և վաղ ախտորոշման, ինչպես նաև բուժման արդյունավետության հսկողության համար:

Պարտադիր է՝

- դաշտանադադարի շրջանում գտնվող կանանց,
- 65 տարեկան և ավելի՝ տղամարդկանց,
- շաքարային դիաբետ և որոշ էնդոկրին հիվանդություններ ունեցող, հորմոնալ դեղամիջոցներ ընդունող, օսկոլոգիան հաղթահարող թե՛ երեխաների և թե՛ մեծահասակների համար:

Հետազոտությունն իրականացվում է՝

- մեծահասակների դեպքում 3 խոցելի անատոմիական հատվածում՝ ողնաշարի գոտկային հատված, կոնքազդրային հոդի և նախաբազկի շրջան,
- երեխաների դեպքում՝ 2 խոցելի հատվածում, որոնք շերտագրելով ստանում ենք միջինացված ցուցանիշ՝ ոսկրերի խտության մասին:




Երբ է անհրաժեշտ կատարել վահանաձև գեղձի սոնոգրաֆիա

Ախտորոշիչ կենտրոնի բժիշկ-սոնոգրաֆիստ Մելինա Ալոյանի խոսքով՝ վահանաձև գեղձի սոնոգրաֆիան կարևոր է, երբ առկա են հետևյալ նշանները՝

- շոշափվող գոյացություն պարանոցի շրջանում,
- դժվարություն կլման ժամանակ, հաճախակի հագ,
- քաշի կտրուկ կորուստ կամ ավելացում՝ առանց ակնհայտ պատճառի,
- աճի դանդաղում/ցածր հասակ,
- ուշացած սեռական հասունացում,
- գերհուզայնություն, անհանգստություն, հոգնածություն,
- քնի խանգարումներ,
- սրտի հաճախ գարկեր (տախիկարդիա),
- ձեռքերի դող, մազաթափություն, քրտնարտադրության աճ,
- մաշկի չորություն:

Եթե նկատում եք վերոնշյալ ախտանիշներից որևէ մեկը, խորհուրդ է տրվում դիմել մասնագետի և անցկացնել վահանաձև գեղձի սոնոգրաֆիա՝ հնարավոր խնդիրները ժամանակին բացահայտելու և ավելի լուրջ առողջական խնդիրներ կանխելու համար:



Ինչ է ԷԷԳ հետազոտությունը

Էլեկտրոկարդիոգրաֆիան գործիքային հետազոտություն է, որը գերակշռող դեպքերում նյարդաբանական պրակտիկայում է կիրառվում:

Էլեկտրոկարդիոգրաֆիկ հետազոտությունը կիրառվում է բոլոր տարիքային խմբերում:

Այն լիովին անվնաս է և ամբողջ աշխարհում համեմատաբար մատչելի հետազոտություն է համարվում:

Գլխուղեղի ախտորոշիչ այս հետազոտությունն ուսումնասիրում և ստուգում է կենտրոնական նյարդային համակարգի գործառնությունները, ախտորոշում է գլխուղեղի՝ օրգանական և ֆունկցիոնալ ծագման վնասվածքները:

Էլեկտրակենֆալոգրաֆիան կատարվում է ախտորոշելու համար՝ էպիլեպսիան,

գլխուղեղի արյան շրջանառության խանգարումները,

գլխուղեղի նորագոյացությունները,

նկրոզները,

երեխայի մտավոր, խոսքային զարգացման ուշացումներն ու դանդաղումները:

Մանկական համալսարանական բուժհաստատության էլեկտրակենֆալոգրաֆը հնարավորություն է տալիս բարձր ճշգրտությամբ կատարել անհրաժեշտ հետազոտությունը:

Թեմային «Առավոտ լուսո»-ի շրջանակում պատմել է ախտորոշիչ կենտրոնի մանկական նյարդաբան, ԵՊԲՀ աղետների բժշկության և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի պետ, դասախոս Լիլիթ Գալստյանը:



Միքայել Վարդանյանը նորաձնային 3 ռեանիմոբիլ և բուժասարքեր է նվիրել «Մուրացան» հիվանդանոցին

Բարերար Միքայել Վարդանյանը հունիսի 1-ի՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, «Մուրացան» հիվանդանոցային համալիրին նվիրել է նորաձնային շտապօգնության 3 մեքենա՝ վերագինված անհրաժեշտ գերժամանակակից բոլոր սարքավորումներով, արհեստական շնչառության սարքավորումներ և ստացիոնար թվային ռենտգենոգրաֆիկ համակարգ:

Նորագույն սարքավորումներով հիվանդանոցը համարելու շնորհիվ հնարավոր կլինի բուժման գործընթացը կատարելագործել և արդիականացնել:

Նշված սարքավորումների և նորաձնային 3 ամենագնաց ռեանիմոբիլի ձեռք բերման համար բարերար Միքայել Վարդանյանը տրամադրել է 118 մլն դրամ:



Միքայել Վարդանյանը նորաձնային 3 ռեանիմոբիլ և բուժասարք է նվիրել «Մուրացան» հիվանդանոցին (05.2023)

«Միքայելյան» համալսարանական հիվանդանոց

Հազվադեպ հանդիպող հիվանդության ախտորոշում, երկու վիրահատություն, ինչի շնորհիվ պացիենտի կյանքի որակը անհամեմատ բարելավվել է



Հազվադեպ հանդիպող հիվանդության ախտորոշում, երկու վիրահատություն, ինչի շնորհիվ պացիենտի կյանքի որակը անհամեմատ բարելավվել է

«Միքայելյան» համալսարանական հիվանդանոց է դիմել 64-ամյա կին՝ գանգատվելով ընդհանուր թուրությանից, աջ գոտկային շրջանում առկա ցավերից, ջերմության բարձրացումից: Պացիենտը նշել է, որ վերին ծնտի շրջանում հակաբջջային ուռուցքի կապակցությամբ 2014թ վիրահատություն է տարել, ինչպես նաև ավելի քան 20 տարի ընդունում է հակափսիխոտիկ դեղորայք:

Կատարվել են լաբորատոր, գործիքային հետազոտություններ, պացիենտի մոտ ախտորոշվել է միզաքարային հիվանդություն՝ միզածորանի խցանող քար, երիկամի սուր թարախային բորբոքում (աջակողմյան պիոնեֆրոզ), որի կապակցությամբ պացիենտն անմիջապես վիրահատվել է (ուրոլոգ-բժիշկներ՝ Ն. Մելքոնյան, Ա. Հրանտյան, անեսթեզիոլոգ՝ Վ. Հարությունյան), կատարվել է աջ երիկամի հեռացում (աջակողմյան նեֆրեկտոմիա):

Ընդունվելիս պացիենտը եղել է թույլ, անտարբեր, հարցերին պատասխանում էր կարճ և դժվարությամբ: Օբյեկտիվ գնմամբ պացիենտը ու-

ներ արտահայտված դող (հանգստի և գործողության, որն ուժեղանում էր խոսելիս, ուտելիս, հասարակ գործողություններ կատարելիս), ուներ քայլքի դանդաղում, կեցվածքի կորացում (խնդրողի կեցվածք), նաև ստորին ծնտի դող, օրալ դիսկինեզիաներով:

Լաբորատոր քննության արդյունքում հայտնաբերվել է արյան մեջ կալցիումի և պարատ հորմոնի բարձր մակարդակ: Այդ կապակցությամբ պացիենտը գտնվել է էնդոկրինոլոգի (Մոնա Մաղաքյան) հսկողության տակ, կատարվել են լրացուցիչ լաբորատոր և գործիքային քննություններ, ախտորոշվել է առաջնային հիպերպարաթիրեոզ, ձախ հարվահանաձև գեղձի գոյացություն և բացի առաջնային հիպերպարաթիրեոզի հիմնական բարդություններից (օստեոպորոզ, միզաքարային հիվանդություն, լեղաքարային հիվանդություն, ստորոֆիլ գաստրիտ), նաև հազվադեպ հանդիպող ոսկրային բարդություն՝ Brown tumor (ՀՀ բաժանմունքի ղեկավար՝ Լ. Դավթյան): Այն հանդիպում է առաջնային հիպերպարաթիրեոզ ունեցող պացիենտների 3-4,5%-ի շրջանում և զարգանում է անմիջականորեն պարատ հորմոնի մակարդակի բարձրացման հետևանքով:

Ելնելով վերոնշյալ գանգատներից

և անամնեզից՝ պացիենտը դիտվել է նյարդաբանի (Մոֆիյա Խաչատրյան) կողմից և ախտորոշվել է դեղորայքային պարկինսոնիզմ:

Էնդոկրինոլոգի ցուցմամբ և մոտ մեկ ամիս մուլտիդիսցիպլինար բժշկական թիմի հսկողությամբ պացիենտը պատրաստվել է երկրորդ վիրահատության:

Կատարվել է պարաթիրեոիդեկտոմիա ձախից (ընդհանուր վիրաբույժ՝ Անդրանիկ Ալեքսանյան, ասիստենտներ՝ Ս. Մարգարյան, Ս. Ավագյան, անեսթեզիոլոգ՝ Աթանեսյան): Վիրահատությունից հետո դիտվել է պարատ հորմոնի մակարդակի իջեցում, ինչպես նաև բարելավվել է պացիենտի նյարդաբանական վիճակը՝ դողը, օրալ դիսկինեզիան պակասել են, քայլքը բարելավվել է (առանց նախկին դեղորայքի փոփոխության):

Պացիենտի դեպքի կապակցությամբ հրավիրված կոնսիլումներին բժիշկները եկել են եզրահանգման, որ հիվանդի մոտ առկա և հոգեշարժական, և նյարդաբանական խնդիրները կարող էին անմիջականորեն կապված լինել կալցիումի մակարդակի բարձրացման հետ, հետևաբար պարկինսոնիզմը կարող էր պայմանավորված լինել ոչ միայն տարիներ շարունակ ընդունած հակափսիխոտիկ դեղորայքով, այլ նաև հիպերկալցեմիայով:

Այսպիսով՝ մուլտիդիսցիպլինար թիմի կողմից կատարված բուժման արդյունքում պացիենտը դուրս է գրվել ընդհանուր վիճակի լավացումով և այժմ գտնվում է էնդոկրինոլոգի և նյարդաբանի հսկողության տակ:

Վիճակական դեպքը ընտրվել է՝ ներկայացվելու ECE 2025-ին, որպես ePoster:

Ինֆեկցիոն կլինիկայի երիտասարդ բժիշկները ESCMID Global 2025-ին պոստեր են ներկայացրել



«Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի Ինֆեկցիոն կլինիկայի երիտասարդ բժիշկները՝ Լիլիթ Առաքելյանը, Տաթևիկ Բաղդասարյանը և Աննա Ստեփանյանը, Վիեննայում մասնակցել են Վարակաբանների և կլինիկական մանրէաբանների եվրոպական կոնգրեսի ամենամյա գիտաժողովին (ESCMID Global 2025):

Բժիշկները ներկայացրել են պոստեր բրուցելոզային հեպատիտի և պոդագրայով պացիենտի մոտ վիսցերալ լեյշմանիոզի բուժման դժվարությունների մասին, որոնք արժանացել են հետաքրքրության միջազգային գործընկերների շրջանում:

Գիտաժողովի ընթացքում քննարկվել են սնկային, բակտերիալ, վիրուսային և պարազիտար հիվանդությունների ախտորոշման, բուժման և կանխարգելման նոր մոտեցումները: Խոսվել է նաև աճող հակաբիոտիկակայությունության և դրա դեմ պայքարի ծրագրերի մասին:

Մեր երիտասարդ բժիշկների համար այս գիտաժողովին մասնակցությունը կարևոր էր նոր գիտելիքների ձեռքբերման, փորձի փոխանակման, մասնագիտական շփումների և հետաքրքիր քննարկումների համար:

Մինիմալ ինվազիվությամբ 5 վիրահատություն միառժամանակ

«Միքայելյան» համալսարանական հիվանդանոց է դիմել պացիենտ՝ գանգատվելով արտահայտված քթային դժվարաշնչությունից, օդի պակասի զգացումից, քթից մշտապես լորձային պարունակության հոսքից, խոնկոցից, քնած ժամանակ շնչարգելությունից: Նրա մոտ ախտորոշվել է «քթի միջնապատի դեֆորմացիա, քրոնիկ հիպերտրոֆիկ ռինիտ, պոլիպոզ ռինոսինուսիտ, կախված փափուկ քիմք, հիպերտրոֆիկ լեզվակ, լեզվակի պապիլոմա»: Անհրաժեշտ լաբորատոր և գործիքային հետազոտություններից հետո պացիենտը նախապատրաստվել է վիրահատության:



Քրիստինե Հարությունյանը նշում է, որ պապիլոմաները վիրուսային ծագման մաշկի բարորակ գոյացություններ են, որոնք տարածվում են ինքնավարակումով: «Պապիլոմաների վաղաժամ ախտորոշումը և հեռացումը կանխում է դրանց տարածումը և չարորակացման ռիսկը: Ժամանակակից ներդիտակների օգտագործումը հնարավորություն է տալիս մինիմալ ինվազիվությամբ կատարել բազմաթիվ համակցված (տվյալ դեպքում՝ 5) վիրահատություններ՝ նվազեցնելով հետվիրահատական բարդությունների ռիսկը», -ասում է բժիշկը:

Մասնակցություն ESGE կոնգրեսին. համալսարանական մասնագետները արարակիր են ներկայացրել

«Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի Էնդոսկոպիայի ծառայության բժիշկները Բարսելոնայում մասնակցել են Էնդոսկոպիստների եվրոպական ասոցիացիայի (ESGE) տարեկան կոնգրեսին:



Մեր մասնագետները Էնդոսկոպիայի կլինիկայում իրականացրած միջամտությունները ներկայացրել են արատրակտի տեսքով:

Ճեռքերումներին ծանոթ լինելու, ինչպես նաև փորձի փոխանակման համար:

Կոնգրեսը տևել է 3 օր և ընդգրկել արևելյան ու արևմտյան բժշկության նորագույն ինովացիաները, որոնք ուղղված են հատկապես աղետաամոքսային քաղցկեղի վաղ հայտնաբերմանը և հեռացմանը, լեյուդիների Էնդոսկոպիկ միջամտություններին:

Էնդոսկոպիկ վիրաբուժությունը բժշկության ամենադինամիկ զարգացող ոլորտներից է. այն մշտապես համարվում է նոր տեխնիկական լուծումներով, որոնք թույլ են տալիս միջամտությունները դարձնել ավելի արագ, արդյունավետ և քիչ ինվազիվ:

Մեր բժիշկները նշում են, որ թեև արտասահմանում իրականացվող Էնդոսկոպիկ միջամտություններն արդեն հաջողությամբ կիրառվում են նաև Հայաստանում՝ միջազգային ուղեցույցներին համապատասխան և ժամանակակից սարքավորումներով, սակայն նման միջազգային միջոցառումները կարևոր են՝ ոլորտի վերջին

Բարիատրիկ վիրաբուժությունը՝ մշտապես ուշադրության կենտրոնում

Բարիատրիկ վիրաբուժությունը՝ մշտապես ուշադրության կենտրոնում

«Միքայելյան» համալսարանական հիվանդանոցի Ընդհանուր վիրաբուժության կլինիկայի վիրաբույժ Հակոբ Շնավոնյանը Իտալիայի Բերգամո քաղաքում անցել է բարիատրիկ վիրահատությունների վերապատրաստման դասընթաց՝ պրոֆեսոր Ջովանի Դապրիի մոտ:



Այս վերապատրաստման ընթացքում քննարկվել են բարիատրիկ վիրահատությունների նոր մոտեցումներ, բարդությունների կանխարգելման և կառավարման արդիական հարցեր:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻՑ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՔՆԻ ՈՐԱԿԻ ՎՐԱ



Քնի որակն ապահովում է ավելի լավ ֆիզիկական և հոգեբանական բարեկեցություն: Այն կարգավորվում է էնդոգեն հումեոստատիկ, նեյրոգեն և ցիրկադային պրոցեսներով: Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի և վարքի գործոնները նույնպես կարևոր դեր են խաղում քնի հիգիենայի մեջ:

Էլեկտրոնային սարքերի օգտագործումն արագորեն աճում է և կապված է բազմաթիվ անբարենպաստ հետևանքների հետ, ինչը հանրային առողջության առումով մտահոգիչ է:

Ամերիկյան “National Library of Medicine” պարբերականում վերջերս հրատարակված հոդվածում նշվում է, որ կատարվել է հետաքրքիր ուսումնասիրություն Սաուդյան Արաբիայում՝ բժշկական կրթություն ստացող ուսանողների հետ համատեղ՝ «Էլեկտրոնային սարքերից կախվածության ազդեցությունը քնի որակի և ուսանողների ուսումնառության որակի վրա» թեմայով:

Հետազոտության գրեթե բոլոր մասնակիցներն օգտագործել են սմարթֆոններ, իսկ նրանց 75.0%-ը (456/608) միշտ օգտագործել են դրանք քնելուց առաջ: Ուսանողների կեսը (53%) քնի վատ որակ ունի, մինչդեռ 32%-ը ունի կախվածություն սմարթֆոնների օգտագործումից: Պարզվել է, որ հետազոտությանը մասնակցած ուսանողների մեկ երրորդը (195/608, 32,07%) կախվածություն ունի սմարթֆոններից, իսկ 62,75%-ը (320/510) գնահատվել են որպես է վատ քնողներ:

Արդյունքները ցույց են տվել, որ ուսումնասիրության մասնակիցների կեսից ավելին տառապում է քնի վատ որակից: Վերջերս կատարված մեկ այլ ուսումնասիրություն ցույց է տվել, որ համալսարանի բժշկական ֆակուլտետի առաջին կուրսեցիների 75,4%-ը քնի վատ որակ է ունեցել:

Քնի կարևորությունը դժվար է գերազանահատել, քանի որ այն կարևոր դեր է խաղում իմունային, հորմոնալ և սրտանոթային համակարգերում, ինչպես նաև կարգավորում է ախորժակը և նյութափոխանակությունը: Քնի ցածր որակը, որը նկատվում է նշված ուսումնասիրության մեջ, կարող է առողջության համար լուրջ վտանգ ներկայացնել: Ենթադրվում է, որ քնի խանգարման մեխանիզմները անբարենպաստ կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցություն ունեն ընդհանուր բարեկեցության վրա: Միմյաթառադրենալ համակարգի, սինապթիկ նյարդային համակարգի և հիպոթալամ-հիպոֆիզ-մակերիկամային համակարգի ակտիվացումն ակնհայտ է բազմաթիվ դիտարկումների շնորհիվ: Քնի ընթացքում կարճատև և երկարատև արթնացումների ժամանակ թթվածնի ընդունման և ածխաթթու գազի արտադրության ավելացումը վկայում է նյութափոխանակության բարձրացման մասին:

Վատ քնող մարդիկ հակված են ճարպակալման և 2-րդ տիպի շաքարային դիաբետի զարգացման ավելի մեծ ռիսկի, քանի որ քնի դանդաղ ալիքը ճնշելը հանգեցնում է ինսուլինի զգայունության, լեյպտինի մակարդակի նվազման և գրելինի մակարդակի բարձրացման: Դարձելի պատճառների բացահայտումը, որոնք հանգեցնում են քնի որակի վատթարացմանը, կարող է օգնել բարելավել քնի հիգիենան:

Մեկ այլ ուսումնասիրություն պարզել է, որ ինտերնետային կախվածությունը սերտորեն կապված է դեռահասների ցերե-

կային ավերող քնկոտության հետ, և ինտերնետային կախվածության մեջ ցերեկային ավերող քնկոտության տարածվածությունը կազմել է 37,7%՝ բացի անքնությունից, ապնեի, ատամների կոճոտցի և մոճավանջների ավելի մեծ տարածվածության:

Կան մի քանի ենթադրյալ մեխանիզմներ, որոնց միջոցով էկրանները ազդում են քնի վրա: Էլեկտրոնային սարքերի օգտագործումը նվազեցնում է այն ժամանակը, որը կարող էր ծախսվել քնի վրա: Էլեկտրոնային սարքերը փոխում են վարքագիծը քնելուց առաջ, քանի որ օգտվողները էկրանի մոտ ավելի երկար ժամանակ են անցկացնում՝ հետաձգելով քնելու ժամանակը: Բացի այդ, ինչպես բռնի, այնպես էլ ոչ բռնի տեսարաններ պարունակող տեսախաղերից ստացված հոգեբանական խթանումը մեծացնում է գրգռվածությունը:

Քնի վրա էլեկտրոնային սարքերի բացասական ազդեցության մեկ այլ հավանական մեխանիզմ է քնելուց առաջ էկրաններից արտանետվող լույսի ազդեցությունը: Սովորաբար մեխանիզմի մակարդակը բարձրանում է քնելուց մի քանի ժամ առաջ, բայց ուսումնասիրությունները ցույց են տվել, որ էկրանի լույսը նվազեցնում է արյան մեջ դրա մակարդակը՝ ճնշելով քնելու ցանկությունը: Ակնկալվում է, որ քնելուց առաջ էլեկտրոնային սարքերի, հատկապես սմարթֆոնների օգտագործումը նվազագույնի հասցնելը կապահովի քնի որակի բարելավում: Մի փոքր պատահական փորձական ուսումնասիրություն ցույց է տվել, որ քնի որակը և աշխատանքային հիշողությունը բարելավվել են այն մասնակիցների մոտ, ովքեր սահմանափակել են բջջային հեռախոսի օգտագործումը քնելուց 30 րոպե առաջ: Հեռախոսի օգտագործման սահմանափակումն ընդամենը մեկ շաբաթով ավելացնում է առանց էկրանային լույսի անցկացրած ժամանակը 17 րոպեով և քնի ժամանակը 21 րոպեով:

Ավելցուկային քաշը /ճարպակալումը մեկն է՝ էկրանների առջև անցկացրած ժամանակի պատճառով առավել փաստագրված հետևանքներից: Բազմաթիվ ուսումնասիրություններ պարզել են կապը էկրանների ազդեցության և ճարպակալման ռիսկի բարձրացման միջև: Հասարակական վայրերում էկրանների առջև անցկացրած ժամանակը կրճատելու պատահական վերահսկելի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխաների քաշի ավելացումը նվազել է, ինչը վկայում է պատճառահետևանքային կապի մասին:

Ժամանակակից ապացույցները ցույց են տալիս, որ էկրանների ազդեցությունը երեխաների և դեռահասների մոտ գիրություն է առաջացնում՝ դիտման ընթացքում սննդի ընդունման ավելացման պատճառով: Բարձր կալորիականությամբ և ցածր սննդարար արժեք ունեցող սննդի և ըմպելիքների զովագրի ազդեցությունը, որն ազդում է երեխաների սախափրությունների, գնման պահանջների, սպառման սովորությունների վրա՝ կրճատում է նաև քնի տևողությունը:

Օրական 1 ժամից ավելի հեռուստացույց դիտելը կամ վիդեո խաղեր խաղալը կապված է ճարպակալման հետ դեռահասների մոտ, ովքեր չեն հետևում ֆիզիկական ակտիվության պահպանմանը:

Ֆիզիկական ակտիվության պակասը, քնի և սնվելու ոչ պատշաճ ռեժիմը, շաքար պարունակող ըմպելիքների օգտագործումը և նստակյաց ապրելակերպը դեռահասների մոտ ավերող քաշի/ճարպակալման ռիսկի կարևոր գործոններ են: Դեռահասները, ովքեր ավելի քան 4 ժամ անցկացնում են համակարգչի կամ ձեռքի սարքերի հետ, ունեցել են ավելորդ քաշի/ճարպակալման ամենաբարձր տարածվածությունը (36,6%)՝ համեմատած դեռահասների 29,5% - ի հետ, ովքեր 1-3 ժամ են անցկացնում համակարգչի կամ հեռախոսի հետ, և դեռահասների 27,5%-ը, ովքեր 1 ժամից պակաս են անցկացնում էկրանների առջև: Նմանատիպ պատկեր է նկատվել նաև հեռուստացույց դիտելիս կամ տեսախաղեր խաղալիս:

ՄԱՅԻՄԻ 8-Ը՝ ԶՎԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՂՑԿԵՂԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

Զվարանների քաղցկեղի դեմ պայքարի համաշխարհային օրը գլոբալ առողջապահական միջոցառում է, որն ամեն տարի նշվում է մայիսի 8-ին՝ նպատակ ունենալով բարձրացնել ձվարանների քաղցկեղի մասին իրազեկվածությունը: Այս օրը տեղական և միջազգային շատ կազմակերպություններ միավորում են ուժերը՝ բարձրացնելու իրազեկվածությունը այս հիվանդության, դրա վաղ ախտորոշման և սկրինինգի կարևորության մասին:

2020 թվականին հաղորդվել է, որ ձվարանների քաղցկեղը դարձել է աշխարհում երրորդ ամենատարածված գինեկոդիկական քաղցկեղը, և աշխարհում գրանցվել է 313.959 նոր դեպք: Այն քաղցկեղից մահվան ութերորդ ամենատարածված պատճառն է ամբողջ աշխարհում, և ամեն տարի ավելի քան երկու հարյուր հազար կին մահանում է այս հիվանդությունից ամբողջ աշխարհում: Ըստ GLOBCAN 2020-ի, մինչև 2040 թվականը ամբողջ աշխարհում ձվարանների քաղցկեղ ախտորոշված և դրանից մահացությունների թիվը կավելանա համապատասխանաբար 42% և 50%-ով: Դեպքերի գնահատված աճը արտացոլում է հիվանդության ծանրությունը, ինչը կարող է պայմանավորված լինել հիվանդության մասին տեղեկացվածության պակասով և ուշ ախտորոշմամբ:

Կանանց միայն զրեթե 20%-ի մոտ է ախտորոշվում ձվարանների քաղցկեղը վաղ փուլում (I կամ II փուլ)՝ մինչև դրա հնարավոր հարածը: Զվարանների քաղցկեղի վաղ հայտնաբերումը դժվար է, քանի որ այն հաճախ ասիմպտոմ է կամ ախտանիշները կարող են նման լինել այլ հիվանդությունների: Բացի այդ՝ ի տարբերություն զարգացած երկրների, միջին և ցածր եկամուտ ունեցող երկրները չունեն հուսալի գնման ընթացակարգեր, ռազմավարություններ, ենթակառուցվածքներ և առաջադեմ բուժման համակարգեր, որոնք թույլ են տալիս դադարեցնել հիվանդության հարածը:

Ամբողջ աշխարհում ձվարանների քաղցկեղ ախտորոշված կամ դրանից մահացած կանանց երկու երրորդը ցածր կամ միջին եկամուտ ունեցող երկրներից են: Այս երկրներում հասարակության մոտ առկա է տեղեկացվածության բավականին ցածր մակարդակ, քանի որ ոչ բոլոր կանայք գիտեն, որ փրկվածությունը կամ միզելու հանկարծակի ցանկությունը կարող են լինել ձվարանների քաղցկեղի հավանական ախտանիշներ, և հնարավոր է, որ լիովին հասանելի չլինեն սկրինինգային ծրագրեր, ախտորոշման և բուժման նորագույն մեթոդները:

Այս տարի՝ 2025 թվականին, ձվարանների քաղցկեղի դեմ պայքարի համաշխարհային օրվա թեման՝ «Ո՛չ մի անտեսված կին», շարունակում է ձվարանների քաղցկեղի դեմ պայքարի համաշխարհային կոալիցիայի (WOCG) բազմամյա արշավը, որը շահույթ չհետապնդող կազմակերպություն է: Այս թեման նվիրված է ամբողջ աշխարհում ձվարանների քաղցկեղի բուժման մեջ առկա տարբերությունների վերացմանը և խնդրի հանդեպ ուշադրությանը:

«Ո՛չ մի անտեսված կին» թեմայի նպատակները.

- ձվարանների քաղցկեղի մասին տեղեկատվության տարածում ամբողջ աշխարհում՝ հատկապես զարգացող երկրներում, որոնք ունեն անբավարար բուժսպասարկում,
- կոչ՝ միավորելու աշխարհի բոլոր առաջնորդներին մեկ հարթակում՝ ներդրումներ կատարելու ձվարանների քաղցկեղի հետազոտության և զարգացման մեջ,
- խթանել և ապահովել ձվարանների քաղցկեղի արդ-



յունավետ սկրինինգի հասանելիությունը և բուժումը՝ հետագա բարդությունները կանխելու համար,

- յուրաքանչյուր կնոջ տեղեկացնել ձվարանների առողջության կարևորության մասին, իսկ անհանգստացնող ախտանիշների ի հայտ գալու դեպքում դիմել բժշկական օգնության:

Զվարանների քաղցկեղը վաղ փուլերում ասիմպտոմ է, այնուամենայնիվ, եթե հիվանդությունը զարգանում է, հավանական է, որ առաջանան հետևյալ ախտանիշները.

- որովայնի ցավ,
- փքվածություն (արագ հագեցվածություն),
- միզելու հանկարծակի ցանկություն:

Չնայած ներկայումս ձվարանների քաղցկեղի կանխարգելման միջոցներ չկան, այդուհանդերձ՝ հետևյալ գործոնները կապված են ձվարանների քաղցկեղի զարգացման ռիսկի նվազեցման հետ.

- հակաբեղմնավորիչ հաբերի օգտագործումը ավելի քան հինգ տարի,
- կրծքով կերակրելը,
- ծնողաբերությունը
- վիրաբուժական միջամտությունների իրականացումը, ինչպիսիք են՝ հիստերեկտոմիան, արգանդափողերի ամպուտումը կամ երկկողմանի օոֆորեկտոմիան (երկու ձվարանների հեռացում):

Այս օրվա նպատակն է կանանց տեղեկացնել ձվարանների քաղցկեղի ռիսկերի և ախտանիշների մասին, որոնք հաճախ աննկատ են և կարող են սխալվել այլ հիվանդությունների վերագրման պատճառով: Իրազեկվածության բարձրացումը նպատակ ունի նպաստել վաղ հայտնաբերմանը, ինչը մեծապես բարելավում է ապրելիության մակարդակը: Այս օրը նաև ծառայում է որպես հարթակ՝ խթանելու գիտական հետազոտությունների ֆինանսավորման ավելացումը և պացիենտների և նրանց ընտանիքների աջակցության համակարգերի կատարելագործումը:

Հայաստանում, ըստ ԱՄԻ տարեգրքի տվյալների, 2023թ.-ին կյանքում առաջին անգամ արձանագրված չարորակ նորագոյացությունների մեջ ձվարանի քաղցկեղը 5-րդ տեղում է՝ 203 գրանցված դեպքով, իսկ հիվանդությունն ընդհանուր առմամբ տարեվերջի տվյալներով ախտորոշվել է 1590 կնոջ մոտ:

Համեմատության համար կարող ենք ասել, որ 2000թ.-ին կանանց մոտ առաջին անգամ արձանագրված ձվարանի քաղցկեղի 148 դեպքի համեմատ 2023թ.-ին դեպքերը թիվն աճել է 27%-ով:

ԵՐԵՒԱՅԻՆ ՈՐ ՏԱՐԻՔԻՑ ԿԱՐԵԼԻ Է ԹՈՂՆԵԼ ՄԵՆԱԿ. ԽՈՐՀՈՄԴԻՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ



Այս հարցի պատասխանը կախված է բազմաթիվ գործոններից, ուստի հնարավոր չէ որոշել այն տարիքը, երբ երեխային պետք է թույլ տալ միայնակ խաղալ դրսում: Հաշվի առեք հետևյալ գործոնները, երբ որոշում կայացնեք, թե երբ է ձեր երեխայի համար անվտանգ դրսում մենակ խաղալը:

4 գործոն, որոնք պետք է հաշվի առնել

Շրջակա միջավայր

Ձեր բակը ցանկապատված է: Եթե բակը պարսպապատ է, ապա 5-ից 6 տարեկանը ճիշտ տարիքն է, երբ երեխան կարող է մի քանի րոպե մենակ խաղալ դրսում: Եթե բակը ցանկապատված չէ, սպասեք, մինչև երեխայի՝ մոտ 8 տարեկան դառնալը, նախքան թույլ տալը, որ նա ամբողջովին մենակ մնա դրսում: Անկախ երեխայի տարիքից՝ պարբերաբար ստուգեք երեխայի վիճակը: Միշտ տեղյակ եղեք երեխային առանց հսկողության մենակ թողնելու հնարավոր վտանգների մասին: Առանց պարսպապատ բակի՝ ստիպված կլինեք զգուշանալ բանուկ փողոցներից և մեքենաներից, որոնք շատ արագ են վարում կամ անվտանգ չեն շրջում տարածքում: Նույնիսկ եթե վստահում եք երեխային, անհնար է միշտ տեղյակ լինել նրան այնտեղ սպասվող վտանգների մասին, ուստի վերահսկումը հաջողության բանալին է:

Նեխաներից և մեքենաներից, որոնք շատ արագ են վարում կամ անվտանգ չեն շրջում տարածքում: Նույնիսկ եթե վստահում եք երեխային, անհնար է միշտ տեղյակ լինել նրան այնտեղ սպասվող վտանգների մասին, ուստի վերահսկումը հաջողության բանալին է:

Տեսանելիություն

Կարո՞ղ եք իրականում տեսնել և լսել երեխային դրսում՝ տան ներսում գտնվող պատուհանի կամ դռան միջով: Երեխան պետք է լինի լսելի և տեսանելի: Վտանգները կարող են տարբեր լինել՝ բակի կտրված նստարանից կամ ապակուց, մինչև անսարք խաղային սարքավորումներ, խաղալիքներ և այլն:

Հասունության մակարդակ

Որքան հասուն է երեխան: Որպես ծնողներ և դաստիարակներ՝ մենք ծանոթանում ենք մեր երեխայի բնավորությանը: Ուշադիր եղեք որոշ հարցերի նկատմամբ, ինչպիսիք են՝ արդյո՞ք ձեր երեխան ունի պատասխանատվության մասին պատկերացում և իրեն պատասխանատու է զգում: Արդյո՞ք նա կհեռանա ձեր բակից հարևան բակ կամ տուն՝ առանց ձեզ նախազգուշացնելու: Երեխան իմպուլսիվ է: Նա մտածո՞ւմ է գործելուց առաջ: Արդյո՞ք երեխան հանգիստ է խաղում, թե ագրեսիվ պահվածք է դրսևորում:

Երեխաները պետք է անհատապես գնահատվեն՝ որոշելու նրանց հասունության մակարդակը՝ դրսում միայնակ խաղալու համար: Արդյո՞ք երեխան հասկանում է, որ չպետք է խոսել անձանոթների հետ կամ գնալ նրանց հետ որևէ պարագայում: Գիտե՞ն, որ փողոցը վազելով չպետք է անցնեն: Սրանք այն բոլոր հարցերն են, որոնց պատասխանները պետք է ունենաք՝ նախքան ձեր երեխային թույլ տաք խաղալ դրսում մենակ, հատկապես երկար ժամանակ:

Խաղընկերներ

Երեխան ունի՞ եղբայրներ, քույրեր կամ ընկերներ, որոնց հետ կարող է խաղալ: Երբ այլ երեխաներ են լինում շրջապատում, նրանք կարող են միմյանց պահվածքին նայել, հետևել կամ ընդօրինակել: Երեխաներն ավելի քիչ խոցելի են և ավելի ապահով, երբ խաղում են խմբում, քան՝ երբ խաղում են միայնակ: Եթե ինչ-որ բան պատահի, մեկ այլ երեխա կարող է օգնություն խնդրել և մեծահասակներին պատմել հանգամանքների մասին:

Նախքան երեխաներին թույլ կտաք մենակ խաղալ դրսում, նրանց հետ անվտանգության գրույցներ անցկացրեք: Այս խոսակցությունները պետք է ներառեն ձեր մտքերն անձանոթ մարդկանց, հնարավոր վտանգների, արտաքին սահմանների և վարքագծի ցանկացած այլ կանոնների մասին, որոնք ցանկանում եք հաստատել նրանց մոտ: Եթե երեխան բավականաչափ մեծ է, խնդրեք նրան արտակարգ իրավիճակների դեպքում հիշել ձեր հասցեն և հեռախոսահամարը:

Երբ երեխան մեծանա, հավանական է, որ նա կցանկանա ավելի ինքնուրույն լինել: Նա կարող է ցանկանալ ընկերների հետ զբոսնել այգում կամ գնումներ կատարել, կամ՝ ինքնուրույն գնալ դպրոց: Օրենքը չի սահմանում այն տարիքը, որից կարելի է երեխային առանց հսկողության թողնել, բայց նրան մենակ թողնելը, եթե դա նրան վտանգի տակ է դնում, անօրինական է: Երեխային մենակ թողնելը անվտանգ է, թե ոչ, կախված է իրավիճակից, նրա տարիքից և զարգացման փուլից: Երբեք լավ

գաղափար չէ երեխաներին կամ փոքր երեխաներին մենակ թողնել, նույնիսկ կարճ ժամանակով:

Երեխաների մեծ մասը հասնում է մի փուլի, երբ նրանք սկսում են խնդրել ինչ-որ բան անել՝ առանց մեծահասակների հսկողության, դա նրանց զարգացման կարևոր մասն է: Փոքր, հասկանալի, կառավարելի քայլերը կօգնեն նրանց դառնալ ինքնուրույն մեծահասակներ:

2021թ.-ին Մեծ Բրիտանիայում այս խորագրով կատարված հետազոտությունը ցույց է տվել, որ այսօրվա ծնողներին թույլատրվել է միայնակ խաղալ դրսում երկու տարի ավելի վաղ, քան մենք թույլ ենք տալիս մեր երեխաներին:

Մանկական խաղերի բրիտանական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այժմ երեխաները դառնում են գրեթե 11 տարեկան, նախքան ծնողները նրանց միայնակ դուրս են թողնում: Սակայն ծնողներն ասում են, որ իրենք մինչև ինը տարեկանը դրսում մենակ են խաղացել:

Ըստ հարցված ծնողների՝ նման փոփոխության «բարդ» պատճառները ներառում են մտահոգություններ «անծանոթ մարդկանց վտանգի և երթևեկության ինտենսիվության ավելացման վերաբերյալ՝ այն տարածքներում, որտեղ երեխաներն ապրում և խաղում են»: Շնորհանդիպում երեխաներին թույլատրվում է միայնակ խաղալ ավելի վաղ տարիքում, և պարզվել է նաև, որ նրանք ավելի շատ են խաղում, թեև արկածային խաղերի մակարդակը՝ ինչպիսիք են ծառ բարձրանալը կամ արագ հեծանիվ վարելը, ամբողջ Մեծ Բրիտանիայում մոտավորապես նույնն էր:

Մասնագետները պնդում են, որ գրավիչ արկածային խաղերն օգնում են երեխաներին սովորել գնահատել ռիսկերը և նվազեցնել անհանգստության մակարդակը:

Մեկ այլ խնդիր է երեխային տանը մենակ թողնելը: Օրենքը տարիքային սահմանափակում չի սահմանում երեխային մենակ թողնելու համար, բայց երեխային մենակ թողնելը, եթե դա նրան վտանգի տակ է դնում, հանցագործություն է: Ծնողները /խնամակալները/ կարող են պատասխանատվության ենթարկվել անտեսման համար, եթե պարզվի, որ նրանք երեխային վտանգի են ենթարկել՝ նրան տանը մենակ թողնելով:

Կարևոր է հաշվի առնել երեխայի հասունությունը: Հնարավոր և ընդունելի է հասուն 12 տարեկան երեխային մենակ թողնել, բայց ոչ 13 տարեկան կամ ավելի բարձր տարիքի, որը հասուն չէ, բավարար գիտակից չէ և կարող է իրեն կամ ուրիշներին վնաս պատճառել:

Մեծ Բրիտանիայի Երեխաների չարաշահման կանխարգելման ազգային ընկերությունը (NSPCC) խորհուրդ է տալիս՝

- նորածիններին, մանկահասակ և շատ փոքր երեխաներին երբեք չպետք է մենակ թողնել,
- 12 տարեկանից փոքր երեխաները հազվադեպ են այնքան հասուն/գիտակից լինում, որ կարողանան հաղթահարել արտակարգ իրավիճակները և չպետք է երկար ժամանակ մենակ մնան տանը,
- 16 տարեկանից ցածր երեխաները չպետք է գիշերը մենակ մնան տանը:
- Երբեք չպետք է երեխային մենակ թողնել տանը, եթե նա իրեն անհարմար է զգում՝ անկախ նրա տարիքից:

Այսպիսով՝ չկա որոշակի տարիք, երբ երեխան կարող է ապահով կերպով մենակ մնալ, քանի որ յուրաքանչյուր երեխա եզակի է, և յուրաքանչյուր իրավիճակ տարբեր է: Փոխարենը՝ ավելի լավ է վերլուծել իրավիճակը և որոշել, թե արդյոք կարծու՞մ եք, որ դա անվտանգ է ձեր երեխայի համար: Այդ առումով պետք է հաշվի առնել հետևյալ կետերը՝

- երեխայի տարիքը,
- նրա զարգացման մակարդակը և կարողությունը,
- իրեն անվտանգ պահելու և արտակարգ իրավիճակներում «Ինչ անել» իմանալու նրա ունակությունը,
- որքան «խելացի» է նա փողոցում և կարող է վտանգը զգալ,
- երեխայի վստահությունը. արդյոք նրան ք իրենց ապահով են զգում, երբ մենակ են մնում, թե անհանգստանում են,
- օրվա ժամը և այն հանգամանքը, թե որքան ժամանակ են նրանք մենակ մնալու,
- արդյոք նրանք պետք է հոգ տանեն եղբայրների ու քույրերի մասին, և եթե՝ այո, ապա որոնք են խնամքի պարտականությունները:

Նախքան ձեր երեխային թույլ կտաք դրսում լինել առանց մեծահասակների ուղեկցության, սկսեք սովորեցնել նրան ինքնապահովման հմտություններ, որպեսզի նա աստիճանաբար ավելի ինքնավստահ դառնա:



ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ



Մարդիկ ճանապարհորդելիս կարող են ենթարկվել առողջությանն առնչվող տարբեր ռիսկերի՝ պայմանավորված ճանապարհորդի առողջական վիճակով, ճամփորդության տեսակով, նպատակով և այլ գործոններով: Ծանապարհորդի առողջության վրա կարող են ազդել բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են՝ օդի ջերմաստիճանի և խոնավության փոփոխությունները, օդի աղտոտվածությունը, աշխատանքի անվտանգության խնդիրները, առողջապահական ծառայությունների հասանելիությունը, վարակիչ հիվանդությունների ազդեցությունը, անվտանգ սննդի և ջրի հասանելիությունը, սանիտարահիգիենիկ պայմանները, հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարությունների և սարքավորումների առկայությունը, ինչպես նաև՝ տեղական օրենքներն ու սովորույթները: Միջազգային ճամփորդությունները կարող են կապված լինել նաև սթրեսային գործոնի հետ: Հեռու լինելով ընտանիքից և ընկերներից՝ հաճախ լինում է օտար մշակույթին և լեզուներին հարմարվելու անհրաժեշտություն:

«Հերացի» վերլուծականի փոխանցմամբ՝ սթրեսի բարձր մակարդակը կարող է հանգեցնել ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական խնդիրների: Ուստի ճամփորդությունից առաջ բոլոր անձինք պետք է տեղեկատվություն կամ խորհրդատվություն ստանան առողջությանն առնչվող հնարավոր ռիսկերի վերաբերյալ՝ դրանցից խուսափելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով ճանապարհորդությունից առաջ, ընթացքում և հետո՝ համապատասխան կանխարգելիչ և նախազգուշական միջոցառումներ ձեռնարկելու համար:

Այս առումով Ծամփորդներին առաջարկվում է.

- պատրաստել ճամփորդական առաջին օգնության հավաքածուն, որը ներառում է այնպիսի իրեր, որոնք կարող են լինել անհրաժեշտ և դժվար հասանելի, բավարար քանակությամբ բժշկի նշանակմամբ կամ առանց դեղատոմսի դեղեր, կախված ճամփորդության նպատակից՝ կարող են ներառվել նաև միջատների վանող, արևապաշտպան, ալկոհոլի հիմքի վրա ձեռքերի ախտահանող միջոցներ, ջրի ախտահանման հարեր և առողջության ապահովագրության քարտ,
- ընտրել անվտանգ տրանսպորտային միջոց՝ խիստ պահպանելով երթևեկության կանոնները. կարևոր է նշել, որ ճանապարհորդության սպորտային պատահարները առողջ ճամփորդների շրջանում մահացուության հիմնական պատճառն են: Հարկավոր է լինել ուշադիր փողոցն անցնելիս, հատկապես այն երկրներում, որտեղ տարբերվող երթևեկային ուղղություն է,
- պաշտպանվել արևի անմիջական ճառագայթներից՝ կիրառելով արևապաշտպան միջոցներ՝ SPF 15 կամ ավելի բարձր, գլխարկ, փակ հագուստ: Հարկ է նշել, որ արևայրուք կարող է առաջանալ ոչ միայն արևադարձային լողափերում, այլ նույնիսկ ամպամած եղանակին, քանի որ դուք ենթարկվում եք ուլտրամանուշակագույն ճառագայթման ազդեցության ամենամեծ ռիսկի, երբ ճանապարհորդում եք ամռան ամիսներին՝ հասարակածին մոտ, բարձրադիր վայրերում կամ առավոտյան ժամը 10-ից 4-ն ընկած ժամանակահատվածում,

- ճիշտ հագուստ կրել, շոգ եղանակին կամ տաք կլիմա ունեցող երկրներ ճանապարհորդելիս կրել ազատ, թեթև, բաց գույնի հագուստ՝ հատկապես դրսում երկար գտնվելիս ջերմային հարված չստանալու համար: Ձերմության հետ կապված այլ հիվանդություններ ձեռք բերելը պայմանավորված է ճամփորդության նպատակից, գործունեության տեսակից, օդի խոնավության մակարդակից և տարիքից,
- միջատների խայթոցից պաշտպանվելու համար անհրաժեշտ է կիրառել անհատական պաշտպանիչ միջոցներ, միջատներին վանող միջոցներ՝ մոծակների, տզերի, լվերի խայթոցից խուսափելու համար՝ թեթեմեկում եք այնպիսի երկրներ, որոնք անապահով են արյունային վարակների համար, ինչպիսիք են՝ մալարիան, դեղին տենտը, զիկան, դենգեն, չիկուգունիան և լայմի հիվանդությունը,
- ճանապարհորդների փորլուծային հիվանդությունների կանխարգելում. որոշ երկրներ այցելելիս մարդիկ ենթարկվում են աղիքային վարակների բարձր ռիսկի, հատկապես՝ խիտ բնակչություն, անբավարար սանիտարահիգիենիկ պայմաններ, խմելու ջրի, սննդի նկատմամբ անվտանգության խնդիրներ ունեցող երկրներում, այս առումով առաջարկվում է հաճախակի ձեռքերի լվացում օճառով կամ ախտահանում, շշալցված ջրի օգտագործում, բացի այդ անհրաժեշտ է մրգերը, բանջարեղենը, կանաչիներն օգտագործելուց առաջ մանրակրկիտ լվանալ շշալցված, եռացված կամ քլորացված ջրով, օգտագործել միայն բավարար եփված սնունդ, խուսափել հատկապես հում ծովամթերքից, օգտագործել բացառապես տաք ըմպելիքներ, խուսափել սառույցից, սննդամթերքը պահել սառնարանային պայմաններում, հատկապես՝ շուտ փչացող, հատկապես անհրաժեշտ է Լինել հետևողական երեխաների անձնական հիգիենայի պահպանման նկատմամբ,
- չափազանց կարևորվում է պատվաստումների անհրաժեշտությունը. Ծամփորդությունից 4-6 շաբաթ առաջ առաջարկվում է խորհրդակցել բժշկի հետ պատվաստումների անհրաժեշտության մասին: Կախված պատվաստումային կարգավիճակից՝ երբեմն անհրաժեշտ է լինում պատվաստվել կամ խթանիչ դեղաչափ ստանալ հետևյալ պատվաստանյութերով՝ COVID-19, ԱԿԴՓ (դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ, գրիպ, ԿԿԻՄ (կարմրուկ, կարմրախտ, խոզուկ), պոլիոմիելիտի, կատաղության պատվաստանյութեր, իսկ Ծանապարհորդությունից հետո ինքնազգացողության վատացման դեպքում՝ հատկապես ջերմության բարձրացմամբ ուղեկցվող, դիմեք բժշկի խորհրդատվության՝ նշելով ձեր գտնվելու վայրի մասին:

ԿԱՐԵՎՈՐԵԼՈՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼԻ ՎՆԱՄՎԱԾՔՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ



Ամեն տարի մայիսի 20-ին ամբողջ աշխարհի բժիշկները, ովքեր մասնագիտացված են վնասվածքաբանության և օրթոպեդիայի ոլորտում, նշում են իրենց մասնագիտական տոնը:

Անդրադառնալով թեմային՝ «Հերայի» վերլուծականը փաստում է, որ վնասվածքաբանությունը բժշկության հնագույն ոլորտներից է:

Հնագետները մինչ օրս գտնում են տարբեր հարմարանքներ և գործիքներ, որոնք օգտագործվել են հնում կոտրվածքների և ոսկրերի տեղաշարժերի բուժման համար:

Վնասվածքաբանության և օրթոպեդիայի մասին առաջին հիշատակումները հանդիպում են դեռևս հին արձանագրություններում, մասնավորապես՝ Հիպոկրատի «վնասվածքների մասին» և «հոդերի մասին» աշխատություններում: Իհարկե, այդ օրերի և մեր օրերի մեթոդներն ու հնարավորություններն անհամեմատելի են, բայց բժիշկների առաքելությունը նույնն է՝ օգնել մարդկանց չվնասելով նրանց:

Հին Հունաստանում առաջին անգամ օգտագործվել է նաև «վնասվածքաբանություն» տերմինը, որը բառացի նշանակում է «խեղման վարդապետություն»: Այսպես էր կոչվում բժշկության այն ճյուղը, որն ուսումնասիրում էր հյուսվածքների և օրգանների տրավմատիկ վնասվածքները:

Բժշկության մեջ բոլոր մասնագիտությունները կարևոր են, բայց վնասվածքաբանությունն այն ոլորտն է, որտեղ բժիշկները երբեք անգործ չեն լինում: Մեր օրերի կյանքի արագընթաց դիթամբ՝ տարբեր վնասվածքների ռիսկով, բազմաթիվ ճանապարհատրանսպորտային պատահարներով և կենցաղային վնասվածքներով, յուրաքանչյուրին վտանգի տակ է դնում:

Եվ առաջինը օգնության են հասնում բժիշկ-վնասվածքաբանները, ովքեր օր ու զիշեր կատարում են իրենց բարդ ու պատասխանատու աշխատանքը:

Ի վերջո, նրանք անընդհատ բախվում են բազմաթիվ և բազմապիսի վնասվածքների, երբեմն՝ շատ ծանր, բայց միշտ փորձում են հաղթող դուրս գալ վնասվածքների դեմ պայքարում:

Վնասվածքաբան-օրթոպեդի մասնագիտական օրը կարևոր առիթ է նշելու վնասվածքաբանների նվիրվածությունն ու փորձը, ովքեր անխնայ աշխատում են կյանքեր փրկելու ուղղությամբ:

Մասնա լավ առիթ է կրթելու, քարոզելու և հասարակությանը ներգրավելու կանխարգելիչ վնասվածքների կրճատման և ամբողջ աշխարհում վնասվածքների խնամքի հասակարգերի բարելավման գործում:

Անհատների, համայնքների և կազմակերպությունների մասնակցությունը երաշխավորում է այս մեծ օրվա հաջողությունը:

Շնորհավորում ենք բոլոր վնասվածքաբան-օրթոպեդներին մասնագիտական օրվա առթիվ:

«Հերայի» վերլուծական Ձեռքերի ՀԻԳԻԵՆԱՅԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ



2008 թվականից սկսած՝ մայիսի 5-ը նշվում է որպես Ձեռքերի հիգիենայի համաշխարհային օր: 5.5 ամսաթիվը խորհրդանշում է մարդու յուրաքանչյուր ձեռքի 5 մատները: Ձեռքերի հիգիենայի համաշխարհային օրվա ամենամյա անցկացման մասին որոշումն ընդունվել է 2008 թվականին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի մասնակցությամբ և Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ համատեղ:

Այս տարվա կարգախոսն է՝ «Դա կարող է լինել ձեռնոցը, բայց ձեռքերի հիգիենան մշտապես պարտադիր է»:

Անկախ նրանից՝ ձեռնոցներ կրում են, թե ոչ, ճիշտ ժամանակին և պատշաճ կերպով ձեռքի հիգիենայի պահպանումը շարունակում է մնալ առողջապահական խնամք ստացողների, ինչպես նաև առողջապահական ծառայություններ մատուցողների պաշտպանության ամենակարևոր միջոցներից մեկը:

Առողջապահության ոլորտում օգտագործվող բժշկական ձեռնոցները սահմանվում են որպես միանգամյա օգտագործման ձեռնոցներ, որոնք օգտագործվում են բժշկական ընթացակարգերի ընթացքում: Այս ձեռնոցները կարող են ադոտովել նույնքան հեշտությամբ, որքան մերկ ձեռքերը և 100%-ով չեն պաշտպանում վտանգից: Կրելուց հետո բժշկական ձեռնոցները պետք է հեռացվեն պացիենտին դիպչելուց հետո, և ձեռքերի հիգիենան պետք է անմիջապես իրականացվի ԱՀԿ-ի «ձեռքի հիգիենայի 5 պահերը» ուղեցույցների համաձայն:

Ձեռքերի հիգիենայի կարևոր «5 պահերը», որոնց հատկապես պետք է հետևել, հետևյալն են՝

- պացիենտին դիպչելուց առաջ,
- մաքուր և ասեպտիկ գործողություններից առաջ,
- կենսաբանական հեղուկների հետ շփվելուց հետո,
- պացիենտին դիպչելուց հետո,
- պացիենտի շրջապատի իրերին դիպչելուց հետո:

Աշխարհում գրիպի նոր ձևերի և կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) բռնկումների առումով՝ անձնական հիգիենայի, մասնավորապես ձեռքերը լվանալու կարևորությունը հիմնական կանխարգելիչ միջոցառումների շարքում գտնվում է առաջին տեղում:

ԱՀԿ-ի տվյալների համաձայն՝ ամբողջ աշխարհում տարեկան արձանագրվում է ներհիվանդանոցային վարակների 14 միլիոն դեպք, դրանց 40-80%-ը փոխանցվում են ձեռքերի միջոցով:

Ձեռքերի ժամանակին և ճիշտ հիգիենիկ մշակումը բուժանձնակազմի և պացիենտների անվտանգության գրավական է:

«ԵՊԲՀ-Ն ՄԵՐ ՀԵՏԱԳԱ ԿՅԱՆՔԻ ՀԻՄՆԱՍՅՈՒՆՆ ԷՐ». ՀՆԻԿ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՏԱՐԻՆԵՐ ԱՆՑ ALMA MATER ԵՆ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՎ



Ադիտյա Դվիվեդին և Շիլպա Ռանան շորջ 20 տարի առաջ միևնույն հանդիպեցին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում: Այսօր նրանք արդեն ընդամենը են Երևանում՝ 9-ամյա Ասյանի և 5-ամյա Ասհանայի ուղեկցությամբ: Հնդիկ շրջանավարտների հետ է նաև նրանց համակուրսեցին և մոր ընկերուհին՝ Աշիտա Բհուպեն:

2009 թվականին բուռն ավարտելուց ի վեր նրանք մշտական կապի մեջ են եղել, պարբերաբար քննարկել Հայաստան գալու միտքը «Առաքելություն դեպի Հայաստան» կոչվող ընդհանուր խմբում:

Ադիտյա Դվիվեդին բժշկական համալսարանի ավարտելուց հետո վերադարձավ Հնդկաստան, մի քանի տարբեր հիվանդանոցներում աշխատելուց հետո նա այժմ գործունեություն է ծավալում Հնդկաստանի բանակում՝ որպես

բժիշկ: Վերջին 3-4 ամսվա ընթացքում Լիբանանում ՄԱԿ-ի հետ համագործակցության ծրագրով աշխատում է կազմակերպության խաղաղապահ ուժերում:

«ՄԱԿ-ի առաքելության շրջանակում շատ հայ սպաների եմ հանդիպել, որոնք իմ լավ ընկերներն են դարձել», – ուրախությամբ նշում է հնդիկ շրջանավարտը: Նա մասնագիտացել է վստավածքաբանության և օրթոպեդիայի բնագավառում, կինը՝ Շիլպան ևս սովորել է ընդհանուր բժշկության ֆակուլտետում, չնայած՝ այժմ զբաղվում է երեխաներով, չի աշխատում, բայց պլանավորում է մասնագիտությանը համապատասխան աշխատանք գտնել հետագայում:

«Մեր հոգին հայկական է, մեր կապը Հայաստանի հետ ուրիշ է: Մա մեր երկրորդ տունն է: Հիշողությունները մեր մտքում շատ թարմ են», – ասում է Շիլպա Ռանան: Մինչև հիմա էլ շրջանավարտները հստակ հիշում են դեպի հարազատ բուռն տանող փողոցը, իսկ Հնդկաստանում հայկական երաժշտություն են լսում: «Մենք այսօրեղ մեծացել ենք. ընդամենը 17 տարեկան էինք, երբ առաջին անգամ եկանք այստեղ, հիմա արդեն 40 ենք: Մենք հասունացել ենք այստեղ, հենց այդ պարճառով էլ ավելի շատ կապված ենք Հայաստանին, քան Հնդկաստանին», – անկեղծանում է շրջանավարտը:

Աշիտա Բհուպեն Մումբայում աշխատում է որպես ընդհանուր թերապիայի բժիշկ, կլինիկական սրտաբան և գինեկոլոգ:

«Միշտ ցանկացել եմ բժիշկ դառնալ, Հնդկաստանում այն ժամանակ դժվար էր բժշկական կրթություն սրանալը: Որոշակի ուսումնասիրություններից



հերոս ընտանիքներն առավ Երևանի պետական բժշկական համալսարանի վրա: Գեյնում դեպի անասնաբուժական համալսարանի փաստաթղթային հարցերը կարգավորելուց հետո 2003 թվականին ինքնաթիռը վայրէջք կատարեց Երևանում: Այստեղ ձեռք բերված փորձառությունը շարքում էր, յուրահավուստ, այստեղ մենք շարքում սովորեցինք, ոչ միայն բժշկական մասնագիտություն ունենալ, այլև ստորյա կյանքում, մասնավորապես՝ ինչպես լինել լավ մարդ, այստեղ ձեռք բերեցինք լավ ընկերներ: Մենք հաջողակ ենք, քանի որ ընտանիքը Հայաստանը՝ բժիշկ դասնալու համար, և ԵՊԲՀ-ում սրագած կրթության շնորհիվ ենք մենք այսօր կյանքում հաջողություններ գրանցում», – ընդգծեց նա՝ հավելելով, որ շատ է կարևորում այն օրերը, սիրելի դասախոսներին:



Աշխտա Բեռնալեն հիշում է, որ Երևանում վիրահատության էր ենթարկվել, ծանր վիճակում էր. *«Ծնողներս շարք անհանգիստ էին, ուզում էին գալ Հայաստան, ես նրանց հանգստացրի՝ ասելով, որ այստեղ են իմ ընկերները, որոնք հոգ կտանեն իմ մասին»:*

Հուզիչ և ջերմ էր շրջանավարտների հանդիպումը միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Երվանդ Սահակյանի հետ. նրանք վերհիշեցին ուսանողական հետաքրքիր ու հագեցած տարիները:

«Դեռ դեկանի կարգավիճակում Երվանդ Սահակյանը մեր անհասիան կապն էր բժշկական համալսարանի հետ: Նա շարք էր խոսում, բայց՝ միշտ րեղին: Երբ ինչ-որ ինտերներ էին առաջանում, երբ մեզ համար դժվարին ժամանակներ էին, նա միշտ մեր հասարարուն հենասյունն էր ցանկացած հարցում», – հիշում է Շիլպա Ռանան:

Առաջին անգամ Երվանդ Սահակյանն անձամբ ինքնաթիռում ուղեկցում էր ապագա ուսանողներին դեպի բժշկագիտության աշխարհ: Այդ տարի ամռան ընթացքում պրոռեկտորը 4 անգամ մեկնել էր Հնդկաստան:

Գայանե Ավետիսյանին հանդիպելով՝ նրանք չկարողացան զսպել արցունքները՝ իրենց նախկին դասախոսին տեսնելով արդեն օտարերկրացիների ուսուցման աշխատանքների դեպարտամենտի պետի կարգավիճակում:

Հնդիկ շրջանավարտները պատրաստակամություն հայտնեցին ցանկացած հարցով աջակցել մայր բուհին:

«Մենք հայարար ենք լինել «Հերացի» ընտանիքի անբաժան մասը», – եզրափակեցին նրանք:

Իսկ հնդիկ բժիշկների՝ ապագա սերունդներին ուղղված նրանց խորհուրդն էր՝ շատ սովորել, դասեր քաղել փորձառությունից, ուսումնասիրել հայկական մշակույթը և լիարժեքորեն վայելել կյանքը մեր արևոտ երկրում:



ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏՐԵԼ Է ՎՍՏԱՀԵԼԻ ՄԱՄՆԱԳԵՏ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՆԽԱԽՏ ՈՐՈՇՄԱՄԲ



Արտյոմ Զաքարյանը սովորում է ընդհանուր բժշկության ֆակուլտետի 3-րդ կուրսում: Նրա ցանկությունն է դառնալ արհեստավարժ, վարահեղի մասնագետ: Ուսանողը խոսարովանում է, որ դեռ մանուկ հասակից ցանկացել է բժիշկ դառնալ: «Դեռևս իմ արամհարկի արարողությանը բազմաթիվ խաղայիքներից և իրերից ես ընտրել եմ խաղայիք ֆանենդոսկոպ:

Դպրոցական տարիներից ինձ միշտ հետաքրքրել է մարդու օրգանիզմի կառուցվածքը, թե ինչպես է այն աշխատում: Մինչ այժմ կենդանի բջջի աշխատանքը համարում եմ զարմանահրաշ երևույթ», - ընդգծում է ապագա բժիշկը:

Արտյոմը նշում է, որ ծնողներն իրեն հորդորել են ընտրել այլ մասնագիտություն՝ հաշվի առնելով բժշկի աշխատանքի բարդությունը, դժվարին ուղին:

«Ընտանիքում բժիշկներ չկան, ես առաջինն եմ: Ինչպես գիտեք՝ շատ հաճախ ծնողներն են իրենց զավակներին ուղղորդում բժշկի մասնագիտությունն ընտրել, սակայն իմ դեպքում ծնողներս փորձում էին համոզել հակառակը՝ բացատրելով, որ շատ բարդ է լինելու ուսումնական երկար գործընթացը, բայց ես, այդ ամենը գիտակցելով, վստահ ասացի, որ ինձ համար հեշտ կլինի, քանի որ շատ եմ սիրում այդ մասնագիտությունը», - ասում է Արտյոմ Զաքարյանը, ում խոսքով՝ ուսումնառության 3 տարվա ընթացքում բուիը սովորեցրել է իրեն «բժշկական մտածողություն»՝ վերլուծել իրողությունները, գտնել պատճառահետևանքային կապեր, չվախենալ խնդիրներից և լինել պատասխանատու:

«Ամենակարևորն ինձ համար նաև մարդկանց հետ ծանոթությունն է: Առաջինը կցանկանայի անդրադառնալ խմբիս՝ մի միջավայրի, որտեղ բոլորս միասնական ենք, օգնում ենք միմյանց բոլոր հարցերում, օժանդակում և նույնիսկ 3-րդ կուրսում կարողանում ենք գտնել ազատ ժամանակ՝ փոքրիկ խնջույքներ կազմակերպելու և շաբաթ-կիրակի մի փոքր բեռնաթափվել ծավալուն ու հետաքրքիր ուսումնական գործընթացից: Հաջորդը դասախոսական անձնակազմն է, ինձ դասավանդած և դասավանդող յուրաքանչյուր դասախոսից առանձնահատուկ գոհ եմ, թե իրենց՝ դասը մատուցելու ձևի, թե մարդ տեսակի համար: Նրանցից յուրաքանչյուրն ունի մի յուրօրինակ առանձնահատկություն, նրանք ևս պատրաստ են օգնել քեզ ցանկացած հարցում: Շփվելու հնտությունը մեկ այլ «պատմություն է»: Պացիենտները հիշում են ոչ միայն դեղերը, բուժումը, որոնք բժիշկը նշանակել է, այլև այն, թե ինչպես է բժիշկը շփվել, հաղորդակցվել իրենց հետ: Բուիը սովորեցնում է լինել ուշադիր շփման մեջ, հարգալից, դրսևորել էմպաթիա (կարեկցանք)՝ և պացիենտների, և գործընկերների հետ: Իմ կարծիքով՝ լավ բժիշկը միայն գիտակ մասնագետ չէ, այլև մարդ, ում վստահում են», - շեշտում է ապագա բժիշկը:

Նա համոզված է, որ ճակատագրական սխալներից խուսափելու համար անհրաժեշտ է ցանկացած քայլ կատարելուց առաջ բավականին խորը մտածել, գիտակցել հնարավոր հետևանքները, սխալվելուց հետո վերլուծել դրանք՝ կրկնություն թույլ չտալու համար:

Արտյոմ Զաքարյանը, որպես նեղ մասնագիտացում, որոշել է ընտրել էսթետիկ պլաստիկ վիրաբուժությունը:

«Ապագայում ցանկանում եմ ուսումնա շարունակել ԱՄՆ-ում, այդ նպատակով հաճախում եմ USMLE-ի պարապմունքների, նախապատրաստվում եմ կյանքիս հաջորդ փուլին՝ ցանկանում եմ դառնալ մասնագետ, ում վստահելը հեշտ կլինի, և որը կկարողանա նվիրել իր պացիենտներին գեղեցկություն և երջանկություն: Առաջին կուրսից տարբեր կլինիկաներում ներկա եմ եղել տարբեր վիրահատությունների, որոնք կատարել են տարբեր մասնագետներ: Ամենաշատը մասնակցել եմ պլաստիկ վիրահատությունների: Վիրաբույժների աշխատանքը տեսնելով ու վերլուծելով՝ կարծում եմ կկարողանամ առաջարկել նոր խոսք այս ոլորտում: Նախատեսում եմ շարունակել այցերս կլինիկաներ, ներկա լինել վիրահատական միջամտությունների», - նշում է ԵՊԸՈՒ ուսանողը:

ԱՆԻՐԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԵԾ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ Է ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿՆ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՒՄ

Պարասխանարվության զգացումը սեփական նպատակների հանդեպ ձևավորում է հաջողության բանալին: Քրոնաջան աշխատանքի, հավասարի շնորհիվ կարելի է նաև անիրական իրականացնել: Այս համոզմանն է ընդհանուր բժշկության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Սեդա Արմենակյանը:



«Աստիճան, հայրենիք, բժշկություն. այս երեք բառերն են ամփոփում կյանքի իմաստը ինձ համար: Բժիշկներն Աստուծո ընտրյալներ են: Ամեն մարդու վիճակված չէ բժիշկ դառնալ: Հոգուս խորքում հավաստում եմ, որ այդ ընտրյալներից մեկը եմ: Ինձ ստավել լավ պարկերացրել եմ սպիտակ խաչաթուղ: Ծնորհակալ եմ նաև ծնողներին՝ ինձ ամեն վայրկյան ոգևորելու ու իրենց անուրանալի ներդրումն ունենալու իմ կայացման ճանապարհին», - նշում է ապագա բժիշկը:

Խոսելով նեղ մասնագիտության ընտրության մասին՝ Սեդան նշում է, որ ցանկանում է ուռուցքաբան դառնալ. «Հասկանում եմ, որ այս հիվանդությունը բժշկության ամենամեծ թշնամիներից է: Շատ հիվանդություններ արդեն ունեն իրենց լուծումները, չի բացառվում, որ տասնամյակներ անց քաղցկեղը ևս դասվի այդ շարքերին»:

Բժշկությունից գատ Սեդան սիրում է նաև ստեղծագործել, բնության, հայրենիքի, սիրո թեմաները ուղեկից են նրա մտքին և հոգուն:

«Մյունեց լինելը, այդ բարձրիկ լեռների ու խորհրդավոր ձորերի գրկում մեծանայր չի կարող մարդու միտքը չուսավորել: Այդպես ծնվում էին իմ առաջին բանաստեղծությունները Հայաստանի մասին: Այդ ժամանակ տասնմեկ տարեկան հագիվ լինեի: Հիմա մի ամբողջ ժողովածու ունեմ Հայաստանից մինչև սեր, Արարարից մինչև Սևան գովաբանող: Ուսանողական տարիներին սկսեցի նաև արձակ արեղծագործել: Երեք վիպակներ ունեմ, որոնք ապագայում պարբերաբար կամ հրատարակել»:

Հաճախ, երբ գրիչը հոգնում է ինձնից՝ մատիպներն ու վրձիներն են օգնության հասնում: Էլի՛ Մյունեյաց աշխարհն է իմ մեջ գոյներն այդպես յուրօրինակ ընկալելու շնորհք դրել: Իսկ երբ հոգնում եմ նաև այդ ամենից՝ մարներս արեղներն են ձգվում: Գաշնամուր նվազելն ու երգելն իմ ամենասիրելի գրադիմունքներից է», - նշում է հերացիակյանը:

ԵՊԲՀ սովորողը եղել է նաև համալսարանի բաստկերոլի ու շախմատի խմբակների անդամ ու մի շարք մրացաշարերի մասնակիցն ու հաղթողը: «Հաղորդակցման հիմունքներ» առարկայի մրցույթի հաղթող թիմի ավագն էր, ճանաչվել է լավագույն խոսնակ, ու ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում մասնակցել է «Առաջնորդությունը առողջապահությունում» ծրագրին՝ ներկայացնելով բժշկական մայր բուհը:

«Համալսարանը, բացի նրանից, որ կրթում է, ձևավորում է նաև բարձր որակներով օժտված մարդ: Ինձ լավ եմ զգում, որ հենց մեր համալսարանում եմ սովորում, ունեմ շար խելացի ընկերներ ու ամենաբարձր որակավորմամբ դասախոսներ», - ամփոփելով նշում է ուսանողը:

Ներկայացնում ենք նաև Սեդայի ստեղծագործությունից մի պատառիկ:

Հայաստան...
Քեզ ինչպես ես գովեմ:
Բառերս ես ինչպես շարեմ,
Որ հոգիս քո հոգուն հանձնեմ:
Ինչպիսի բառեր գտնեմ,
Որ քեզ համահունչ լինեմ,
Որ շքեղությանդ չափը
Արժանի բառերով չափեմ:
Քո հազարամյա ցավը
Ես ինչ արցունքով չափեմ:
Միգուցե արյան կաթիլով...
Թե՛ն հեղեղներով ներկեմ,
Քո այդ վեհագույն հաղթանակները
Ես ո՞ր մի հերոսիդ վերագրեմ:
Պատմվածքերդ այդ բազմազարդ
Ես ո՞ր պոետովդ սիրեմ:
Քո հավերժական վրեժը
Ես ո՞ւմ աչքերում փնտրեմ...
Մոթնե, թե՛ Նժդեհ կարդամ,
Թե՛ն իմ աչքերում ման գամ...
Հայաստան...
Դու իմ հավերժական սեր:
Իմ սերը քեզ ինչպես սվիրեմ:
Ինչպես իմ հոգու կտորը
Ես քո անունով դաջեմ...
Մասիսդ ինչպես նկարեմ,
Որ նա էլ իմը լինի:
Սևանդ ես ինչպես վրձնեմ,
Որ վանքը հեռվում չկորչի...
Տաթևդ ինչպես քանդակեմ,
Երբ արծվի պես թռչել չգիտեմ...
Ասա ինձ՝ ինչպես ես անեմ,
Որ հավերժ քո սրտում լինեմ:

ԱՊԱԳԱ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺԻՇԿԸ ԳԻՏԱԿՑՈՒՄ Է ԳԻՏԵԼԻՔԸ ԿՅԱՆՔԵՐ Է ՓՐԿԵԼՈՒ



Ռազմաբժշկական ֆակուլտետի 6-րդ կուրսի ուսանող Վահագն Պետրոսյանը սպազա մասնագիտությունն ընտրել է հաշվի առնելով ֆակուլտետի առավելությունները, մինչև այս ժամանակ չմոռանալով առաջադրված խիստ պահանջները:

«Ունեի հետաքրքրությունների մեծ շրջանակ, ինչպես նաև ընտրության մեծ հնարավորություն, բայց ժամանակի ընթացքում հասկացա, որ մասնագիտությունս պետք է կապված լինի բժշկության հետ: Երկար մտածելուց հետո ընտրեցի ռազմական բժշկի ուղին: Ռազմական բժշկությունը թույլ է տալիս միաժամանակ համադրել մարդկանց կյանքեր փրկելն ու հայրենիքին ծառայելը: Հեշտ չեմ կայացրել այս որոշումը, բայց վստահ կարող եմ ասել, որ չեմ փոշմանել», - ասում է նա՝ ավելացնելով, որ դա առանց ծնողների, հարազատների, ինչպես նաև ուսուցիչների աջակցության չէր կարող լինել, որոնք մանկուց իրեն առաջնորդում և աջակցում էին ամեն հարցում:

Ներկայացնելով մինչև բժշկական համալսարան և այնտեղ անցած ճանապարհը՝ նշում է, որ սովորել է Վանաձորի թիվ 5 ավագ դպրոցում:

Միրով է հիշում դպրոցական տարիները: Առարկաներից հատկապես սիրել է կենսաբանությունն ու քիմիան:

«Դեռ դպրոցական տարիներից շրջապատված եմ եղել նվիրված ու հոգատար մանկավարժներով: Մասնագիտական կողմնորոշման հարցում կարևոր դեր են ունեցել իմ ուսուցիչներն ու դասուցիչը: Նրանք տվել են ոչ միայն գիտելիք, այլև՝ պատասխանատվության զգացում և հավատ՝ սեփական ուժերի հանդեպ», - ընդգծում է սպազա ռազմական բժիշկը:

6-րդ կուրսի կուրսանտ Վահագն Պետրոսյանը նույնն ասում է բուռն անցած ճանապարհի մասին: «Մեր դասախոսներն ու սպայական կազմը՝ իրենց բարձր մարդկային և մասնագիտական արժեքներով, ինձ համար եղել են օրինակ: Այս տարիների ընթացքում նրանցից սովորել եմ տարբեր արժեքներ, որոնք դարձել են իմ բնավորության անբաժան մասը», - կիսվում է նա:

Ապագա ռազմական բժիշկը սիրում է զբաղվել լողով, երաժշտությամբ, կարդալ գեղարվեստական գրքեր, սովորել լեզուներ, շատ է սիրում ճամփորդություններ և ժամանակ անցկացնել ընկերների հետ: Ուսման հետ մեկտեղ փորձում է չհրաժարվել նախասիրություններից, քանի որ դրանք օգնում են պահպանել ուժերն ու թարմացած վերադառնալ ուսումնական առօրյային:

Բժշկականում սովորելը բարդ է և պահանջում է աշխատասիրություն, կամք և գիտակցում: «Իմ դեպքում շարժիչ ուժը միշտ եղել է գիտակցումը, որ ձեռք բերած յուրաքանչյուր գիտելիք կարող է մի օր կյանք փրկել: Ես ինձ միշտ հիշեցնում եմ, որ սովորում եմ ոչ միայն լավ գնահատականների, այլև այն բանի համար, որ մի օր իմ գիտելիքով կարողանամ օգուտ տալ մարդկանց: Այն միտքը, որ այս ոլորտում սխալը կարող է անդառնալի լինել, ստիպում է լրջորեն մոտենալ յուրաքանչյուր առարկայի: Եվ, իհարկե, ինձ մղել է սերը՝ դեպի այս մասնագիտությունը: Ոչինչ այդքան ուժ չի տալիս, որքան այն զգացումը, որ դու ճիշտ տեսնում ես: Այդ զգացողության շնորհիվ ուզում ես ամեն օր կատարելագործվել՝ ոչ միայն քեզ համար, այլև՝ մյուսների», - մանրամասնում է կուրսանտը:

Նեղ մասնագիտության հարցում դեռ վերջնական որոշում չի կայացրել, բայց դա նրա համար ոչ թե անորոշություն է, այլ հնարավորությունների մեծ դաշտ: «Հիմա ես դիտարկում եմ ինձ տարբեր ոլորտներում՝ փորձելով հասկանալ ոչ միայն որտեղ եմ ավելի ուժեղ, այլև՝ որտեղ կարող եմ առավել օգտակար լինել», - ասում է նա՝ գիտակցելով, որ յուրաքանչյուր մասնագիտություն բժշկության մեջ պահանջում է պատասխանատվո-

յուն և ունի հստակ պահանջներ: Վստահ է՝ ընտրությունը կլինի գիտակցված, և ոչ միայն աշխատանք, այլ նաև կյանքի ուղի:

Ռազմական բժիշկ դառնալու ճանապարհը պահանջում է ոչ միայն մասնագիտական հմտություններ, այլև ներքին պատրաստվածություն: «Պետք է դեռ շատ աշխատեմ ինքս ինձ վրա, որպեսզի դառնամ լավ մասնագետ: Ցանկանում եմ խորացնել իմ բժշկական և ռազմական գիտելիքը, ուսումնասիրել լեզուներ՝ մասնագիտական շփման շրջանակներն ընդլայնելու համար, հնարավորության դեպքում՝ շարունակել կրթությունս արտերկրում», - շեշտում է նա՝ վստահություն հայտնելով, որ բարեխիղճ աշխատանքով, մշտական ինքնագարգացմամբ ու նպատակաուղղվածությամբ հնարավոր կլինի դառնալ այն մասնագետը, որն արժանի է համազգեստին ու վստահությանն՝ ինչպես զինվորների, այնպես էլ խաղաղ բնակչության կողմից:

Խոսելով բժշկի մասնագիտությունն ընտրած մարդկանց հատկանիշների մասին՝ նա շեշտում է, որ նախ և առաջ նրանք պետք է ունենան բացառիկ կամքի ուժ, քանի որ այս ուղին անցնելն այդքան էլ հեշտ չէ և պահանջում է բարձր կամային հատկանիշներ, հետևողականություն ու մեծ նվիրում: Պետք է գիտակցել մասնագիտության լրջությունը, հասկանալ, որ շատ դեպքերում անհրաժեշտություն է լինելու զոհաբերել ինչ-որ բան՝ պարտքը կատարելու համար, չէ՞ որ բժիշկը իր ուսերին կրում է ամենաբարձր պատասխանատվությունը՝ մարդու կյանքի ու առողջության համար:

«Ռազմական բժիշկն առաջին հերթին պետք է լինի կայացած անհատ՝ հաստատուն արժեքային համակարգով, պետք է արագ կողմնորոշվի փոփոխվող պայմաններում, ունենա հոգեբանական կայունություն, լինի կարեկցող, հումանիստ, բայց միևնույն ժամանակ մնա սառնասիրտ և կայացնի կշռադատված որոշումներ՝ անգամ ճնշման տակ: Տարբեր հատկանիշներն ընդհանրացվում են մեկ նպատակով՝ ծառայել մարդուն և հայրենիքին»:

Նրա կարծիքով՝ անշուշտ, առողջապահության համակարգում խնդիրները բազմազան են, և դրանց ամբողջական ու միաժամանակյա լուծումը հեշտ գործ չէ:

«Կարևոր է ապահովել հավասար բժշկական հասանելիություն թե՛ Երևանում, թե՛ մարզերում: Եթե ունենանք լավ կադրեր և համապատասխան տեխնիկա տեղում, ապա կունենանք համապատասխան վստահություն, դիմելիություն և շատ խնդիրներ հնարավոր կլինի լուծել հենց սկզբնական փուլում՝ չկորցնելով թանկագին ժամանակն ու խուսափելով բարդություններից», - ասում է Վահագնը, ով առնչվելով տարբեր հիվանդությունների հետ՝ հասկացել է, որ շատ խնդիրներ կարելի է լուծել օգտվելով ամենապարզ միջոցներից՝ կանխարգելումից, վաղ հայտնաբերումից և լուսավորչական աշխատանքներից: Բայց նա միայն համակարգի բարելավումը բավարար չի համարում, այլ կցանկանար, որ փոխվի ազգային մտածելակերպի այն մասը, որը դրդում է մարդկանց դիմել բժշկի միայն այն ժամանակ, երբ հասարակ խնդիրը վեր է ածվում լուրջ ախտաբանության:

«Ապահովելով բժշկական բարձր որակ, հասանելիություն, ինչպես նաև մարդկանց գիտակցված մոտեցումն իրենց առողջությանը, կունենանք ավելի առողջ հասարակություն ու ավելի թեթևացած, արդյունավետ աշխատող առողջապահական համակարգ», - եզրափակում է նա:



ԵՊԻՏ ԴԱՍԱԽՈՍԸ՝ «ՇԱՌԼ ԱԳՆԱՎՈՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ» ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿ



Այս տարվա գարնանը լույս է տեսել հասարակագիտական առարկաների ամբիոնի ավագ դասախոս, պ.գ.թ., դոցենտ **Արշալույս Տետեյանի «Շառլ Ագնավորը և Հայաստանը»** գիրքը:

Հեղինակի գնահատմամբ՝ գիրքն առաջին հերթին երախտագիտության արտահայտություն է 1980-ականներին ծնված այն բազմաթիվ երեխաներից մեկի կողմից, որոնց ապագայի համար այդքան մտահոգ էր բոլոր ժամանակների մեծագույն հայերից մեկը:

216 էջ ունեցող հրատարակությունը ֆրանսարենակ նշանավոր երգիչ, շանտոնիե Շառլ Ագնավորի տասնամյակների պատմություն ունեցող գործունեությունը ներկայացնելու փորձ է:

Բազմաթիվ սկզբնաղբյուրների, հուշագրությունների, հայաստանյան և արտասահմանյան մամուլում հրատարակված նյութերի, հեռուստահաղորդումների և հարցազրույցների միջոցով փորձ է արվել ներկայացնել Շառլ Ագնավորի

նվիրումը Հայաստանին:

«Շատերը կարող են կարծել, թե Ագնավորի կյանքի, գործունեության, ստեղծագործական ուղու մասին գրեթե ամեն ինչ հայտնի է: Չէ՛ որ երգիչն ինքը մի քանի կենսագրական է գրել, իր ձախողումների, վերելքների մասին պատմել բազմաթիվ հարցազրույցներում: Ոչ միայն Ագնավորի, այլև Ագնավորյանների էպոպեան հոյակապ ներկայացրել է ընտանիքի մյուս նշանավոր ներկայացուցիչը՝ Աիդա Կառվարենց-Ագնավորը, իր «Ափարիկա, իմ փոքրիկ եղբայրը» գրքում: Ագնավորի մասին գրքեր են հրատարակվել բազմաթիվ լեզուներով, աշխարհի տարբեր

երկրներում: Իրանք պատմում են նրա ստեղծագործական ուղու, հյուրախաղերի, արտիստական կարիերայի ամենատարբեր կողմերի մասին: Իսկ ինչ պետք է գրել Ագնավորի մասին, որ հանրությանը հայտնի չէ: Թերևս պետք է պատմել ի նպաստ Հայաստանի և աշխարհասփյուռ հայության նրա գործունեության մասին, մեկ բառով՝ նվիրումի մասին», - նշում է Արշալույս Տետեյանը՝ հավելելով, որ համաշխարհային արվեստի ոլորտում դժվար թե գտնվի որևէ արտիստ, որ համերգային շրջագայություններին, կինոնկարահանումներին զուգահեռ զբաղվել է հայրենակիցների կենսական խնդիրների լուծման հարցերով՝ պարեն, էներգետիկա, առողջապահություն և այլն:

Այս առումով հատկանշական է համարում, որ 1995թ. հունիսին ֆրանսիական «Le Figaro» թերթի՝ Ագնավորի գործունեությանը նվիրված անդրադարձի վերնագիրը՝ «Aznavour entre l'Armenie et l'Academie» (Ագնավորը ակադեմիայի և Հայաստանի միջև): Հանրահայտ պարբերականը ի նկատի ուներ ֆրանսիական ակադեմիայից Ագնավորին շնորհված շքանշանը (Grande médaille de la chanson française) և ի նպաստ Հայաստանի գործունեությունը:

